

Խ.Գուշակարյան

Վախճան  
Աւազը



ԽՈՎՅԱՆԻ

Տ

Գրեում ուրվագծված է  
վախրանգ Անանյանի ան-  
ցած նանապարհը, պարզա-  
բանված են նրա արվեստի  
ու սնի առանձնահատկու-  
թյունները, նրա կազք դա-  
սական գրականուրյան տրա-  
դիցիաների նետ և տեղը  
սովորահայ գրականուրյան  
մեջ:

ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

11 (31)





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
Институт языка и литературы им. Ш. Абебяна

Х. Гюльназарян

Всхождение  
Андигин

Издательство АН Армянской ССР  
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ.ՎԵՂՋԱՄԻ ԱՆՎԵՆ ԳՐԱԿԱՆՈՒՅԹԱՆ ԴԱՏԱԲՈՒԺ

Խ.Գյուղակարյան

891.99.092 [ԱՅՆԵՐՆ]

ՎԱՀԱՄԱԳ  
ԱՌԱՅՈՒՅԹ

A 1/4970



Հայկական ՍՍՈ. ԳԱ Հրատարակույթան  
ԵՐԵՎԱՆ • 1963





ՎԱԼԵԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ



## Վ. Ա. Խ Թ Ա. Ն Գ Ա. Ն Ա. Ն Յ Ա. Ն

Վախիթանգ Անանյանի երկերը լայնորեն հայտնի են աշխարհի շատ ժողովուրդների գրասեր հասարակայնությանը: «Սևանի ափին», «Հովազածորի գերիները» վիպակները, որսորդական պատմրվածքների ժողովածուները բազմաթիվ հրատարակություններ են ունեցել ոչ միայն մեղ մոտ, այլև արտասահմանում: Բավական է ասել, որ «Սևանի ափին» վիպակը հրատարակվել է 18 լեզվով, 36 անգամ, ավելի քան մեկ միլիոն տպաքանակով<sup>1</sup>: Որսորդական պատմվածքների ժողովածուները տարբեր լեզուներով՝ լույս են տեսել 15 անգամ, այդ թվում ռուսերեն, անգլերեն, չինարեն, ճապոներեն, գերմաներեն, բենգալերեն, հնդկերեն, չեխերեն և այլն:

Վ. Անանյանն այն դրողներից է, որի հասցեն որոնում են աշխարհի տարբեր ծայրերում տպրոդ

<sup>1</sup> Բոլոր բիբլիոգրաֆիական տեղեկությունները՝ 1959 թ. տվյալներով:

Հազարավոր լնթերցողներ: Նու բառացիորեն հարյուրավոր նամակներ է ստանում իր պատանի ընթերցողներից, լի հետաքրքիր դիտողություններով, սիրով ու երախտագիտությամբ:

Անանյանի երկերը բարձր զնահատականների են արժանացել այլեաց երկրների գրականագետների կողմից: «Սևանի ափին» վիպակի, «Լեռնացին կածաններով», «Մանկությունը լեռներում» և այլ ժողովածուների շինարեն, շեխերեն, անզլերեն, գերմաներեն, ճապոներեն հրատարակությունների տուաջաբաններում հատկապես շեշտվում են գրողի վառ երևակայությունը, ստեղծագործական մեծ կարողությունը, նրա երկերի հումանիստական, հայրենասիրական շունչը, բնության հմայիչ նկարագրությունները, կերպարների համոզչականությունը, գրելաձեի ինքնատիպությունը և այլն:

Անանյանի ստեղծագործությանը բազմից անդրադարձել է սովետական մամուլը, հանձնարարելով այն լնթերցող լայն մասսաներին: Ահա, օրինակ, թե ինչ է զրել «Правда»-ն 1951 թ. մայիսի 13-ի համարում.

«Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում վ. Անանյանի «Սևանի ափին» արկածային վիպակը, որտեղ պատմվում է պատանի բնախույզների հայրենասիրական դործերի մասին: Հեղինակը լավ է պատկերում կեռնացին Հայաստանի հարուստ բնությունը»:

Եվ, այնուամենայնիվ, այդ ինքնատիպ գրողի ստեղծագործության ամբողջական դնահատականը դեռևս չի տրված, մենք դեռևս չունենք սովետահայ անվանի գրողի գրական դիմանկարը:

Այս գիրը նպատակ ունի լրացնել այդ բացը:

## I

Վախթանգ Անանյանը ծնվել է 1905 թվականի օգոստոսի 8-ին, Դիլիջանի Պողոս-Քիլիսա (այժմ Շամախյան) գյուղում, Հողագործ և որմնագիր Ստեփան Անանյանի ընտանիքում:

Ստեփան Անանյանն ամբողջ գավառում հայտնի է եղել իր ազնվությամբ, աշխատասիրությամբ, մերձավորին օգնելու սովորությամբ: Նա եղել է կենսասեր ու կենսալից մի մարդ, որ հազար ու մի պատմություններ ու զրոյցներ է իմացել, պատմել է որդուն ու հարեաններին: Այդ պատմությունները հետագայում վ. Անանյանն օգտագործել է իր որսորդական ու կենցաղագրական պատմվածքներում:

Ստեփան Անանյանն ապրել է ուղիղ հարյուր տարի (1857—1957), մինչդեռ մորից գրողը զբրկվել է 7 տարեկան հասակում, ու նրա երկերում մոր մասին մնացել է միայն քաղցր ու թախծոտ մի հուշ, խառնված խանդաղատանքի ու երախտագիտության հետ:

Վեց տարեկան հասակում Անանյանն ընդունվում է գյուղական դպրոց, ութ տարեկան ավար-

տում է այդ դպրոցի վերջին, Երրորդ դասարանը։ Հենց այդ հասակում էլ երեան հն զալիս ուշիմ երեխայի հակումները։ Երրորդ դասարանում նա զրում է մի շարադրություն, որն արժանանում է ուսուցչի և շրջապատի մարդկանց գովասանքին, իսկ Թրիլիսիից եկած մի երիտասարդ այնքան է ոգեսրվում այդ շարադրությամբ, որ հետք տառում է՝ «Հասկեր» մանկական ամսագրում տպագրել տալու համար։

Գյուղական դպրոցն ավարտելուց հետո, 1915 թվականին, Անանյանն ընդունվում է Դիլիջանի ծխական դպրոցը, որտեղ սովորում է երկու տարի՝ շորրորդ և հինգերորդ դասարաններում։

Սրանով էլ, փաստորեն, ավարտվում է Անանյանի ուսումնառության շրջանը։ 1917 թվականին Դիլիջանի զիմնադիան ընդունվելու նրա փորձերն ապարդյուն են անցնում։ Զնայած ընդհատակյա «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության անդամ մի ուսուցչի ջանքերին, Անանյանին զիմնադիա շեն ընդունում։ Գիմնադիայի տնօրենին դուր չի դալիս սարերից իջած արեխավոր պատանին, մասնավորապես դուր չի զալիս նրա զրած շարադրությունը՝ աղբբեջանցի շարքաշ մշակի մասին։ Այդ շարադրությունը, որ գիմնադիայի դոները փակում է Անանյանի առաջ, փաստորեն նրա առաջին դեղաբալետական երկն է։ Այն հետագայում հրատարակվել է 1927 թվականին «Պիոներ» ամսագրի 6—7 միացյալ համարում։

«Զոլախ Թաթոն» վերնագրով։ Բայց եթե դպրոցը  
րիշ բան է տվել Անանյանին, ապա մի այլ դպրոց,  
զյուղական փոքրիկ տավարածի կյանքի դպրոցը,  
ապադա զրողին տվել է կյանքի ճանաչողություն,  
բավականաշափ առատ զիտելիքներ հայրենի  
բնության մասին։ Այդ բոլորին ուշիմ պատանին  
ավելացրել է նաև ընթերցանությունը։ Անանյանի  
մի բանի ինքնակենսագրական պատմվածքներից,  
որ զետեղված են «Մանկությունը լեռներում»,  
«Լեռնային կածաններով» և մյուս ժողովածունե-  
րի մեջ, երևում է, թե նա որպիսի՝ անհագ ծարա-  
վով է կլանել ձեռքն ընկած զրբերը։ Ահա թե նա  
ինչ է զրում այդ մասին «Քննություն» պատմված-  
քում։

«Գրքերը նոր հորիզոններ բաց արին իմ առաջ,  
և իմ պատանի հոդին թիթե ճախրում էր այդ հո-  
րիզոններում։

Ափսոս, Գրիգորի փեսայի գրքերը վերջացան։  
Գյուղ իջա, ստուգեցի մեր հարեանների սնդուկնե-  
րը և ինչ տպագիր բան ճանկս ընկավ, հետո սար  
տարա։ Ճամփին մի ծառի տակ տոպրակս բաց  
արի ու թղթերս փռեցի գետնին։ Օհո՛, որսորդու-  
թյան մասին էլ կա, իսկ ես այդ տարիքին արգեն  
հրացան ունեի և ձմեռները որսի էի գնում։ Մտա  
անտառի թավուտը, մեկնվեցի խոնավ զետնին ու  
բաց արի «Որսորդի հիշատակարանը»։ Ի՞նչ լավ  
է նկարազրում ոուս զրողը իրենց երկրի բնու-  
թյունը։ Ափսո՛ս, մեր սարերում լիներ այնպիսի

բաներ կղրեր, որ ամբողջ աշխարհը կարդալով չէր կշտանա:

Այդպիս, զրքերը դարձան իմ ընկերները, իմ բարի խորհրդատունները: Շատ բան իմացա զրքերից, և ամենից առաջ այն, թե ինչու ծխական դրադրոցի մեր «ավագ վարժապետը» մեզ «խողի ճուտեր» էր անվանում, իսկ վաճառականների երեխաների հետ վարվում էր սիրալիր»:

...ի՞նչ զրքեր եմ բերում Դիլիջանից. «Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը», «Քեռի թովմասի խրճիթը», «Թշվառները»... Կարդացի Շիրվանղաղեի վեպերն ու պիեսները, անհագուրդ կլանեցի Բաֆֆու հաստափոր զրքերը, Մուրացանի հերոսների հետ կոփվ տվի արաբների դեմ, Վիկտոր Հյուդոյի ապստամբների հետ բարիկաղներ կառւցեցի Փարիզի փողոցներում... Ինչե՞ր չսովորեցրին ինձ զրքերը: Էս ի՞նչ աշխարհներ են եղել երկրագնդի վրա, իսկ մենք այս սարերում անտեղյակ, «իշխ ականջի մեջ քնած», ինչպիս իմ ընկեր Գրիգորն էր ասում»<sup>1</sup>:

Ինքնակրթության այս անհագուրդ ծարավի տարիներին Անտանյանը աստիճանաբար վերահասու է լինում աշխարհի շարին ու բարուն, գնալով ավելի ու ավելի խորն է դգում սոցիալական անհավասարությունը, գեղջուկների նկատմամբ ունե-

1 Վ. Անանյան, «Մանկությունը Եսոներում», 1954, Երևան, էջ 169—170 և 172—173:

յած նրա սերն ու համակրանքը կյանքի դասերի  
ու գրքերի օգնությամբ կամաց-կամաց վերաճում  
է ակտիվ ատելության ընդդեմ հարստահարող-  
ների:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափո-  
խության արձագանքները հասնում են Հայաստան,  
երկրում սկսվում են քաղաքացիական կռիվներ,  
հայ աշխատավորությունը ոտքի է ելնում ընդդեմ  
դաշնակցության արյունոտ տիրակալության: Խի-  
զախ պարտիզանների շարքումն է նաև պատանի  
Անանյանը: Ճիշտ է, նա գեռևս կազմակերպված,  
հասուն մարտիկ չէ, սակայն նա այլևս կողմնորոշ-  
վել է, նրա հոգում վառվում է տանջված ու կիսա-  
քաղց տավարածի ատելությունը գյուղական տըղ-  
րուկների ու դաշնակցական մառւղերիստների դեմ:  
Իր կյանքի այս ժամանակաշրջանը Անանյանը հե-  
տագայում արտացոլել է մի շարք պատմվածքնե-  
րում և «Կրակե օղակի մեջ» վիպակում:

1920 թվականի դեկտեմբերի մեկին Վախ-  
թանգ Անանյանը տավարած ընկերների հետ ձմե-  
ռանոցից դյուզ է իշնում: Այդ օրը սկսվում է նրա  
կյանքի նոր շրջանը. նա ընդունվում է լինինյան  
կոմերիտմիության շարքերը և գլխովին նվիրվում  
զյուղի կուտուրական շինարարության դործին:  
Իր համառոտ ինքնակենսագրության մեջ այդ տա-  
րիների մասին Անանյանը պրում է.

«Ներկայացումներ էինք տալիս գյուղում,  
բայց նոր ողով պիհսներ չկային: Քսաներկուսին

պիես զրեցի զյուղական բեմի համար, բեմադրեցինք: Քսաներեքին ուղարկեցին կոմսոմոլի զծով կազմակերպված երկամսյա դասընթացներ (Դիլիջանում): Ո՞նց էի ծարավի ուսման, ո՞նց էի սովորում... Ունկնդրեցի պրոֆեսոր Ստ. Լիսիցյանին (ավազ, միայն մեկ անդամ), բնագետ Նիկ. Սարդրսյանին: Ավարտելուց հետո մեր զյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղարն էի: Նույն տարվա աշնանը ուղարկեցին Երևան՝ պարտգպրոց, ուր մեկ տարի սովորելուց հետո նշանակեցին կոմսոմոլի Դարալազյազի գավառային կոմիտեի հրահանգիչ: Այնուհետև կոմերիտական աշխատանքներ տարա զանազան շրջաններում (Դորդուղուղի, Սամաղար, Աշտարակ)»<sup>1</sup>:

Հենց այս տարիներին էլ «Մաճկալ», «Ավանդարդ», «Խորհրդային Հայաստան» թերթերում երեսում են Անանյանի առաջին հոդվածներն ու ակնարկները: Հայ զյուղի հոգսերին ու աշխատանքներին, վշտերին ու ուրախություններին քաջատեղյակ պատանին թերթերում հանդես է զալիս հատկապես զյուղական հարցերին նվիրված հլույթներով:

Դրական այս առաջին փորձերը, թեև հաճախ միամիտ, պարզունակ, անհարթ, սակայն արդեն վկայում են Անանյանի եթե ոչ գրողի, ապա, համենայն դեպս, լավ լրագրողի ունակությունը:

1 Վ. Անանյանի այս ինքնակենսագրությունը անտիպ է: Մի օրինակը դժնվում է մեզ մոտ (Խ. Դ.):

1926 թվականին Անտնյանը տեղափոխվում է Երևան՝ և աշխատանքի անցնում «Ավանդաբդ» երիտասարդական թերթում, որպես գյուղ բաժնի վարիչ, ապա պատասխանատու քարտուղար: Այդ ժամանակից նոր թափ է ստանում նրա ժուռնալիստական գործունեությունը: Հետագայում նա աշխատում է «Խորհրդային Հայաստան» թերթում (1929—1930), ապա խմբագրում «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթը, «Սոցիալիստական ագրոնոմիա» և «Կոլխոզնիկ» հանդեսները:

\* \* \*

Ժամանակագրական առումով Անտնյանի որորդական պատմվածքներին նախորդել է նրա տուաջին ծավալուն երկը՝ «Կրակի օղակի մեջ» վիպակը (1930 թ.): Դրանից առաջ Անտնյանը միայն հատ ու կենտ պատմվածքների հեղինակ էր, թեև, ինչպես նշել ենք, հայտնի էր որպես լրագրող ու գյուղական կյանքին ու սոցիալիստական գյուղատրնտեսության հարցերին նվիրված հողվածների ու ակնարկների հեղինակ: «Կրակի օղակի մեջ» վիպակն է, որ իր վրա է հրավիրում գեղարվեստական գրականության նախանձախնդիր հասարակության ուշադրությունը: Երեսնական թվականների սկզբին սովետահայ գրականության մեջ քիչ զրբեր են եղել, որոնք այնպես հախուսն ձեռվ

նվաճեն լնթերցողի համակրանքը, ինչպես քաղաքացիական կոփլների արտացոլմանը նվիրված այս վիպակը, որը, հեղինակի խոստովանությամբ, «առաջին փորձն է՝ զրված հապճեպ և, հետեապես, դերծ չէ թերություններից»<sup>1</sup>:

Հրատարակությունից անմիջապես հետո վիպակը վեր է ածվում պիեսի և երկար ժամանակ բեմադրվում ուսագուրլիկայի թատրոններում՝ հափշտակելով առավելապես պատանի հանդիսատեսին:

Ինչո՞վ է զրավել «Կրակե օզակի մեջ» պիրքը: Անանյանի վիպակն իսկապես որ ունի հեղինակի անփորձությունից բխող մի շաբք թերություններ, սակայն կան և այնպիսի կողմեր, որոնք հափշտակում են լնթերցողին:

Նույն երեսնական թվականներին, սակայն միքանի տարի ավելի ուշ, սուս զրականության մեջ երեաց Ն. Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» վեպը՝ քաղաքացիական կոփլների թիմայով և ձեռք բերեց համամիութենական հոչակ: Մեր նպատակը չէ կշեռքի նժարի վրա զնել Անանյանի և Օստրովսկու երկերը և ոչ էլ քննության ենթարկել վերջինիս հանրահոչակ ու սիրված ստեղծագործությունը, բայց մեզ թվում է, որ երկու երկերի այդօրինակ տարածման դործում, ի թիվու բազմա-

1 Տ. Անանյան, «Կրակե օզակի մեջ», Երևան, 1930,  
էջ 5:

թիվ այլ հանգամանքների, որոշակի դեր է կատաւ։  
բել նաև մի կարևոր հանգամանք։

Հայ ժողովրդի համար բախտորոշ էին այն  
ժամանակաշրջանն ու այն պատմական դեպքերը;  
որ զեղարվեստորեն արտացոլվում էն Անանյանի  
վեպում։ Նույնն էն նաև ոռու ժողովրդի համար  
Օստրովսկու վեպում արտացոլված ժամանակա-  
շրջանն ու պատմական անցուդարձերը։ Երկու  
դեպքում էլ մենք գործ ունենք հասարակական  
խոշոր բախումների հետ, որոնց ոլորտում սրվում  
էն ոչ միայն դասակարգային հարաբերություն-  
ները, այլև ավելի ցայտուն է դառնում մարդկային-  
րնավորությունը, ավելի ցայտուն էն զրակորպում  
մարդկանց հոգեկան գծերը։

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ  
հերոսական մահով ընկած Ալեքսանդր Մատրո-  
սովը և Հունան Ավետիսյանը խաղաղ պայմաննե-  
րում ևս չէին դադարի անձնազո՞ւ հայրենասերներ  
լինել, սակայն նրանց հոգեկան այդ հատկությունը  
կարտահայտվեր ո՛չ այնպիսի ցայտունությամբ.  
ինչպես դա արտահայտվեց ռազմաճակատային  
իրադրության մեջ։ Խոշոր բախումը, բախտորոշ  
իրադրությունը հարմար միջավայր ստեղծեցին  
նրանց հայրենասիրության արտահայտման հա-  
մար, այդ պայմաններում նրանք ջոկվեցին, աշքի  
ընկան միլիոնավոր հայրենասեր մարտիկների մեջ՝  
իրենց անձնազո՞ւթյան բարձրագույն շափով ու  
դարձան պատմական անձնավորություններ։

Ինչպիսի՞ն կլիներ Պավել Կորչագինը, եթև  
նա շգործեր պատմական այն իրադրության մեջ,  
որը նկարագրված է «Ինչպես էր կոփվում պող-  
պատր» վեպում։ Նա, իհարկե, չէր դադարի ազնիվ  
ու հայրենասեր մարդ լինելուց, բայց իր այդ հատ-  
կություններն արտահայտելու համար նա անհա-  
մեմատ ավելի քիչ հնարավորություններ կունե-  
նար։ Ինչպիսի՞ն կլիներ Անանյանի Հանեսը, եթե  
ապրեր ուրիշ պայմաններում։ Նա իր բաջությունը,  
հարստահարողների դեմ կրծքի տակ ուսճացող  
պայրությը, իր բնական հակումը դեպի արդարա-  
մատությունը, հնարավորություն չէր ունենա հան-  
դես բերելու այնպիսի բնդզված երանգներով։  
Ինչպիսին տևանում ենք «Կրակե օդակի մեջ» զբր-  
քում։


Գեղարվեստական գրականության գրավչու-  
թյան տեսակետից խոշոր նշանակություն ունի այս  
հանգամանքը։ Գտղանիք չէ, որ պատմական բախ-  
տորոշ ժամանակաշրջանների արտացոլմանը նվիր-  
ված երկերը ընթերցվում են մեծ հետաքրքրու-  
թյամբ և զրա պատճառներից մեկը այդ երկերի  
զործող անձանց հոգեկան դժերի առավել ցայտուն  
արտահայտվածությունն է։

Սակայն պատմական կարևոր գեղքերի նկա-  
րագրությունը, իհարկե, միակ զործոնը չէ։ Վերջին  
հաշվով միայն սրանով չի կարելի պայմանավորել  
զեղարվեստական երկի հաջողությունը։ Նույն  
պատմական իրադրությունը կարելի է նկարագրել  
16

Նուև ամենակին էլ ոչ գեղարվեստական երկի մեջ, այդ դեպքում մենք դործ կունենանք միայն փաստագրական արժեք ունեցող ստեղծագործության հետ: Գեղարվեստական երկի հեղինակին առաջնորդում են ոչ միայն իրադրությունները տեսնելու և զնա՞նատելու ձիշտ կոնցեպցիան, այլև գեղարվեստական ձիշտ ելակեաթը: Ե՛վ Օստրովսկու, և՛ Անանյանի երկերը զրված են այս երկու հանդամանքների հաշվառումով, թեև դրանք գեղարվեստական տեսակետից տարբեր որակի երկեր են:

Անանյանն ինքը մասնակցել է 1918—1920 թվականներին Հայաստանում ծավալված այն մարտերին, որոնք մղվել են մեր երկրում սովետական կարգերի հաստատման համար: Այս տեսակետից Անանյանը իրադրությունները հնարելու կարիք չուներ: Բայց մարտական ու կենցաղային ևպիսպների մեջ Անանյանը պետք է ընտրություն կատարեր. մշակեր դրանց հերթականությունն ու ներքին կապը, բացահայտեր դրանց ընդհանուր իմաստը, դաներ տիպական հանդամանքների կոմպլեքսը և դրա մեջ տեսներ ու բացահայտեր տիպական բնավորություններ: Այս էր նրա պարտականությունը, որպես գեղարվեստական և ոչ զուտ փաստագրական երկի հեղինակ: Եվ եթե այժմ մենք գործ ունենք իր ամբողջության մեջ հափշտակող ու հաջողված գրական ստեղծագործության հետ, ապա ուրեմն հեղինակը ընդհանուր առմամբ ձիշտ է հասկացել իր նպատակը:

17



1918—1920 թվականների հայկական գյուղը Անանյանի վեպում կենդանի, ոհալիստական գույներով նկարագրված այն միջավայրն է, որի մեջ զործում են հերոսները։ Այդ դյուղի նկարագրությունը Անանյանից մեծ ճիգեր չի պահանջել, քանի որ նա ինքը մեծացել է այդ միջավայրում։ Գրքի առաջին գլուխներում Անանյանն իրեն հատուկ բնապաշտական կարոտով է նկարագրում հայկական լեռնաշխարհը՝ իր նկարեն ու հարուստ զեղցկությամբ և թվում է նա այդ անում է ընդգծելու համար այն հակայական տարրերությունը, որ կա շռայլ բնության ու այդ բնության գրկում ապրող աշխատավոր մարդու անելանելի վիճակի միջեն։ Այդ առաջին պատկերներում ընթերցողն արդեն տեսնում է դասակարգային ջրբաժանը, որի մի կողմում կանդնած են քեդիսուդաներն ու հարուստները, մյուս կողմում՝ կարկատված վրանների բնակիչները, կիսաքաղց հովիվներն՝ իրենց տառապալից առօրյայով։ Այստեղ գերես չկա զասակարգային բախումը, բայց վիճակների տարրերությունից առաջացած տարակուսանքն այլիս մշուշապատ չէ, ձևավորվում է, քայլ առ քայլ պարզ ու որոշակի ձևեր ստանում։ Հանեսն ու նրա տավարած ընկերներն աստիճանաբար իրենց հոգիներում կուտակված զայրուցիքը թափելու ավելի ու ավելի մարտական միջոցներ են որոնում։ Մյուս կողմից, նրանց ինքնադիտակցության հասունացմանը ակամա օժանդակում են հակառակ բանակի

Ներկայացուցիչները, որոնք ոչ մի կերպ հողի աշխատավորի մեջ չեն ուղարկել մարդը:

Ու ահա այս շիկացող մթնոլորտում հնչում է Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության հեռավոր արձագանքը: Անրնական ու ոչ ուսալիստական կլինիք, եթե Անանյանը նկարագրեր խավար մասսայի կտրուկ մի շրջադարձ: Անանյանի նկարագրած մարդկացին միշտայցրն այդպիսի շրջադարձի համար անպատրաստ էր: Դաշնակ խմբապետներն ու դաշնակցական պարագլուխները խոսում էին ժողովրդի անունից, հայրենիքի փրկության անունից, գյուղացիական մասսայի համար դժվար էր միտանգամից կողմնորոշվելը: Տարիներ շարունակ պապենական աղաթով ապրած խավար գյուղացու համար դժվար էր հավատալ, թե բոլշևիկները հողը բաժանելու են գյուղացիներին, թե այլևս հարուստներ ու ազքատներ շեն լինելու: Հողը նրա երազանքն էր, անհասանելի երազանքը, իսկ քրիստոնեական եկեղեցին դարերով քարոզել էր տիրող հասարակարդի անձեռնմխելիությունն ու բոլոր մարդկանց «եղբայրությունն»՝ անկախ նրանց սոցիալական վիճակից: Փոթորկալից դեպքերի ոլորապառույտում մոլորված տգետ ու խավար գյուղացիներից շատերը հավատում էին դաշնակ պրոպագանդիստների հերյուրանքներին՝ բոլշևիկյան «կացնի զորամասերի» մասին, որոնք իբր թե անխըստիր կոտորում են բոլորին: Իսկ նրանք, որոնց մեջ այլևս կասկած էր ծագել այդ պրոպագանդայի

Նկատմամբ, մտավոր կարողություն շունեին իրերի ընթացքի մեջ կողմնորոշվելու և հաճախ կառչում էին նույն եկեղեցու քարոզներից՝ բոլոր մարդկանց «եղբայրության» մասին, միայն թե խաղաղվեր երկիրը ու իրենք հնարավորություն ունենային հին օրերի նման քաշ տալու իրենց ողորմելի գոյցությունը։ Վեպի էպիզոդիկ կերպարներից մեկը հենց այդպիս էլ ասում է. «Ասա ի՞նչ ա քուը շաններդ ընկել, դաշնակս որն ա, բայլշեիկը որն ա, էն ա հայ եք, լուսավորչական եք տեղներդ վեր ընկեք, մենք էլ մեր ցավին, մեր ցանքսին կենանք»<sup>1</sup>:

Շրջադարձի համար հարկավոր էին լուրջ գործոններ։ Հենց այդ լուրջ գործոններն են սովը, թաւանը, եղբայրասպան կոփիլները, դաշնակցական զորախմբերի շահատակությունները, որ երբեմն նատուրալիստական մանրամասներով նկարագրում է հեղինակը։ Այս նկարագրությունների մեջ է պատճառաբանվում աշխատավոր զյուզացիության աստիճանական կողմնորոշումը, միաժամանակ սրանք տալիս են ժամանակի հայկական զյուզի վիճակի ամենաճշգրիտ պատկերը։

Այսպիսին է միջավայրը, և այդ միջավայրում տհա գծագրվում է վեպի գլխավոր հերոսի կերպարը։ Գլխավոր հերոսը՝ պատանի Հանհսը իր

1 Վ. Անանյան, «Կրակի օդակի մեջ», 1930, Երևան, էջ 217։

բնավորությամբ, խառնվածքով գրեթե չի տարբերվում շրջապատի մարդկանցից: Ճիշտ է, վեպի էքսպոզիցիայում հեղինակն ընդգծում է, որ նա իր ընկերների համեմատությամբ փոքր-ինչ ավելի որտոտ էր ու տաքարյուն, սակայն միայն մարտական գործողությունների բովում է, որ նա դառնում է առանձնակի: Հանեսի սխրագործությունների հաջորդականությունն ու ներքին կապը հիշողության մեջ պահելը դժվար է, սա վեպի կոմպոզիցիոն թերությունն է, բայց յուրաքանչյուր էպիզոդի մեջ պատանին հանդես է դալիս հոգեկան ու ֆիզիկական նորանոր գծերով, և այդ էպիզոդների հանրագումարում գծվում է քաղաքացիական կուլիներին մասնակցած հայ պատանու գեղարվեստական կերպարը:

Հանեսը գարդանում, հասունանում է էջ առ էջ, պատմական իրադարձությունների բովում, տիպական միջավայրում: Հանեսը նկարագրված է իր խլրտուն լինելիության մեջ. հեղինակը հաշվի է առել և՛ նրա տարիքը, որ պատանեկությունից երիտասարդություն անցնելու ժամանակաշրջանն է, և՛ իրերի զարգացման ընթացքը, որ գրքի առաջին իսկ էջերից պատանուն առնում է իր ջրապտույտի մեջ: Հիրավի, զգալի տարբերություն կա առաջին էջերի Հանեսի ու հետագայում գործող Հանեսի միջև: Առաջին էջերում նա իր զայրուցիքը, դժգոհությունն արտահայտելու կոպիտ ու պրիմիտիվ ձևեր ունի, ոչ թե այն պատճառով, որ այդ

դժգոհությունը մեղմ է, այլ որովհետե ինքը չի կարողանում հստակորեն պատկերացնել դրա սոցիալական արժատները։ Նա իր դեմ տեսնում է մի կնյաղ, մի կուլակ ու յաւրովի պայքարում է նրանց դեմ։ Իր կյանքի համար նշանակալից մի միջադեպից հետո միայն, երբ նա սպանում է դաշնակցական թալանչիներից մեկին և փախչում պարտիզանների մոտ, Հանեսն աստիճանաբար փոխվում է, կազմակերպվում, դառնում դաշնակարի համար մարտնչող զինվոր, և այլևս խստանում է նրա հայացքը, խորանում նրա դասակարգային ինքնազիտակցությունը։ Այդ պատճառով էլ իմաստավորվում են նրա արկածները, պատանեկան շարաճճիությունից դառնում մարտական բարդ զործողություններ, որոնցում նա հայտարերում է հնարամտություն, խելք, խորամանկություն, երիտասարդական ավյունը սանձահարելու ու զեկայարելու կարողություն։

Վիպակի մյուս հերոսները էպիգոդիկ կերպարներ են և օժանդակում են Հանեսի կերպարը բացահայտելու ու ժամանակի իրադրությունը ունալիստորեն պատկերելու դործին։

«Կրակե օղակի մեջ» վիպակի առանձնահատկություններից մեկն այն է, որ զարմանալի կենդանի դժերով են ներկայացված մասսայական տեսարաններն ու մարտական գործողությունները։ Գրքի ընթերցումը բերում է այն համոզման, որ հայ ժողովրդի պայքարը դաշնակցական տիրա-

կալության դեմ օրհասական կոփիվ է եղել և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել ծանր ու երկարատև մարտերից հետո: Որքա՞ն սիրելի մարտիկներ, որոնց հետ մտերմանում, բարեկամանում է ընթերցողը, ընկնում են հերոսի մահով, որքա՞ն սրտաճմլիկ տեսարանների է ականատես անում հեղինակն իր ընթերցողին, մինչև որ պայքարի բոցերի մեջ ցուցը է տալիս լուսավոր այլաբացը: Ցնցող են հատկապիս պարտիզան Ակոփի կնոջ բռնաբարության, դասալիք զինվորի խոշտանգման, թուրք պարտիզան Աբասի մահվան, թալանի, կտտանքների տասնյակ պատկերներ, որոնք դաշնակների գաղանացին էության մերկացումներ են ու միաժամանակ ժողովրդի սլայքարի ուսալիստական արտացոլումներ:

Պատանի պարտիզանին - ծպտյալ ուղարկելով գյուղից-գյուղ, Անանյանը առիթը չի փախցնում նույրը դիտողություններ անել աշխատավոր գյուղացիության ձգտումների ու ցավերի մասին: Այդ տեսակետից հաջողված դեղարվեստական կտորներ են «Բամբակի կարուր», «Երամը կորցրած կառւները» և մի շարք այլ գլուխներ:

Անանյանի դրվածքներում շատ հաճախ որսորդական-արկածային դիպվածների նկարագրությունների մեջ բացահայտվում են սոցիալական երևութներ: «Կրակե օղակի մեջ» վիտակում նույնպիս ընթերցողին դրբի հետ կապովը նախ և առաջ

արկածային դիպվածներն են, բայց զրանց տողամիջում հեղինակը նրբորեն անց է կացնում մեծ զաղափար: Դիրքը կարդալուց հետո արկածային դիպվածների հաջորդականությունն ու մանրամասները մոռացվում են, մինչդեռ հիմնականը՝ կյանքի ու պայքարի ուսալիուտական պատկերը մնում է անմոռաց:

Սա մի երեսյթ է, որ մի կողմից օդնում է հեղինակին տեղ հասցնելու հիմնական զաղափարը, ոյուս կողմից բացասաբար է անդրադառնում վիսկակի կառուցվածքի վրա: Հիրավի, հենց այս պատճառով թույլ է վեպում նկարագրվող դեպքերի կապը, որոշ հատվածներում այդ կապը նույնիսկ խզվում է, մնում են, ճիշտ է, համով հոտով պրմած ու իրենց ինքնության մեջ ուժեղ պատկերները, որոնք միմյանց հետ կապվում են միայն ոճական համահնչյունությամբ:

«Կրակե օղակի մեջ» վիպակն ունի նաև այս թերություններ: Նկատվում են զրչի անփորձության, շտապովականության, անհարկի ոգեսրության հետքեր: Անանյանը երբեմն կորցնում է մտքի թելը՝ առանձին մանրամասնությունների նկարագրությունների մեջ, թույլ է տալիս դույների խոտացում և այլն: Այս բոլորը, սակայն, տաղանդավոր հեղինակի «աճման հիվանդության» թեթե հայտանիշներն են, որոնք նա կարողացավ հաղթահարել իր հետագա ստեղծագործության մեջ:

Արդեն 1936 թվականին «Քարանձավի» բնա-

իիշները» վերնապրով վերահրատարակելով վիպահի առաջին մասը. Անանյանը մեծ փոփոխություններ է կատարում և՝ կոմպոզիցիայի, և՝ գեղարվեստական հնարանքների ու արտահայտչական ձևերի մեջ: «Քարանձավի բնակիչները» վիպակելում պողիցան շատ ավելի կուռ է: Այստեղ տեղ լեն դտել բազմաթիվ էպիզոդներ, դեն է նետված հերոսի արկածների մի մասը, դրա փոխարեն հեղինակն ավելի մանրամասն է նկարագրել նրա ներաշխարհը, ինչպես նաև կերպավորել ու ցայտուն գծերով պատկերել է ուրիշ հերոսներ: Պարտիզան Ակոփը, Աթոն խմբավետ Մկոն, Վարսիկը և ուրիշներ, որոնք «Կրակե օղակի մեջ» վիպակում դժվարությամբ էին մնում ընթերցողի հիշողության մեջ. «Քարանձավի բնակիչները» վիպակում ավելի լիարյուն գրական կերպարներ են: Հղկվել, մշակվել է հեղինակի լեզուն, բնանկարները դարձել են ավելի շրիդ ու պերճաշուր:

## II

Վախթանգ Անանյանից առաջ հայ դրականությանն անծանոթ չի եղել բնագիտական զրուցը: Բնագիտական զրուցներ են տպագրվել «Աղբյուր», «Հասկեր», «Թուրաստան մանկանց» և այլ պարբերականներում, այդ հարցերով զբաղվել են նիկ. Սարգսյանը, Ռ. Գաբրիելյանը, Ստեփան և Կատարինե Լիսիցյանները և շատ ուրիշներ: Կերպակես բնագիտական են Թումանյանի հրաշալի

գրուցները՝ կենդանիների մասին, որոնցով հմայվել են Թումանյանից հետո եկող բոլոր սերունդները, որոնց խորը ազգեցությունը զգացվում է Հենց իրեն՝ Անանյանի ստեղծագործության վրա: Սակայն բնապիտական գրուցքը և հատկապես դրա մի տարատեսակը հանդիսացող որսորդական պատմվածքը մեզանում փաստորեն քաղաքացիական իրավունք ստացավ Անանյանի մուտքով զրականության ասպարեզ: Որսորդական պատմվածքը դրական այն տեսակն է, որ Անանյանը՝ զրեթե միայնակ է մշակում սովետահայ գրականության մեջ: Նա ստեղծագործական երկար տարիների ընթացքում թեև ձեռք է զարկել նաև ուրիշ թեմաների, բայց երբեք չի հրաժարվել իր հիմնական թեմայից, որսորդական կյանքի նկարազրությունից: Այս թեմայով Անանյանը բառացիորեն հարյուրավոր պատմվածքներ ու ակնարկներ է գրել ու հիրավի նրան շատ բան էր հարկավոր դրանցում ինքն իրեն հաճախ շկրկնելու համար: Հարկավոր էր բնությունը յուրօրինակ ձևով ընկալելու կարողություն, բնությանը սիրահարվելու ուսակություն, թեմայի խորը զիտակություն, որ նախապատրաստված էր մանկության ու պատանեկության տարիների փորձով: Պատմելու գրելու բնատուր տաղանդ, որ Անանյանը հղկում, փայլեցնում է պատմվածքից պատմվածք, ժողովածուից ժողովածու, և, որ ամենից գլխավորն է, մարդու հոգեկան ներաշխարհի դաշտնարանները՝ թափանցելու ուժութեաւ է:

որ որսորդական դիպվածները, որքան էլ նրանք  
միմյանցից արտաքնապես տարբեր լինեն, էու-  
թյամբ նույնն են, միայն դիպվածների ու արկած-  
ների բազմազանությամբ հնարավոր չէ դրավել  
պահանջկոտ բնթերցողին, որսորդական պատմր-  
վածքներում ևս, ինչպես առհասարակ գեղարվես-  
տական գրականության ամեն տիպի երկերում,  
կենտրոնականը մարդը պիտի լինի, մարդն իր հո-  
գու լավ ու վատ դժերով։

Վախթանգ Անանյանը բնախույզ է այնպիս,  
ինչպես Պրիշվինը։ Բայց ինչպես Պրիշվինի հա-  
մար, Անանյանի համար ևս այս կնահատականը  
միակողմանի է։ Իշարկե, Անանյանը լավ գիտե  
հայկական լեռնաշխարհը, որը նա ոտքի տակ է  
տվել հովվի ցուպը կամ որսորդի հրացանը ձեռ-  
քին, նա ճանաշում է հայրենի բնաշխարհը  
կենդանիներին՝ սկսած փոքրիկ միջատներից մինչև  
ահավոր գաղանները, այլև անսահմանորեն սի-  
րում է բնությունը, նրա հետ ձուլվելու մեջ տես-  
նում իր՝ մարդու երջանկությունը։ Այս բոլորը նրա  
գրական առանձնահատկության մի կողմն է մի-  
այն, ճիշտ է, ուժեղ կողմը, որն օգնում է նրան  
գրականության մեջ իր սեփական, միայն իրեն  
պատկանող հողակտորը գրավելու։ Բայց դրա հետ  
միասին Անանյանը լավ գիտե իր բանական հերո-  
սին, մարդուն, ապրում է նրա հույզերով ու երազ-  
ներով, ճանաշում է նրա հոգու թոփշքներն ու ան-  
կումները և ոսորդական պատմվածքներում։ ար-

կածային դիպվածը նկարագրելիս երբեք չի մոռանում հիմնական նպատակը՝ մարդու, որպես բնության տիրոջ, միակ բանական էակի հոգեկան հատկությունների նուրբ ու գեղեցիկ արտացոլումը:

Հենց այս հիմնական նպատակի հետ է կապվում Անանյանի յուրօրինակ պատմելաձեր, երբ թեթև հումորը, վախկոտ կամ պարծենկոտ որսորդի հասցեին ուղղված ծիծաղը կարող է հանկարծ միահյուսվել մի նրբին թախծի հետ, հերոսների շարաճճի զրուցը կարող է աննկատելի փոխանցվել հոյակապ բնության պարզ ու գրավիչ նկարագրության, հաջորդ վայրկյանին հոգեբանական դիպուկ դիտողություն դառնալու համար: Ոճի մեջ անվերջ ու անվերջ այլափոխություններ, զարմանալի՛ բազմազանություն մի բնդհանուր սիստեմի մեջ:

\* \* \*

1930 թվականին լույս տեսավ Անանյանի առաջին գրքույկը՝ «Ոչ մի դայլ մեր հանդերում»: Փոքր ու միամիտ մի գրքույկ էր դա, որի հերոսները, մի քանի պատանի տավարածներ, որսորդ լինելու համար արդեն բավականաշատ ամուր, կրակոտ ու փոքրինչ պարծենկոտ, առաջին անգամ էրակում են մարտական հրացաններից, առաջին անգամ գյուղ են մտնում խփված դայլի մորթին աւսներին:

Այսպիս է սկսվում Անանյանի հերոսների գիղարվիտական կենսագրությունը:

Հետո անցնում են տարիներ, Անանյանի հերոսները հասակ են առնում, սովետական հասարակարգը նրանց հնարավորություն է տալիս աշխատանքի մեջ դրսեորելու հոգեկան լավագույն հատկությունները: Նրանք թողնում են տավարածի մահակը, նրանցից մեկը նշանավոր գյուղատնտես է դառնում, մյուսը՝ ուսուցիչ, մեկին բժշկի դժվարու աղնիվ աշխատանքն է դրավում, մյուսին՝ դրսղի դրիշը... Բայց առաջին հաջող կրակոցների որոտը դեռ զրնղում է նրանց բոլորի հոգիներում: Սյու տարից, բազմազբաղ մարդիկ ժամեր են գողանում որսորդության համար ու ամեն անգամ որսի գնալիս կրկին լցվում են երիտասարդական ավյունով, դառնում առույգ ու թեթև բնախույզներ, որոնք կարող են կովել ծյան հյուսքերի ու պտտահողմի զեմ, մազլցել քերծն ի վեր, միայն թե մի անգամ էլ հնարավորություն ունենան բարձրից դիտելու հայրենի աշխարհը, տեսնելու ժայռի վրա արձանացած քարայծին...

Անանյանի որսորդական պատմվածքների հմայիչ գծերից մեկը հենց այս բնասիրական զգացումն է, որով նա կարողանում է վարակել բոլոր բնթերցողներին, անկախ նրանց տարիքից:

Սերը բնության նկատմամբ, ո՞չ հայեցողական, ո՞չ պասսիվ սերը, այլ բնության տիրոջ վեհ զգացումն է, որ հորդում է Անանյանի բոլոր եր-

կերից: Խոշոր է: այդ իրկերի ճանաչողական նշանակությունը, զրանցում նկարագրված են հայկական լեռնաշխարհի զրեթե բոլոր վայրի կենդանիները, դադաններն ու խոտաճարակները, սողուններն ու թոշունները: Ուրիշ ոչ մի տեղ հայ ընթերցողը չի կարող գտնել այս կամ այն կենդանու մասին այնպիսի հետաքրքրիք մանրամասնություններ, ինչպիսիք առատ ու շուազլորեն շաղ են տրված Անանյանի պատմվածքներում: Դրանցում ամենից շատ օգտագործվող հարցը «ինչուն» է: Ինքն իրենից գոհ, թեթևակի պարծենկոտ որսորդի նման Անանյանն ընթերցողին հարցնում է: ինչո՞ւ հետապնդվող ազվեսը ձմեռն իրեն դցում է հողմնահարված, ձյուն շունեցող սարահարթը, ինչո՞ւ քարայժերը մինչև ձմեռնամուտ շրջում են արուների ու էգերի առանձին-առանձին հոտեր կաղմած, ինչո՞ւ կաքավներն ու այլ թոշուններ տեղում անշարժանալու, քարանալու սովորություն ունեն և այլն և այլն: Եվ շատ գոհ այն բանից, որ ինքն իր փորձի շնորհիվ այդ բոլորը զիտե, իսկ ընթերցողը ոչ, ժպտալով բացատրում է առաջին հայացրից բնության առեղծված թվացող յուրաքանչյուր բան, բացատրում է զիտականորեն, իր խոսքը համեմելով որսորդական կյանքի հրապուրիչ զիալվածներով, իրենց զբաղմունքին սրբահարված որսորդների հետաքրքրիք զբուցներով: Ու ընթերցողն, ինքն էլ այդ գլխի շընկնելով, ահազին բան է սովորում իրեն շրջապատող բնության մասին, այլև

սիրահարվում, այդ բնությանը, ինչպես սիրահարված է պատմվածքների հեղինակը:

Մարդու մասին Անանյանն իր հայացքն ունի, որը չի ճշում, չի երևում պլակատի նման, բայց առկայօնում է յուրաքանչյուր պատմվածքի մեջ: Որսորդական պատմվածքներում Անանյանի հերոսները դեմ հանդիման կանգնում են բնության երկույթները բացվում, արտացոլվում են նրանց վերաբերմունքի մեջ բնության երկույթների նկատմամբ: Գեղարվեստական նուրբ մի հնարանք է սա, հատուկ տաղանդավոր զրողին և շատ բանով հենց սա. է պայմանավորում նրա բազմաթիվ որսորդական պատմվածքների հմայքը:

Որսորդական պատմվածքի նախադրության մեջ Անանյանի հերոսը սովորաբար միագիծ է: Հրացանն ուսը զցած այդ մարդու համար, թվում է, կարեորը հաջող որսի հեռանկարն է: Բայց այդ հերոսն աստիճանաբար փոխվում, բազմափեղկվում է բնության զրկում: Մի միայնակ ծաղիկը, լեռնային բնության մի գեղեցիկ բնանկարը, գարնանային հորդ անձրես բավական են նրա հողին փոթորկելու: Նա հիշում է իր մակության ու պատանեկության անցած օրերը, հարազատներին, մորս, որ կրկին ցոլանում է նրա աշքերի առաջ խոնարհ ու բարի: «Որսորդին հաղթողը» պատմը-վածքում Անանյանը գրում է. «Այնուամենայնիվ կա մի ուժ, որ «գերագույն հաճույքի» պահը կա-

բող է խլել քեզանից: Կա մի ուժ, որ քեզ կարող է ստիպել շկրակել առաջդ կանգնած որսի վրա»<sup>1</sup>: Այդ ուժը սերն է: Աերը նրբացնում, քնքշացնում է մարդու հոգին: Այս է, Անանյանի համանման պատմվածքների հիմնական գաղափարը: Հենց նույն պատմվածքում Անանյանը որսորդի համար ստեղծում է այնպիսի իրազրություն, երբ սերն իսկապես նրանից խլում է «գերազույն հաճույքի» պահը, որսի տեսնդով լցված նրա հոգին փափկացնում մինչ այն աստիճան, որ նա որսը թողած, կոշտացած մատներով լեռնային ծաղիկներ է զոկում անծանօթ դեղանի պարունակ համար: Բայց մարդու և ընության նկատմամբ ինանդաղատագին սիրուց, այդ պատմվածքներն ընթերցողի մեջ առաջացնում են մարդկային այլ բարձր զգացումներ ևս: Դրանցում բարձրացվում, սրբազործվում են դարերով ժողովրդի մշակած որսորդական կանոնները, որոնք ոչ այլ ինչ են, քան եթե մարդկային ամենալիք զգացմունքների վրա խարսխված համակեցության կանոնները. ընկերասիրություն, մեծահոգություն, արդարամտություն, խիզախություն, անձնվիրություն, զործի մեջ համառություն, ուշիմություն, զեղեցիկը նկատելու և զնահատելու կարողություն:

Վ. Անանյանի պատմվածքները կարդալիս բն-

1 Վ. Անանյան, «Արսորդական պատմվածքներ», պրակե, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 76:

թերցողի աշքի առջև են գալիս հսկա լեռնական մարդիկ, որոնք որսի ժամանակ մի-մի մարտնչող առյօւծներ են, բայց որսից վերադառնալիս երթիք չեն ասի, թե ում կրակոցով է խփված որսը, մարդիկ, որոնք օրերով թափառել են սարերում, որսի հետեից և հանգիստ սրտով թողնում են, որ եղնիկը հեռանա, որովհետեւ այդ եղնիկը ձագ ունի ու նրա սպանվելու դեպքում ձագը կորբանա: Որսորդներ, որոնք հմայված նայում են քարաժայոխն կանգնած այծամին ու չեն կրակում, որովհետեւ տեսարանը զեղեցիկ է, իսկ որսորդական կրակոցների մեջ նորր ու քնքուշ է մնացել նրանց սիրութ: Այս տեսակետից մի շատ լավ օրինակ է «Գանձը ապառժի մեջ» պատմվածքը<sup>1</sup>: Այստեղ հերոսը կյանքի փորձություններով անցած մարդ է, որը մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին, քաջարար կովել Հայրենիքի համար, ուազմաճակատում թողել է ձեռքը, տասնյակ մահեր է տեսել և այնուամենայնիվ իրեն շի կարողանում ներել իր մի սխալը, երբ կրակել է արջի քոթոթի վրա և տեսել նրա մոր տառապանքը:

Անանյանի որսորդական պատմվածքների հերոսները մեծ մասամբ երեսում են ոչ թե հասարակական կապերի մեջ, այլ լեռներում, միայնակ կամ պրոֆեսիոնալ ընկերության մեջ, սակայն

1 Վ. Անանյան, «Որսորդական պատմվածքներ», պրակե, Հայպետհրատ, Երևան, 1959:

սժմար շե զլիսի լնկնել, որ սրանց համար շեն կարող սուրբ ու թանկագին վիճել մերձավորի կյանքն ու հոգեկան ապրումները։ Ահա թե ինչպես կարելի է ընթերցողի մեջ վեհ զգացումներ առաջացնել նույնիսկ այնպիսի պատմվածքներով, որոնց հերոսները շեն գործում բուն մարդկային հասարակության մեջ։ Բարոյական բարձր հատկությունների տեսակեալից էլ հենց Անանյանը ծաղր ու ծանակի է ենթարկում սկարծենկոտությունը, ամբարտավանությունը, ժլատությունը և առհասարակ մարդկային արատները։ Նման դեպքերում զրողի թեթև, ներողամիտ ժպիտը փոխարինվում է զառը հանդիմանությամբ, նրա հայացքը խստանում է։ Ամբարտավան ու պարծենկոտ որսորդին նա զցում է այնպիսի անհարմար վիճակի մեջ, որը փաստորեն բարոյական մա՞ս է վերջինիս համար («Պարծենկոտը», «Մուղանի վարազները»)։ Ժլատ ընկերոջը զրկում է որսորդության «գերազույն հաճույքից» («Ժլատը») և այլն։

Որսորդական պատմվածքների կապակցությամբ Անանյանին կշտամբել են առավելապես նրկու բանի համար։ Դրանցից առաջինն այն է, որ նրա պատմվածքներից երբեմն այն տպավորությունն է ստացվում, թե նա մարդեղացնում է ընտանի ու վայրի կենդանիներին, օժտում նրանց մարդկային բնավորություններով, խելքով, զգացմունքներով։ Խսկապես, որսորդական շները Անանյանի պատմվածքներում հաճախ շատ են խելացի,

անհաջող կրակոցից հետո նրանց աշքերում որսորդն արհամարհանք է նկատում («Էլզան», «Ստացա՞ր», «Նախատինք առանց խոսքի»): Նրանք երբեմն ինքնազո՞ւթյան են դիմում տիրոջ կյանքը փրկելու համար («Ուրսը», «Իմ հավատարիմ ընկերները») ու, թվում է, այդ կատարում են գիտակցարար: Նույնը կարելի է ասել գրողի նկարագրած վայրի կենդանիների, ոչխարների, քարայծերի, եղնիկների և անդամ թոշունների մասին: Նրանք կարդապահության հատուկ կանոններ ունեն, հերթով հսկում են ընկերների անվտանգությունը, կարծես գիտակցարար խուսափում փորձանքից, նրանք ծնողական կակիծ են ապրում, մարդու նման ողբում իրենց վիշտը և այլն: Ի դեպ, քննազատական դիտողություններից շփոթված հեղինակը վերջին պատմվածքներում մործում է արդարանալ մի միամիտ հնարանքով: Ամենուրեք կենդանիների մասին դրելիս նա շակերտների մեջ է առնում գիտակցություն, խելք և նման բառերը: Մինչդեռ այստեղ արդարանալու բան չկա: Իհարկե այս հարցում, թերևս, Անանյանը շափազանցությունների մեջ է ընկնում, կենդանիներին երբեմն վերագրելով այնպիսի բաներ, որոնք դժվար թե հատուկ են նրանց, բայց բնագիտական զրուցի, առավել ևս որսորդական պատմվածքի, հեղինակը շատ հաճախ արտակարգն է ընտրում, այլապես նրա զրուցը հետաքրքիր չէր լինի: Եթե նա որսորդական շուն է նկարագրում, ապա պարտա-

վոր է խոսել նրա «գործունեության» ամենապայծառ դիպվածի մասին, ասածն ընդգծելու համար երբեմն գունազարդելով եղելությունը: Եթե նա խոսում է մայր եղնիկի ու նրա ձագի կապի մասին, ապա քիչ թե շատ վերբնազդացին բան է դնում դրամեջ, դրանով նա հետաքրքրաշարժ է գարձնում իր պատմությունը:

Մյուս կողմից, դարերով մշակված ոհֆլեքսները, անընդհատ շփումը բանական էակի, մարդու հետ, կենդանիների մեջ հիբրավի զարգացնում են այնպիսի բնազդներ, որոնք առաջին հայացքից կարծես թե աղերսվում են խելքի, դիտակցության հետ: Անանյանը բնավ էլ առաջին գրողը չէ, որ նկատել է այդ բանը: Նույն տպավորությունն է ստացվում կանագական հոչակավոր բնախուզդգրող է. Սետոն-Տոմպսոնի պատմվածքներից, Պրիշվինի բնագիտական հմայիշ զրույցներից, Թումանյանի հրաշալի պատմություններից՝ շան, կիստարի և այլ կենդանիների մասին:

Սակայն կարևորն այստեղ այդ էլ չէ: Ո՞՛ Անանյանը և ո՞շ էլ այս բնագավառում նրա նախորդները իրենց առաջ հիմնական նպատակ շեն դնում գովերգել ընտանի ու վայրի կենդանիների «ղղացմունքներն» ու «գիտակցությունը»: Ուշադիր ընթերցողը Սետոն-Տոմպսոնի «Առնո»-ի մեջ չի տեսնում միայն փոստատար աղավնին, որ մարդուում է ճանապարհի ահոելի դժվարությունների դեմ կյանքը փրկելու համար, այլ առավելապես

տեսնում է հայրենաբաղձության սիմվոլը, հայրենաբաղձություն, որ միանգամայն բնական ու միայն մարդուն հատուկ դիտակցական կատեգորիա է: Անանյանի բնագիտական զրուցներում, որսորդական պատմվածքներում ուշադիր ընթերցողը կենդանիների սովորությունների, բնագդների երբեմն չափաղանցված նկարագրությունների մեջ ճիշտ նույն կերպ նկատում է դրանց սիմվոլիկ նշանակությունը: Այդ բոլոր բարձր զգացումները, որ վերագրվում են կենդանիներին, մի հիմնական նպատակ ունեն՝ դաստիարակչական նպատակ: Այս բանն ավելի հասկանալի կղառնա, եթե նկատի ունենանք, որ որսորդական պատմվածքները մեծ մասամբ հասցեագրված են պատանի ընթերցողներին: Հիրավի, եթե շունը կարող է անձնագոհության դիմել ընկերոջ կյանքը փրկելու համար, ապա որքան անձնագոհ ընկեր պիտի լինի մարդը մարդու համար, եթե քարայծը ժամերով կարող է անշարժ հսկել իր ընկերների անդորրը, ապա որքան կարգապահ, իր շրջապատի մարդկանց, հասարակությանը նվիրված պիտի լինի մարդը, որ զեկավարվում է ոչ թե բնագդով, այլ դիտակցությամբ: Ահա տողերի արանքում թաքնված բուն նպատակը, ահա թե որտեղից է զալիս Անանյանի որսորդական պատմվածքների այդ «թերությունը»:

Սրան առնչվում է նաև երկրորդ դիտողությունը: Ակնարկում են, թե Անանյանի որսորդական պատմվածքների հերոսը երբեմն սենտիմեն-

տալ է, մասնավորապես երբ խոսքը թափված արյանն է վերաբերում։ Նրա հոգում շատ է զղչումը, երբեմն նրա աշխարհայիցողությունը չի տարբերվում թումանյանի ժամանակաշրջանի հայ գյուղացու պացիֆիստական աշխարհայիցողությունից։ Իսկապես այս տպավորությունն ստացվում է Անանյանի մի քանի պատմվածքներից, բայց դրանք բարեբախտաբար քիչ են։ Ավելի հաճախ, ինչպես այդ տեսանք «Գանձը ապառաժի մեջ» պատմվածքում, որսորդի հոգեկան տվայտանքը պայմանավորվում է կամ պատահական սխալով, կամ անարդարությամբ, որ նա թույլ է տալիս հոգեկան խռովքի մեջ։ Վերջին հաշվով այդ տվայտանքը հերոսի հոգու վեհության արտահայտությունն է։

Հերոսի (տվյալ դեպքում նաև հեղինակի) աշխարհայիցողության լուսաբանման տեսակետից հետաքրքիր են տասնյակ մտորումներն ու խորհրդածությունները, ցրված գրեթե բոլոր պատմվածքներում։

Վերջացել է սրաը։ Բոցկլացող խարույկի շուրջն են հավաքվել որսորդները, որսի «գերազույն հաճույքի» պահն այևս մնացել է հետեւմ, և նրանք աշքերը կրակին հառած մտորում են կյանքի, երջանկության, աշխարհի մասին։ Այստեղ ամենից շատ են բացվում նրանք, ամենից լավ է երեսում նրանց աշխարհայիցողությունը։ Այդ մտորումների ու խորհրդածությունների մեջ,

իհարկե, առկա է նաև տրադիցիոն «աղաթի» մոմենտը, զգայուն մարդու բնական հակակրանքը սպանելու, արյուն թափելու գործողության նկատմամբ։ Որտեղ որ այս հակակրանքը դառնում է վերացական, ընդհանուր, պատմվածքն իսկապես կորցնում է ինքնատիպությունը, հիշեցնում դեռևս նախահեղափոխական մանկապատանեկան պարբերականներից ծանոթ պատմվածքները։ Բայց բոլոր այն դեպքերում, երբ խոսքը կոնկրետ փրադարձության է վերաբերում, խորհրդածություններն ստանում են հասարակական արժեք, դառնում հումանիզմի արտահայտություններ։ Անայնիւ պատմվածքներում այս երկու մոմենտներն ել կան։ Ավելին, կան, եթե այսպես կարելի է ասել, ուղղակի ծրագրային զրուցներ, որտեղ նա ցանկանում է առաջին հերթին ինքն իր համար պարզել իր վերաբերմունքը բնության արարածների նկատմամբ։ Այդպիսիներից մեկն է. օրինակ, «Բնափիլիսոփայություն» զրուցը<sup>1</sup>։

Հոգնած որսորդը հյուր է Արարատյան դաշտում, մի բանչարաբույզի մոտ։ Հողի աշխատավորն իրեն հատուկ սրտաբացությամբ հյուրասիրում է որսորդին իր աճեցրած բարիքներով։ Որսորդն իր մտորումներն սկսում է ինքն իրեն աված մի անմեղ հարցով. «Յարաբ ո՞վ է ստեղծել էս

1 Վ. Անանյան, «Որսորդական պատմվածքներ», պրակտ., Հայոցեառհատ, Երևան, 1958, էջ 303—308։

ձմերուկ ասածդ բանը»։ Այս հարցի մեջ խորանալով նա հասնում է ավելի պացիֆիստական եղբակացության, բան նույնիսկ իդեալիստ բռնակերների ուսմունքը. «Հենց հացն ել սերունդների անխըզճաբար ճմլած և տղացած պաշարն է»։ Այս «բնափիլիսոփիացությունից» ելնելով որսորդը չի կարողանում ուտել ոչ տանձը, որ նա զիտում է, որպես «մայր ծառի» ստեղծած անհրաժեշտ կենսական միջավայրը «Ճագի»՝ կորիզի համար, ոչ մածունը, որովհետև այն «Հորթի բաժինն է»։ Հասկանալի է, թե ինչ արժեք կունենային Անանյանի հերոսի նմանօրինակ «մտորումները», եթե դրանք բնդշատվեին հենց այս կետում։ Բայց նույն հյուրասեր զցուղացու օգնությամբ այդ հերոսը շուտով սթափվում է։ Նա իրեն առաջարկվող ուտելիքի մեջ տեսնում է մարդու աշխատանքը։ «Խսկառես,— մտորում է նա,— այդ ինչպես ևս մոռացել էի այն հսկայական աշխատանքը, որ մարդկությունը կատարում է հողի վրա։ Այդ աշխատանքն է բեղմնավորում հողը, նա է՝ ազբյուրը բոլոր բարիքների, բոլոր առատությունների։ Վայրենի վիճակում այս ձմերուկը խնձորի շափ մի բան է եղել երեխ անհամ, կամ՝ դառը։ Դարերի ընթացքում մարդը մշակել է, ընտրել, զարգացրել, քաղցրացրել ևլ ահա արդյունքը։ Իսկ այս հյութեղ «մարտչան» մի՞թե Արարայան դաշտի բնակչության հարցուրավոր սերունդների ստեղծածը չէ... Չէ՛,

սերունդների բաժինը կտրելու հարց չկա, մենք  
վայելում ենք մեր ստեղծածը»:

Մի անգամ հասնելով այս եղրակացությանը,  
Անանյանի հերոսն այլևս դադարում է իր զբաղ-  
մունքի՝ որսորդության մեջ ոճրագործություն տես-  
նել, որովհետեւ նա բնության տերն է, որովհետեւ  
նա հասկանում է, որ իր «կալվածքում» ամեն ինչ  
իրենն է, իր ստեղծածը ու պիտի ծառայի իր բա-  
րօրությանը: Եվ ինչպես խելոր այզեպանն է իր  
այզին մշակելիս մտահոգվում խաղողի վազերի  
անվտանգության մասին, այզպիս նուև Անանյանի  
պատմվածքների հերոսն է մտահոգվում բնության,  
յուրաքանչյուր թփի, յուրաքանչյուր ծառի, յուրա-  
քանչյուր կենդանի արարածի մասին: Այս բանը  
կարելի է նկատել Անանյանի բոլոր պատմվածք-  
ներում, իսկ «Զեխական բարքեր» շարքի ակնարկ-  
ները կարելի է տաել բացառապես այս հարցին  
ևն նվիրված: Այդ ակնարկներում Անանյանի հե-  
րոսները ինկական իմաստով բարձր կուլտուրայի  
մարդիկ են, որոնք լիովին զիտակցում են բնու-  
թյան տիրոջ իրենց դերն ու պարտականություն-  
ները: Նրանք որսը դիտում են որպես հասարա-  
կական սեփականություն, ժողովրդական տնտե-  
սության շահավետ բնագավառներից մեկը: Որսա-  
լուց առաջ նրանք մտածում են վայրի կենդանի-  
ների առդրուտի ու բազմացման մասին:

Այսպիսին են ահա Անանյանի իդեալ ներս-  
ներ:

Երբ խոսք է բացվում Անանյանի որսորդական պատմվածքների մասին, որևէ մեկը ներողամբութեն ժպտալով ակնարկում է, թե Անանյանն, ինչպես ասում են, «սիրում է փշել»: Երբ այդ իրեն՝ հեղինակին են ասում, նա բարեմտորեն քմծիծաղ է տալիս ու վկայակոչում հայտնի բնախուզվներին ու առաջին հերթին թրեմին:

Ի՞նչն է պատճառը, որ Անանյանի պատմը վածքները, համենայն դեպս, այդպիսի եղբակացության տեղիք տալիս են:

Հնարավոր է, իհարկե, որ բնագիտական առումով Անանյանի նկարագրած բոլոր դիպվածները պատճառաբանված են: Մենք հաճույքով հավատում ենք, որ օձերը խմբով տեղափոխվում են տեղից տեղ, «ամառանոց են զնում» («Սաղարակի օձերը», «Ինչպես են ամառանոց զնում Արարայան դաշտի օձերը»), որ որդեկորույս արջը տարիներ շարունակ չի մոռանում իր վիշտը ու հալածում, վնասում է իր ձագին սպանած մարդուն («Մայր արջը») և այլն:

Հարցը բնակլ էլ բնախուզական ճշգրտության մեջ չէ: Անանյանի որսորդական պատմվածքների արկածային բնույթն է, որ տեղիք է տալիս երկմբաւելու, թե բնության մեջ հնարավո՞ր է արդյոք այս կամ այն երեսույթը, որ հեղինակը պատմում է որպես հավաստի իրողություն:

Պատահական չէ, որ որսորդական իր պատմը՝ վածքների փորձն օգտագործելով, Անանյանը գրեց իր երկու ծավալուն արկածային վիպակները:

Արկածային (ոչ արկածախնդրական) երկերում դժվար է զտնել որևէ առանձին մանրամասնություն, որ հակաբնական լինի: Բնության մեջ հնարավո՞ր է, որ բարածխի, երկաթի և այլ միներալների հանքերը լինեն այս կամ այն կղզում: Հնարավոր է: Հնարավո՞ր է, որ նույն տեղում բնությանը դիտակ մարդը զտնի վայրի ծխախոտի թուփ: Նույնպես հնարավոր է: Բայց երբ արկածային երկի հեղինակը բոլոր կարելիությունները ի մի է բերում, երբ տասնյակ միներալների հանքերը ուղղակի կուտակված են մի ափաշափ հողակտորի վրա ու նույն տեղում էլ հենց ծխախոտն է, հացարույսը, բանջարեղենն ու առհասարակ այն ամենը, ինչ որ հարկավոր կարող է լինել պատահաբար այդ հողակտորի վրա ընկած նավաբեկյալներին, ընթերցողն ակամա մտածում է՝ «Միթե այդ հնարավոր է»:

Այդպիսին է ահա նաև Անանյանի որսորդական պատմվածքների բնույթը: Բնության մեջ կենդանիները կավում են միմյանց դեմ՝ միմյանց բերանից որս խլելու, իրար հոշոտելու, կամ իրարից սեփական ծագերին պաշտպանելու համար: Այստեղ հակաբնական ոչինչ չկա: Սակայն երբ Անանյանը «Թյուրիմացություն» պատմվածքի մեջ ստեղծում է այնպիսի իրադրություն, որ որսորդը

մի գնդակով և՛ հովազ է, տուն տանում, և՛ արջ, և՛ վարազ (որսորդի գնդակից խրտնած սրանք հերթով հոշոտում են միմյանց), լննթերցողն արդեն մտածում է, թե այստեղ «մի քիչ այն չէ»:

Ինչո՞ւ է այդպես ստացվում: Այդպիս է ստացվում ոչ միայն այն պատճառով, որ որսորդական-արկածային պատմվածքի հեղինակը նկարագրում է միայն աշքի լնկնող, երբեմն առանձնատուկ դեպքեր, այլև այն պատճառով, որ նման պատմվածքներում նա ունենում է սկեռուն նպատակ, ովքալ դեպքում նկարագրել գաղանի բարքի այս կամ այն կողմը, ու այդ նպատակին հասնելու համար չի վարանում խտացնել գուշները, չափազանցնել, հետեւելով միայն մանրամասների ճշշմարտացիությանը, թեկուղ և անհավանական թվանց միակցությունը:

Այսպիս է բոլոր արկածային երկերում, որոնցում պատահականությունները, նույնիսկ շատ բնական դեպքերի պատահական զուգորդությունները, դառնում են սյուժե, գաղափարի գեղարվեստական բացահայտման միջոց, և դրանով բնակիսկ չի նսեմանում գաղափարը, գրողը չի շեղվում իր նպատակից, եթե կուզեք, չի դադարում լինել ոհալիստ՝ այս բառի իսկական իմաստով, քանի որ նրա ոհալիզմը գաղափարի հստակության նյուրաքանչյուր մանրամասնի իրական լինելու, բնականության մեջ է:

Անանյանի որսորդական պատմվածքների կա-

բեսր գեղարվեստական առանձնատկություններից մեկը նրանց զվարթությունն է, որ ստեղծվում է ինչպես դրության, այնպես էլ խոսքի կոմիզմի հնարանքներով։ Անանյանը սիրում է թիթեակի ծաղրել և իր անհաջողակ ընկերներին, և՛ ինքն իրեն՝ ծիծաղելով իր դյուքահավատության, միամբ տության վրա։ Մի անհաջող կրակոց, մի շափազանցված սպասելիք օրվա որսից, բավական են, որ նա ծիծաղի ու ծիծաղեցնի, ընդ որում, յուրաքանչյուր դեպքի համար նա կարողանում է գտնել ժողովրդական մի ասացվածք, մի դիպուկ թեավոր խոսք, որն ընդհանրացնում է առաջացած կոմիկան վիճակը։

Այստեղ արդեն մենք մոտենում ենք գրողի երկերի մեկ այլ առանձնահատկությանը, որը խոշոր նշանակություն ունի նրա ինքնատիպությունը որոշելիս։

Առաջին հայացքից այն տպալորությունն է ստացվում, թե Անանյանը շատ հաճախ է դիմում բարբառին, թե նա շատ է օգտագործում իր հայրենի Ղաղախի ու Լոռու բարբառը։

Հիրավի, Անանյանի հերոսները, մանավանդ եթե նրանք հասակն առած մարդիկ են, խոսում են ոչ այնպես, ինչպես սովորաբար խոսում են «մաքուր» հայերենով գրված երկերի պերսոնագները։ Բայց զարմանալին այն է, որ այդ հերոսները, էլ չենք ասում ինքը՝ հեղինակը, բարբառով նույնպես շեն խոսում։ Անանյանը վարպետորին

կարողանում է բարբառի նմանեցում (իմիտացիա) անել, նա զրական բառերը կարողանում է հնչեցնել որպես բարբառային բառեր, տպավորությունն ավելի ուժեղացնելու համար շխորշելով նաև հատու կենտ բարբառային ձեերից, որ օգտագործում է խիստ ընտրությամբ՝ մասնավորապես հերոսներին խոսեցնելիս։ Դրանից հյութեղ ու հմայիչ է դառնում պատմվածքների լեզուն։

Իմիջիացոց, այս հարցում Անանյանին օգնում է այն հանգամանքը, որ բարբառային շեղումների ժամանակ նա բացառապես հենվում է կոռու բարբառի վրա, որը, ինչպես հայտնի է, մեր այժմյան զրական լեզվի հիմքը հանդիսացող Արարատյան դաշտի բարբառից հեռու չէ։ Բացի այդ, այս խնդրում Անանյանն ունի այնպիսի հանճարեղ նախորդ, որպիսին Հովհաննես Թումանյանն էր։

Առհասարակ Անանյանը շատ է պարտական Թումանյանին։ Թումանյանի բարերար ազդեցությունն զգացվում է ոչ միայն լեզվառճական հյութեղության, այլև թեմաների, ընդհուպ մինչև գաղափարների մեջ։ Դրանում համոզվելու համար բավական է իրար կողքի դնել կենդանիների մասին Թումանյանի զրած երկերն ու Անանյանի որոսորդական պատմվածքները, Թումանյանի «Մերոնք» շարքն ու Անանյանի «Մեր գյուղի հին մարդիկ» շարքի պատկերները։

Թումանյանից է, որոշ իմաստով, գալիս նաև Անանյանի երկերի լիրիկականությունը, որ շատ

ունպքերում նրա պատմվածքը դարձնում է գողարիկ արձակ բանաստեղծություն («Անձրև», «Այսօմանկության» և այլն): Թումանյանի նման Անանցանը ևս սիրահարված է Հայրենի բնությանը: Սակայն եթե Թումանյանը կարողանում է պահել մի ինչ-որ անբռնելի զուսպ երանգ, որում չի խամրում նրա անսահման սերը, որը միաժամանակ շափում ու կաղապարում է երկի յուրաքանչյուր նախադասությունը (դեն նետելով այն ամենը, ինչ ավելորդ է, եթե նույնիսկ ինքնին գեղեցիկ է), ապա բնությունը նկարագրելիս Անանյանն ավելի անզուսպ է: Մերթ ընդ մերթ նա ուղղակի դուրս է դալիս նկարագրողի իր գերից ու հիացական ներքողներ կարդում լեռնային չքնաղ լանդշաֆտին: Նրա այս տիպի նկարագրությունները ոչ միշտ են սատարում զաղափարի կամ սյուժեի բացահայտմանը, երբեմն մնում են որպես ինքնին գեղեցիկ, բայց երկի գործողության ընթացքի հետ շաղընչվող ոգեշունչ հատվածներ: Ինչ խոսք, սա թերություն է երկի կուռ կոմպոզիցիայի պահանջի տեսակետից: Սակայն բոլոր գեպքերում էլ Անանյանի բնանկարները քնքուշ են ու շուայլ, դրանք երկերին տալիս են լիրիկական, ոռմանտիկ գունավորում ու իրենց շքեղությամբ նրբացնում են ընթերցողի հոգին, նրան ևս վարակում գրողի խենթության հասնող բնասիրությամբ: Այս հանգամանքը քիչ շի օգնում Անանյանի երկերի հմայքին: Պատահական չէ, որ ուրիշ լեզուներով թարգ-

մանված նրա երկերն այնքան շատ են զրավում  
ընթերցողներին։ Եթե դրանցում այլաղի ընթեր-  
ցողը ուրիշ ոչինչ էլ չգտնի, ապա գտնում է հայ-  
կական բնաշխարհի ճոխ, սրաի արյունով գրված  
նկարագրություններ, ինչպես Պրիշվինի երկերում  
գտնում է սուսական բնության հրաշալիքներ։  
Կարելի էր Անանյանի պատմվածքներից մեջ բերել  
հատվածներ, ուր լիրիկական երանգով նկարագրը-  
ված է, հայկական լեռնաշխարհը, Կովկասյան  
Փոքր լեռնաշղթան, անտառները, լճակները, մար-  
դագետինները, անզնդախոր ձորերն ու երկնածուպ  
դագաթները։ Դրա համար բավական կլիներ պատ-  
մրվածքներից որևէ մեկը։

Հասկանալի է, Անանյանի որսորդական պատ-  
մրվածքները հավասարարժեր չեն։ Որսորդական  
պատմվածքների ժողովածուներից ստացվում են  
նաև ուրիշ, անցանկալի տպավորություններ։  
Դրանցից մեկն այն է, որ զուտ որսորդական։  
Պատմվածքներում հաճախ նեղանում է Անան-  
յանի հետաքրքրությունների շրջանակը։ Լոռին,  
Ղաղախը, դրանց բնությունը, վայրի կենդանի-  
ները, դրանց սովորություններն ու բարքերը, որ-  
սորդները, նրանց առանձնահատկությունները,  
ահա բոլորը։ Անանյանի որսորդական պատմը-  
վածքներից շատերը վերջանում են այնտեղ, որ-  
տեղ որսից վերադարձ հերոսը կոշիկներն է հա-  
նում, բնակարանի շեմքին։ Լավագույն դեպքում

նրան զովում կամ ծաղրում են ընկերներն ու հարկանները, կինք բողոքում է կամ կշտամբում ավելորդ ոգիորության համար: Իր որսորդներին տուն բերելով, Անանյանը բաժանվում է նրանցից, թրպում է, վախճառում է նկարագրել նրանց հասարակական առօրյա միջավայրում, չնայած նրա հերոսները սրսորդներ լինելուց բացի իրավաբաններ են, պետական պաշտոնյաներ, ուսուցիչներ և այլն:

Ճիշտ է, որսորդական պատմվածքների վերջին՝ Հինգիրորդ հատորում (1959 թ.) Անանյանը փորձ է անում հաղթահարել այս թերին, այդ դրի «Մերոնք» շարքի պատմվածքները հենց փորձեր են որսորդներին բնութագրելու տանը, հասարակական միջավայրում, և այդ փորձերի մեջ կան նաև հաջողված կտորներ, բայց սրանցում էլ գեռնս հերոսի մտորումները կապված են բնության ընկալման և որսորդության հետ: Սրանցից տարբերվում են միայն առավելապես հին կյանքի արտացոլմանը նվիրված, սոցիալական խոր բովանդակություն ունեցող պատմվածքները, որոնցում որսորդական դիպվածը սոսկ զրական հնարանք է երկի սոցիալական իմաստը զեղարվեստորեն բացայտելու համար:

Այն հեղինակի համար, որի նպատակը զուտ որսորդական դիպվածի նկարագրությունն է, հիշյալ թերին, թերես, առանձնապես մեծ նշանակություն շունի, սակայն նախ Անանյանն այդպիսի հեղինակ չէ: Կ ապա՝ որսորդական պատմվածքներ-

բում նկատվող թեմատիկ այս նեղությունը իր հիմ  
րերում է ոչ միայն դիպվածների, այլև արամա-  
գրությունների կրկնություններ:

Կրկնությունները շատ են Անանյանի ժողո-  
վածուներում: Մի-մի պատմվածք չէ, որ Անանյա-  
նը նվիրում է շան հավատարմությանը, աղվեսի  
խորամանկությանը, որդեկորույս արջի մորմոքին:  
Յուրաքանչյուր թեմա բացահայտվում է, մի քանի,  
երբեմն տասնյակ պատմվածքներում, ընդ որում,  
դրանցից մեկը կամ երկուար զեղարվեստական  
ինքնուրույն արժեքներ են, իսկ մյուսները դրանց  
ավելի կամ պակաս շափով հաջողված տարբերակ-  
ները: Դիպվածները, իհարկե, տարբեր են, տար-  
բեր է որսի տեղանքը, բայց բնդհանուր տրամա-  
գրությունը, ընդհանուր տոնը նույնն է:

Բացի այդ, Անանյանի որսորդական պատմը-  
վածքների մեջ պատահում են նաև այնպիսիները,  
որոնք չեն բարձրանում զուտ նկարագրական նյու-  
թերի մակարդակից: Այդպիսի դրվածքներ են օրի-  
նակ, վերջին՝ հինգերորդ հատորում զետեղված  
«Հայրենի լեռներում» և «Կենդանի բնություն»  
շարքերի մի քանի պատմվածքները («Աշքեր»,  
«Մեր պտուղների հմայրը», «Սևանի շուրջը» և  
այլն):

### III

Վ. Անանյանի որսորդական պատմվածքներից  
շատերը միաստորեն, անցյալի հասարակական

կյանքի այս կամ այն կողմի գեղարվեստական արտացոլումներն են: Սա մի հետաքրքիր գրական ոճ է, որ Անանյանը փոխ է առել դասական գրականությունից (Հովհ. Թումանյան, ի. Ս. Տուրգենև և այլն):

Հեղինակը շատ լավ է հասկանում որսորդական պատմվածքների հմայիչ ուժը, նա դիտել է. թե ինչպիսի հափշտակությամբ են ընթերցողները կարդում որսորդական դիպվածների նկարագրությունները, և ահա անմեղ խորամանկությամբ իր կենցաղային ու նույնիսկ սոցիալական պատմըվածքները համեմում է որսորդական դիպվածներով: Ստացվում է հետաքրքիր մի խառնուրդ, ուր միմյանց հետ մրցում են որսորդական դիպվածն ու կենցաղային մանրամասնությունը, հայկական բնաշխարհի զմայլելի պատկերն ու կյանքի խոր սոցիալական մոտիվը, որին ոչ պակաս հմտությամբ է տիրապետում Անանյանը: Այդ պատմըվածքները առաջին հերթին գրավում են իրենց որսորդական արկածներով, բայց անհկատելիորեն, առանց մերկապարանոց տեսդենցիողության, ընթերցողի առջև բացում են խորը մարդկային հարաբերություններ. տալիս հասարակական կյանքի գեղարվեստական պատկերը: Այդպիսի երկեր են Անանյանի «Մանկությունը լեռներում» (1954 թ.) և «Դառն անցյալից» շարքերի պատմըվածքները, այդպիսին են նրա պատմվածքները

Նվիրված պարտիզանական շարժմանը՝ 1918—  
1920 թվականների Հայաստանում:

«Հովվական սեր» պատմվածքը, օրինակ, ըստ  
էռթյան սոցիալական խոր բովանդակություն  
ունի: Դա անցյալում ամեն ինչից զրկված, անար-  
դարության անփվի տակ ճմլվող հովվի գժբախտ  
սիրո պատմությունն է, որը ընթերցողին հուզե-  
լով միաժամանակ զայրուցի է առաջացնում նրա  
հոգում: Այստեղ մի առանձին սիրով է կերտված  
հին օրերի միամիտ, աղաթին ու աղամարդու  
տված խոսքին վստահ հովվի կերպարը: Սարերի  
հովիվ է, հեռու աշխարհական վայելքներից, քա-  
ղաքակրթության և ոչ մի հետք կարծես թե չկա  
նրա մեջ: Բայց այդ քարակոփ մարդու հոգում  
բոցկլտում են գեղեցկի գնահատման կարողու-  
թյունն ու ազնիվ սիրո զգացումը: Սերն արցունք  
է քամում նրա աշքերից ու միաժամանակ առյուծի  
ուժ տալիս ժողովրդական հերիաթների հերոսների  
նման դրեթե անզեն մարտնչելու ամենի գաղանի  
դեմ: Այդ հերիաթների հերոսների նման նա այն  
միամիտ համոզումն ունի, թե իսկապես իր ու ար-  
չի մենամարտի ելքից է կախված իր երջանկու-  
թյունը: Բայց հովվի սերն անհույս է (նրա սիրած  
էակը թափադի աղջիկ է) ու շրջապատում կյանքի  
փորձ ունեցող բոլոր մարդիկ նախազդում են դրա  
եղերական վախճանը: Չնայած իր քաջությանը,  
չնայած իր աղնիվ ու սիրով լեցուն սրտին, հովիվը  
կոտրվում է, կործանվում է նրա սիրած աղջիկը,

սերը փշրվում է՝ բախվելով սոցիալական անհավասարության «սրբագործված» պատվիրանին՝ «ուրք վերմակիդ շափ մեկնիր»:

Կարող են ասել, թե նոր չէ այս պատմվածքի ինձան: Այդ, ի՞նարկե, ճիշտ է: Այս առումով սա նույնպիսի մի եղերերգ է ինչպես նախառելլուցիոն հայ գրականության սոցիալական գունավորում ունեցող տասնյակ սիրավեպերը: Առավել ևս, այսպիսի «Հավերժական» թեման բարձրացնելու համար Անանյանին հարկավոր էր գտնել նոր երանդներ, հոգեբանական նոր դրություններ, որոնցով նրա երկը կարողանար տարբերվել նույն թեմայով գրված ուրիշ պատմվածքներից: Այստեղ է, որ հեղինակին օգնության են զալիս որսորդական երկերին հատուկ վեղարվեստական հնարանքները: Անանյանը հերոսի հոգեկան ապրումներն արտացոլում է որսորդական արկածների նկարագրությունների մեջ: Ընթերցողը սրտատրով հետևում է արջի և մարդու օրհասական մենամարտին, ամեն վայրկյան սպասում, թե ինչ հետևանք կարող են ունենալ սիրանվեր ու խիղախ պատանու հանդիպումները անտառի հսկայի հետ: Թայց կարդալուց հետո արկածների մանրամասները մոռացվում են, դրանցից միայն մեկը ընդհանուր տպագործություն է մնում, հովվի խորտակված սիրո զգացումն անշեց մնում է ընթերցողի սրտում, որպես հարագատի վիշտ:

Մանկությունն ու պատանեկությունը նախա-

Հեղափոխական Հայաստանի լեռներում անցկացրած Անանյանի համար անմար է անցյալի հայ գյուղացու շարքաշ կյանքի պատկերը: Քիչ չի պատահում, որ նա ժողովածուի նոր մարդկանց մասին գրված պատմվածքները ընդմիջի հին օրերի հուշով, որտեղ զվարթ ոճը տեղի է տալիս մի մտերմիկ թախծի, որտեղ նրա տողերը դառնում են հանդարտ ու ծանր, տիտոր ու կսկծալի: Այս տեսակետից հրաշալի օրինակներ են «Մանր ձմեռը», «Ոսկեհատը» և այլն:

«Մանր ձմեռը» պատմվածքում ևս Անանյանը չի մոռանում որսորդական արկածը, բայց այստեղ ևս ավելի էականը հենց բուն «ծանր» ձմռան նկարագրությունն է, հայ գյուղացու տառապանքի նկարագրությունը:

Եղբայրասպան պատերազմները դեռ չեն վերցացել: Մեկի որդին է սպանված, մյուսի եղբայրն է հաշմանդամ ընկած տանը: Գյուղացին զգվել է հողից ու ցանքից, որովհետև եղածը տանում են մառզերիստները, իսկ հազար ու մի տանջանքով սարերից բերած խոտը տրորում ու միջին տրտինգ են տալիս խմբապետական «փրկարար» ջոկատների ձիերը: Մյուս կողմից ձմեռը երկարում է, անասունների կերը վերջանում: Լկված գյուղի համար սա հավասարազոր է մահվան: Այսպիսին է պատմվածքի կենտրոնական մոտիվը, որն անցնում է նույնիսկ առաջին հայացքից սյուժեի հետ առնչություն շունեցող պատմության միջով: Այդ

պատմությունն էլ «ծանր» ձմռան նկարագրությանը ներդաշնակ, սոցիալական երանգավորում ունեցող որսորդական պատմվածք է, պատահնի որսորդի տռաջին հիասթափության նկարագրությունը։ Պատահնին որտի թրթոցով տռաջին անգամ որսի է Ելնում, պատահականությունը նրան տղամարդ է դարձնում փորձված որսորդների աշբում։ Հանարքան չէ, — նա միայնակ սովորում է մի քանի պախրա, ուրախությունից ու հպարտությունից ճխում է նրա սիրտը... Բայց նրա երջանկությունը շուտով խամրում, չքանում է, որսորդը սարերից հովիտն է իշնում, ամպերից իշնում է հողի վրա և անմիջապես բախվում կոպիտ կյանքի հարցերին, որոնցից միամիտ պատահնին շատ բան դեռևս չի կարողանում հասկանալ։ Նա զարմանում է, երբ հարուստ ու անվանի Անդոնը արհամարհանքով մերժում է նրա խնդիրը, նա անզոր կատաղությամբ հարձակվում է ցարական շինովնիկների վրա, որոնք խլում են նրա որսը և իրեն էլ հետապնդում «կառավարության մարդկանց վրա հրացան բաշելու համար»։

Այսպիս, միմյանց հետ միահյուսվում են որսորդական դիպվածն ու սոցիալական մոտիվը։ Որսորդի այս ձախորդ արկածի տրամաբանական վախճանի նման է հնչում ունկնդրող զյուղացիներից մեկի հայտարարությունը՝ ուղղված երկրի տերերի դիմ։ «Էն ժամանակ էլ էին հարամում, հիմի էլ»։ Եվ ընթերցովը հասկանում է, որ «Մանր

ձմեռ» վերնագիրը տարվա եղանակին չի վերարկրում, այլ գյուղացու տառապլյալ վիճակին՝ նախահեղափոխական Հայաստանում:

Հենց այդ «ծանր ձմռան» զոհն է նաև «Ոսկեհատը» պատմվածքի հերոսութին, զեղանի անմեղմի մանկիկ, որ մնում է խարխով խրճիթի փլած առաստաղի տակ:

Իր պատմվածքներում Անանյանը մի առանձին սիրով է նկարագրում նախահեղափոխական դյուղի աշխատավորի կերպարը: Խավարի ու տգիտության, սնոտիապաշտության ու խարեռության մեջ խարխափող այդ մարդը, բարոյականության, ազնվության, աշխատասիրության հարցերում իդեալ է Անանյանի համար: Այդ կերպարի սոցիալական արժեքը պայմանավորվում է հենց նրա հոգեկան բարձր հատկությունների և դաժան իրականության հակադրությամբ:

«Փուլ գաս, ո՛վ մատուռ», «Այց մանկությանս», «Սալղաթ նիկալը», «Ճակատագիր» ու ժողովածուներում ցրված տասնյակ այլ պատմվածքներում անմիջականությամբ են նկարագրված նախահեղափոխական Հայաստանի աշխատավորները: Ամենուրեք դժվարին ու բարքարու է նրանց կյանքի ճանապարհը, չնայած նրանք օժտված են մարդկային գրեթե բոլոր բարեմտանություններով, չնայած աշխատասեր են, ձեռներից, կյանքի հարցերում փորձված:

«Փուլ գաս, ո՞վ մատուս»<sup>1</sup> պատմվածքում, որ հեղինակի եղբոր մահվան ցավու պատմությունն է, մեր առջև կանգնում են կարճ ու համառոտ տողերում կերտված երեք կերպար, հեղինակի հայրը՝ բարտաշ-որմնադիր Ստեփանը, մայրը, քեռի Արթինը: Այստեղ փորձության է ենթարկվում այս երեք մարդկանց հավատը եկեղեցու նկատմամբ: Մայրը, որ բազմաթիվ երեխաներ է կորցրել, մեծ հույս ունի սրբների պաշտպանության վրա: Նրա հոգին խաղաղվում, հանդարտվում է միայն այն ժամանակ, եթե իմանում է, որ մատուցը վերանորոգելու համար ամուսինը փող չի վերցրել: Սրբի օգնությունն ստանալու հարցում նա իրեն արտոնյալ է զգում, զյուղում մոլեգնող համաճարակը, նրա խորին համոզմամբ, պիտի անցնի իր երեխաների կողքով, չէ՞ որ ամուսինը լնդամենը մի քանի օր առաջ վերանորոգում էր սուրբ Գևորգի մատուցը:

Ստեփանն ու քեռի Արթինը սրբերի հետ ավելի քիչ հույսեր են կապում, Ստեփանն այդպես էլ ասում է կնոջը. «Տո՛ անխելք, ախր մեր հանդերուս ինչքան որ խաչքար կա ինձ ու Արթինի նման քարտաշներն են տաշել-շինել: Ախր դրանք մարդի շինած քաներ են, դրանք ի՞նչ են, որ ինչ պահեն իմ երեխանցը»:

Առողջ բանականությունը գյուղական ար-

1 Վ. Անանյան, «Որսորդական պատմվածքներ», պրակի, Հայոցեանքատ, Երևան, 1959, էջ 29—35:

Հեստավորին բերել հասցրել է միանգամայն տրամաբանական եղբակացության, բայց նրա մեջ կրոնական երկյուղը դեռևս լրիվ չի մարել: Այդ «սրբապիղծ» խոսքերը նա ասում է ոչ թե ընդգծելու համար իր անհավատությունը, այլ դրանով կնոջը վախեցնելու ու նրա միամտության վրա ծիծաղելու. «Հայրս բավարաված նրանով, որ աճ զցեց նախապաշտամած մորս սիրոք, իր հանդի քահքան ծիծաղեց»: Այսպես, բնական, առողջ գատողությունը, այնուամենայնիվ, չի կարողանում հաղթել, Ստեփանը գնում է վերանորոգելու մատուքը, իր սիրեցյալ զավակի «խաթեր»: Այսինքն, նրա ենթագիտակցության մեջ դեռ մնացել է ասածո երկյուղը, դեռ մնացել է ինչ-որ անորոշ հույս, թե «սուրբը» կարող է զորավիր լինել իր զավակին:

Իսկ «սուրբը» խարում է, չի փրկում ո՛չ Արթինի աղջկան, ո՛չ Ստեփանի որդուն: Եվ խաթարվում է հավատը ոչ միայն Ստեփանի ու Արթինի, այլև սնոտիապաշտ մոր սրտում: «Սուրբ Գևորգ, ախր դու խոսք տվիր պահես-պահպանես իմ բալին» — դառնացած գանգատվում է նա ու նույնիսկ հասնում «սրբապիղծ» անեծքի. «Փուլ զաս դու, ո՛վ մատուռ, ոնց որ փուլ էիր եկել...»:

Հոգերանական այս անցումը անակնկատ չէ, այն պատճառաբանված է պատմվածքի գործողության ընթացքով:

Այստեղ ևս, ինչպես իր բոլոր հաջողված պատմվածքներում, հերոսների ներքինը վերար-

տաղրելով, Անանյանը նրանց տիպականացնում է՝ նաև արտաքին նկարազրի մի քանի թեև ժամ, բայց շափազանց ցայտուն ակնարկներով: Այսպիս, ընթերցողը Ստեփանի մասին իմանում է ոչ միայն այն, որ նրա համար թանկագին է գյուղական համայնքը, որ նա առանց նյութական ակնկալության, ձրի վերանորոգում է հանդամիջյան ճանապարհները, կամուրջները, օգնության հասնում հարեւաններին ու ծանոթներին, ոչ միայն իմանում է, որ նա քննուշ սիրով է կազմած իր գավակների հետ, այլև մի քանի մանրամասներից պատկերացում է կազմում նրա ուժի, լեռնականի հաղթարտաքինի մասին: Արթինի արտաքինի մասին ասված է միայն մի նախադասություն. «Եկավ բեռի Արթինը փոքրամարմին, կոշտացած ձեռքերով, մի աշքը միշտ բաց մի մարդ»: Եվ ընթերցողն արդեն պատկերացնում է այդ մարդուն, նրա ձեռներեցությունը, նրա ծանր աշխատանքը, նրա փոքր մարմինն ու մեծ սիրով:

Այսպիս, անցնում են պատկերները մեկը մյուսի հետեւից: Ահա սալդատ Նիկալը<sup>1</sup>, դիլիջանցի շոբանը ցարական բանակում: Արա ողբերգությունն ավելի փոքր չէ և նույնպես հասարակական խոր արմատներ ունի: Հաղիվ էջ ու կեսանոց այս փոքրիկ զրկածքում առկա է սոցիալական մեծ

1 Վ. Անանյան, «Արտորդական պատմվածքներ», պրտե., Հայոցհանրատ, Երևան, 1959, էջ 36—37:

ընդհանրացումը։ Անանյանը շի խոսում նիկալի հոգեկան ապրումների մասին, նա նույնիսկ մանրամասն չի նկարագրում ցարական բանակի զինվորի առօրյան։ Առաջնի մասին մենք գաղափար ունենք հեղինակի այլ պատմվածքներից, որոնցում տասնյակ հովիվներ են նկարագրված, երկրորդից Անանյանը վերցնում է միայն մեկ մանրամասնություն։ «Ցարական բանակում առաջին բանը, որ նրան չանում էին սովորեցնել, զա թագավորի ու նրա կնոջ անուններն էին իրենց տիտղոսներով։ Անունն օտար, լեզուն՝ օտար, տիտղոսն՝ օտար, դե ե՛կ, մտքումդ պահիր չոբան նիկալ»։ Ահա բուլորը։ Սարերի չոբանն, ի՞նարկե, չի կարողանում մտքում պահել այդ տիտղոսներն ու անունները, ու նրան ծեծում են մինչև խելադարություն։ Ընդհանրացումն ամեննեին էլ մեկ մարդու ողբերգություն չէ։ Այս պատմվածքում խոսքը մարդու, որպես բանական էակի, արժանապատվության ուժնահարման մասին է, ցարական բանակի անտառական կանոնների մասին։

«Ճակատագիրը»<sup>1</sup> պատմվածքում նկարագրվում է, թե ինչպես աղաթի, տիմար սովորության զո՞ւ է զնում մանկամարդ, զեղանի մի աղջիկ, որին պատահարար ամուսնացնում են ոչ նրա հավանած տղայի, այլ վերջինիս եղբոր հետ։

Նախահեղափոխական Հայաստանի աշխա-

1 Վ. Անանյան, «Արսորդական պատմվածքներ», որուե., Հայպետհրատ, 1959, էջ 38—42։

տավոր զյուղացիության վիճակի հետաքրքիր արտացոլումներ են Անանյանի գեղարվեստական մանրապատումները, որ նա պարբերաբար հրատարակում է որորդական պատմվածքների իր ժողովածուներում, «Մեր գյուղի հին մարդիկ» ընդհանուր խորագրի տակ: Ռւշագրավ նովելատիպ պատկերներ են սրանք, որոնցից յուրաքանչյուրի մեջ սեղմությամբ զծվում է մի ավարտուն կերպար և իր արտաքին նկարագրով, և ներքին, հոգեկան ինքնատիպությամբ: Այս համառոտ դիմանկարների մեջ Անանյանն ընտրում ու վարպետությամբ վերապատմում է առօրյա կյանքի այնպիսի մանրամասներ, որոնցում բացվում է ոչ միայն հերոսը, այլև նրա միջավայրն ու ժամանակը: Սրանցում նախահեղափոխական Հայաստանի լեռնային գյուղի բնակիչների աշխարհից կարված, կյանքին անհաղորդ վիճակը բնութագրելու համար Անանյանը շիդիմում երկարաշունչ ու մանրամասն նկարագրությունների, այլ ակնարկում է միայն մի-մի փաստ: Մարդը կորցրել է իր անունը, բոլորը նրան «Մելոնց Ամի» են կոչում ու երբ գյուղի քահանան ձննդյան մատյանով իմանում է, որ նրա անունը Պետրոս է եղել, ինքը, անվան տերն իսկ զարմում է («Մելոնց Ամին»): Ասատուրանց Դանիելը կյանքում ոչ մի երջանկություն չի տեսել ու աշխարհիս բարին ու շարը շափելու մեկ միջոց ունի միայն՝ տրեխացու կաշվի զինը. «Աշխարհը կրթանդվի, անպայման կրանդվի, չորս հարյուր մա-

սեթ եմ ավել մի ջուխտ տրեխացու առել, ի՞նչ տրեխացու, ոնց որ լվի կաշի...» («Ասատելքանց Դանիելը»): Ահա երրորդը, նույնպես սարերի չորան, որ կյանքում պրիստավի երես չի տեսել և առհանարակ չի տեսել որևէ քաղաքատիպ մարդ ու հենց այդ պատճառով ծեծվում է ու նույնիսկ բանտ նետվում, քանի որ զլիսի չի ընկնում խոնարհվելու պրիստավի առաջ («Պրիստավի մուտքը մեր գյուղը»): Վերջապես ահա պարսպի մյուս կողմում կանգնած մարդիկ, Տեր-Կարապետը, ընշաբաղց, շահամոլ քահանան, որ արհամարհանքով վանում է չքավոր գյուղացիներին, որովհետեւ նրանցից առատ աջհամբույրի ակնկալիքներ չունի: Ահա Աթոն, որ հարստացել է մերձավորին խաբելով, որը հսկայական հարստության մեջ ինքը հսկում է սեփական տնեցիներին, թե սրանք թաքուն բան չուտեն: Ահա շարշի Փիլոն, որի տպառիկների մատյանում գյուղացիների պարտքը եկարծ ժամանակում ճռւտեր է հանում, բազմանում» և այլն:

Մի ամբողջ աշխարհ է սա, մանրունքների մեջ խտացած մի ամբողջ կյանք, իր վաղանցիկ ու կարճատե ուրախություններով, իր հավերժական դասնություններով, կոլորիտով գծված մարդկանց շոշափելի կերպարներով, մարդիկ, որոնցից յուրաքանչյուրն ունի մտածելու ու գործելու իր եղանակները, իր միամիտ, կենսափիլիսոփիայությունը: Այդ առանձին-առանձին «կենսափիլիսոփիայու-

թյունների» ակունքն ի վերջո մեկ է՝ ծանր, անհալնելի վիճակը և նահապետական աղաթի «մարդկության» խորտակումը զրամատիրական հասարակության ծնած նոր հարաբերությունների հետեւանքով: Վերջին հանգամանքը բնութագրական է պատկերների այս շարքի բոլոր հերոսների համար ու ամենացայտուն կերպով ձեռկերպվում է «Աթոն» զրվածքում: Աթոնից խարվելով ու սնանկանալով մեռնում է ծերունի Արշակը: Բայց փողի կորուստը չէ, որ գետնում է լիռնական հոկային: Նրան ընկնդողը հավատի կորուստն է: Նրա հոգում մեռնում է հավատը մարդու նկատմամբ, հավատը, որ կյանքում ուժ է տվել նրան՝ մաքառելու բոլոր ձախորդությունների դեմ: Ահա թե մահվան անկողնում պառկած նա ինչ է ասում իր որդիներին ու թոռներին.

«Հարյուր տարի, էն ծմակի կաղնու պես, կանգնած էի, երեխեք ջան, ու ոչ սելավն է ինձ ա:եղահան արել, ոչ էլ պլուսս եմ ծռել քամու առաջ: Բայց նամարդ մարդն իմ մեջքը կոտրեց: Չանեք, թե մեր կորած փողի մասին հմ մտածում: Փողը հեշ, փողը ձեռի կեղտ է, էսօր կա, էգուց չկա: Իմ դարձն էն ա, որ աշխարհքը փշացել ա, մարդիկ դառել են խորամանկ, կեղծավոր, խարում են իրար, հարևանին տրորում են, իրանք բարձրանում: Էղ իմ մեջքը կոտրեց, երեխեք ջան...»:

Նոր, բուրժուական հարաբերությունների բնութագրումն ու դատապարտումն է սա՝ ասված

ծեր նահապետի բերանով։ Սակայն սրանից չի կարելի հանել այն սխալ հետևությունը, թե Անանյանը ջատագովում է զյուղացիական հետամնացությունը, ամբողջ հոգով նահապետական սովորությունների կողմն է, ինչպես կարդում ենք նրա պատմվածքների մասին զրած մի բանի զրախոսություններում<sup>1</sup>:

Չի կարելի զրողին շփոթել նրա երկերի հերոսների հետ։ Իջարկե, քննվող երկերում Անանյանի համակրանքը արշակների և ոչ թե աթոռների կողմն է, բանի որ վերջին հաշվով առաջինների ելակետը մարդու տղնվությունն է, հավատը մարդու նկատմամբ, մինչդեռ երկրորդների համար շկա ոչ մի սրբություն մարդկացին համակեցության կանոնների տեսակետից։ Բայց սա ամենեին էլ չի նշանակում, թե Անանյանի համար իդեալական է զյուղացիական հետամնաց, նահապետական միջավայրը, որ նա այդ հետամնացության ջատադովն է։ Բնդհակառակը, մանրապատումների շաբարքը ցույց է տալիս, թե որքան ճիշտ է մոտենում զրողը նահապետական կենցաղի ու բարոյակատիւթիւնին։

1. Տես, օրինակ Ա. Գրիգորյան, «Առվետական զրականության խորթ զիրքերի վրա», «Ավանդարդ», 7 ապրիլի, 1948 թ., Ա. Ղողարյան, «Գյուղացիական հետամնացության ջատագովումը», «Առվետական զրականություն և արվետ», 1948, № 3, էջ 146, զրախոսությունների գրված Անանյանի որտորդական պատմվածքների առաջին պրակի առթիվ։

նության, դնահատման հարցերին։ Մրանցում լսով  
է երեսոմ Անանյանի վերաբերմունքը հին գյուղի  
ու գյուղի «հին մարդկանց» նկատմամբ։ Պատմբ-  
վածքներից մի քանիսը հատկապես ուղղված էն  
նահապետական բարքերի դեմ, սրանցում խոսք  
էլ չի կարող լինել այդ բարքերի իդեալականաց-  
ման մասին, ընդհակառակը, պարզորոշ երեսոմ է  
հեղինակի հակակրանքը դրանց նկատմամբ, որ  
մարմնավորվում է այդ բարքերի զոհերի հանդես  
նրա տածած կարեկից ու սրտագին վերաբերմուն-  
քի մեջ։ Մի՞թե կարող է նահապետական բարքերի  
չատագովը լինել մի հեղինակ, որ արցունքն աշ-  
քերին է պատմում խավարի զոհերին, շարժադ Առ-  
նային, որին առանց կարծիքը հարցնելու ամուս-  
նացրել են անձանոթ երիտասարդի հետ, մինչդեռ  
դուան ճեղքից նա ուրիշին է տեսել ու այնուհետեւ  
հիսուն տարի երազել է նրան։ Մի՞թե այդ բարքե-  
րի գովերգման նպատակը կարող է հետապնդել  
մի այնպիսի պատմվածք, որտեղ սարերի հովիվը  
խոշտանգվում է հենց միայն նրա համար, որ գլխի  
չի ընկնում ժամանակին փափախը հանել ցարա-  
կան շինուվնիկի առաջ։

Բայց մենք խոսեցինք այս պատկերների հե-  
րոսների «կենսափիլիսոփիայության» մասին։ Այժմ  
տեսնենք, թե ինչպիսին է այդ կենսափիլիսոփիա-  
յությունը, մանավանդ, որ հենց զա է Անանյանի  
սիրո խայծը, այդ փիլիսոփիայության հետ հիրավի  
հաճախ համաձայնում է հեղինակը և զա էլ հենց

տեղիք է տալիս այն իշխար կարծիքին, թե նույնությունը:

Հետաքրքիր է, որ չնայած տառապագին կյանքին, չնայած կյանքի պատճառած անօրինակ շարշարանքներին, Անանցանի հերոսները ուրախ, լավատես մարդ է, օրինակ, «Աթոն» պատկերի հերոսներից մեկը՝ Սարոն: Բնորոշ է այստեղ Աթոնի ու Սարոնի հակադրությունը: Մինչ Աթոն «բացի ժամանելուց, զարմանալի շկամ մարդ էր, շէր ուզում, ոռ ուրիշի վրա արև կպշի, շէր ուզում, որ հարեանն ապրի: Վայ այն հարեանին, որ կհամարձակվեր լվացք անել ու շոր փոել այն օրը, երբ Աթոնի տանը լվացք ունեին:

Կրարձրանար մարազի կտորը, բութ մատր կիսրեր արծաթի գոտու տակ, ոտքերը լայն դրած՝ կոճղի նման կկանգներ ու բերանը բաց կաներ.

— Քեզ ասել շե՞մ, որ օրը լվացք ունենք զու շոր մի փսիլ, հե՞... էս տեսակ անամոթ կնանիք կրկե՞ն, տո ո՞ւր բոշենք, որ պրծնենք սրանց ձեռիցը: Թողեք էս զահրումար արել մեր լվացքը շորացնի, հետո զո՞ւր փոեցեք, էլի...»:

Սաքոն, ընդհակառակը, «ուտող խմող, քիֆ անող մարդ էր: Խոզեր էր պահում-շատացնում մինչև աշուն: Աշնանը բոլորն էլ մորթում էր բացի երկու մերունից, և ձմեռը հյուրասիրում էր ընկերներին ու բարեկամներին ու ինքն էլ հետները քիֆ էր անում»:

Առ է Ստրոցի կենսափիլիսոփայությունը, ուրախացիք, քանի որ կյանքի շարիքների դեմ պայքարելու ուրիշ ոչ մի միջոց չունես, զինջ հոգով ու չինջ աշքերով նայիք կարձատե կյանքիդ, հարազատներիդ ու մտերիմներիդ լավություն արտ, որովհետե այդ է մնում անցավոր կյանքից:

Լավատեսության ավելի ցայտուն արտահայտությունն է քեզի Մուկուշի «կենսափիլիսոփայությունը» («Լավատես մարդը»): Մուկուշը կյանքի ձախորդությունները դիմավորում է «բալքի նինց լավը դա էր» դարձվածքով: Սա էլ Մուկուշի դրահն է, այն վահանը, որի հետեւում նա պաշտպանվում է ձախորդություններից:

Անանյանը, իհարկե; Հի դատապարտում այսօրինակ կենսափիլիսոփայությունը, բայց նա շատ լավ է նկատում սրա պասսիվությունը և բացարում է դրա արմատները:

«Ենք էր Մուկուշ քեզու հայացքը աշխարհի մտսին, կյանքի մասին: Դա էր նրա փիլիսոփայությունը: Եվ դա նրան նոզեպես պահում էր շառվ լիքն այն աշխարհում»:

Այս պատկերները մի-մի լույլ օրինակներ են ցուցադրելու Անանյանի երկերի ոճական մի հիմնական առանձնահատկությունը: Խոսքը վերաբերում է ուրախ հումորի ու մեղմ թախծի այն յուրօրինակ միախառնմանը, որ դժվար չէ նկատել նաև մի քանի կլասիկ գրողների ու սովետահայ դրականության առանձին ներկայացուցիչների եր-

կերում։ Հիրավի, նույն բանը չի՝ նկատվում թու-  
մանյանի «Մերոնք» շարքի պատմվածքներում,  
նույն ողբերգական ու միաժամանակ զավեշտա-  
կան կերպարը չէ՝ քեռի Խեշտնք։ Բակունցի նովել-  
ների զավեշտական իրադրությունների տակ թաք-  
նված թախիծը չէ՝ արդյոք, որ նկատում ենք Անան-  
յանի ստեղծագործության մեջ։ Ու եթե այդ այդպիս-  
է, ապա այս հարցում չի՝ արտահայտված արդյոք  
հայ ժողովրդի դարավոր տառապալից կյանքի  
պատմությունն ու լավատեսական այն հզոր շիթը,  
որ մեր ժողովրդին բերել է օրերիս պայծառ իրա-  
դրությունը։ Այլ խոսքով, սա այն ազգային տրա-  
դիցիան է զեղարվեստական գրականության մեջ,  
որ զարդացրել են կլասիկները, որ խոր հետք է թո-  
ղել նաև Անանյանի ստեղծագործության վրա։  
Առաջին հայացքից զուտ ձևական մոմենտ թվա-  
ցող այս երեսուցիթը, իրականում խոշոր նշանակու-  
թյունի ունի զրոյի ինքնությունն ու նրա ստեղծա-  
գործության վրա անցյալի տրադիցիաների ունե-  
ցած աղքեցությունը բնութագրելու տեսակետից։

Դառնանք Անանյանի մանրապատումների ո-  
ճական առանձնահատկությանը, որ առկա է նաև  
նրա մյուս ստեղծագործություններում։ Այս տեսա-  
կետից խորհրդածությունների ավելի շատ նյութ  
է տալիս «Գրազ» պատմվածքը։ Իր բնույթով զա-  
վեշտական երկ է սա, որի մեջ և՛ իրադրություն-  
ները, և՛ հերոսների խոսելածեր կոմիկական են։

Այսաեղ ամբողջ հատվածներ կան, որ չի կարելի կարդալ առանց ծիծաղի, սակայն նույնիսկ այս բնդանուր ուրախ ֆոնի վրա զգացվում է թափիծը, ճեղինակի խղճահարությունը իր հերեւնիքի նկատմամբ: Ընթերցողը ծիծաղում է քաղցածանց Համբարձումի վրա, բայց և միաժամանակ իմանում, որ հողի այդ աշխատավորն անցյալում կուշտ ուսելու հնարավորությունից զրկված է եղել և դա է, որ նրա աշքերի մեջ պահել է տիրության խրդակի արտահայտությունը: Ընթերցողը համակրում է նրան, չնայած նրա ընդգծված արատին՝ շատակնրությանը:

Ամենուրեք, խոսելիս լինի ինքնաներշնչման, զյուղացու լավատեսական կենսափիլիսոփիայության, նրա դժբախտ սիրո, թե նույնիսկ նրա օրհասական տառապանքի մասին, Անանյանը թափուտ պատմության տողամեջերում շաղ է տալիս հումորի շողջողուն հատիկները:

Այսպիսով, Անանյանի հիշյալ պատմվածքների ու մանրապատումների հանրագումարը տալիս է նախահեղափոխական լեռնային Հայաստանի պատկերը: Կրկնում ենք, այդ Հայաստանը Անանյանի իդեալը չէ, ընդհակառակը, այն ամբողջ թախիծը, որով ներծծված են նրա այս տիպի երկերը, պայմանավորվում է խոր հակակրանքով, որ նա տածում է նախահեղափոխական Հայաստանի իրավատեր դասակարգերի և պետական կարգի նկատմամբ: Բայց Անանյանն այս երկերում խոսում է

թեկուզ և նահատական աշխարհընկալման, բայց  
բարձր բարոյականության տեր մարդկանց, իր հա-  
րադատների, իր մանկության ու պատանեկության  
օրերի մտերիմների մասին ու բնականաբար, սերն  
ու կարոտը հզոր ուժ էն գառնում այս երկերի մեջ:  
Այդ սերն ու կարոտը, միահյուսված բնության  
սքանչելի պատկերների հետ, հատուկ երանգ էն  
տալիս, շնչավորում էն զրողի խոսքը: Սերը, կա-  
րոտը, զվարթությունն ու թախիծը և առհասարակ  
որևէ զգացում, Անանյանը շի կարող պատկերել  
առանց սուբյեկտիվ անմիջականության: Դա նրա,  
որպես զրողի, կարեոր առանձնահատկություննե-  
րից մեկն է: Հենց զրանով էլ պիտի բացատրել, որ  
թնաղատությունը երբեմն շփոթել է Անանյանի  
ու նրա հերոսների աշխարհայեցողությունը: Երկի  
զաղափարն ու հերոսի զգացումը քեկելով սե-  
փական սրտի մեջ, Անանյանն այն մատուցում է  
սքանչելի հուզականությամբ: Սա զեղարվեստա-  
կան գրականության հիմնական գծերից մեկն է,  
այսպես ևն եղել բոլոր իսկական գրողները: Այս-  
պես է Թումանյանը, այսպես է Բակունցը, Թու-  
մանյանի տրաղիցիայի առաջին շարունակողներից  
մեկը:

Մարդկային բարձր զգացումների, սիրո, կա-  
րոտի այսպիսի վարակիչ արացոլումը պատիվ  
է բերում յուրաքանչյուր զրողի և մեր օրերում  
շաղկապվում է սովետական մարդու բարձր հու-

մանիզմի հետ, դառնում նրա արտահայտման ձևերից մեկը և առհասարակ գեղարվեստական պրականության ապրեցնող կենսահյութը:

#### IV

«Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, առաջին իսկ օրը զիմում ներկայացրի կամավոր կերպով ուղմաճակատ մեկնելու: Մասնակցեցի Հյուսիսային Կովկասի կոփներին որպես զինվորական թղթակից, մամուլում նկարագրեցի 409 և Թամանյան դիվիզիաների հայ մարտիկների հերոսությունները»:

Այսպես է զրել Անանյանն իր ինքնակենսապատճյան մեջ:

Անանյանի պատերազմի տարիների կյանքն ու զործունեությունը հար և նման է մեր բազմաթիվ զինվորական թղթակիցների կյանքին ու զործունեությանը: Մի ձեռքում հրացան, մյուսում մատիան ու բլոկնոտը. նա օրեր ու ամիսներ քայլում է ուղմաճակատի առաջավոր զծերում, շարքային զինվորների հետ քնում խոնավ խրամատներում, մարտի կարճատև դադարների ժամանակ ուտում զինվորական կաթսայիկի ճաշը ու շտագ-շտագ թղթին հանձնում իր առաջին ուղարվությունները մարտաղաշտից: Այդ ժամանակ նա չի էլ մտածում ուղմաճակատային թերթին ուղարկ-

վող նյութի ժանրային առանձնահատկությունների մասին, ակնարկ է իր գրածը, թե պատմվածք, թե նամակ, միևնույնն է։ Կարեորն այն է, որ հուզի ընթերցողին, վասի հայրենասիրությամբ, հերոսության ու արդար վրեժի զգացում առաջացնի նրա սրտում։ Հայրենական Մհծ պատերազմի ժամանակ այդպիսի նյութեր շատ են գրվել, ավելին, փաստորեն ստեղծվել է մի յաւրօրինակ գեղարվեստական գրականություն, այսպես կոչված օպերատիվ ժանրերի գրականությունը, որը արժանի է լայն քննարկման, քանի որ չնոյած դրա փութեասությանն ու հրատարակաւթյանը, դրա մեջ բնդհանուր գծերով արտացոլվել է ուազմաճակատի իրադրությունն ու սովետական մարդու կերպարը։

Հենց այս տիպի երկեր են 1942—1944 թվականների ուազմաճակատային իրադրության արտացոլմանը նվիրված Անանյանի երկերը, որոնք ժամանակին տպագրվել են ուազմաճակատային Ահրթերում, իսկ 1946 թվականին վերահրատարակվելին «Մարտի դաշտերում» խորագիրը կրող ժողովածուի մեջ։

Դրանք առաջին հերթին գրողի անմիջական աղավարություններն են կոնկրետ, կենդանի մարդկանց մասին, այնպիսի մարդկանց, որոնց սիրողործությունները ինքնին վիստական են։ Սրանցում Անանյանը շի աշխատել կերպավորել իր հերոսներին, ոչինչ շի ավելացրել նրանց վարրագծի մեջ։

Բայց սա չի նշանակում, որ այդպիսի երկերի ստեղծումը չի կապվում ստեղծագործական պրոցեսի հետ:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե զժվարչէ կովի թոհուրոհի մեջ առավել խիղախ, առավել հայրենասեր, առավել ազնիվ մարտիկին զտնելն ու նրա «առօրյան» նկարագրելը: Մակայն դա այնքան էլ հեշտ բան չէ, եթե նկատի ունենանք ժանրի շնորհատիվությունն ու այն սուլ ժամանակը, որում զինվորական թղթակիցը պարտավոր է ոչ միայն տեսնել առանձնակին (ու միաժամանակ տիպականը), այլև քիչ թե շատ զրտկան զեղարվեստական ձև տալ իր նյութին:

Մյուս կողմից, զեղարվեստական զրտկանության մեջ հերոսը կերպավորվում է իր բնավորության ու վարքի ոչ բոլոր զծերով (ի դեպ, նրա բնավորությունը ևս խորապես ուսումնասիրելու ոչ ժամանակ և ոչ հնարավորություն կարող էր ունենալ զինվորական թղթակիցը), ուրեմն իր ընտրած հերոսի բնավորության ու վարքագծի մեջ նաև պիտի տեսնի այնպիսի «մանրունքներ», որոնցով բացվի հերոսի հոգու հնարավորին չափ լայն ու խոր պատկերը: Հենց այդ «մանրունքների» ընտրության ու տիպական նկարագրության մեջ էլ հաճախ պիտի որոնել այս տիպի երկերի հաջողության կամ անհաջողության գաղանիքը:

Ստեղծագործական այս մոմենտների տեսակետից Անանյանի պատերազմական ակնարկները,

նամակները, պատմվածքները բռնել են ժամանակի քննությունը: Ընդհանուր հերսականության մեջ, որպիսին էր սովհատական մարդկանց մաքառամբ, Անանյանը կարողացել է նկատել տուվել առանձնահատուկ հերսության դրվագները, առանձին անհատների կատարած սիրազործությունները, իսկ այդ անհատների վարքագծի մեջ տեսել ու որսացել է նրբերանգներ, որոնցով նրանք սարբերվում են նույն զինվորական զրատները հագած, նույն զենքով զինված, հագում նույն հայրենասիրական հուրն ունեցող իրենց բնկերներից:

Ելև ահսակեափց հետաքրքիր է Անանյանի: «Առաջին մարտը» ակնարկը: Սա սյուժետային կուռ կառուցվածք չունի, գոնե այնպիսի կառուցվածք, ինչպիսին նկատում ենք Ճանոսպարհորդական և այլ տիպի նոթագրությունների մեջ: Բայց միաժամանակ այսակեզ առկա է զործովություն զարգացման մի ներքին տրամարանություն, որ համընկնում է մարտական զործովության զարգացման տրամարանության հետ: Մարտն ունի իր մակընթացություններն ու տեկատվությունները, բնդհանուր օրինաշափությունը, սա էլ փաստորին հանդիսանում է ակնարկի սյուժետային զիծը: Սակայն մարտ է մզում մի ամբողջ դիվիզա, ավելի քան տասհազար մարդ, եկ ու զրանց մեջ չոկիր ամենախիզախին, եկ ու զտածդդ մարտիկի մեջ բնդդիր նրա բնավորության ամենաբնորոշ զիծը:

ընդ որում ոչ թե հայտաբարություններով, այլ առօրյա «մանրունքների» նկարագրությամբ:

«Ես չեմ նկարագրելու կավի ընթացքը,— զրում է Անանյանը,— Այժմ, երբ դեռ նոր և ուշքի եկել աճեղ պայմանից և առաջին մարտն իր թողած անթիվ-անհամար պատկերներով խռնըվել է իմ ուղեղում, իմ հոգում—այդ խառնիճաղանց պատկերների մեջ վեր են ելում. մի քանի խիզախ երիտասարդների անմոռաց կերպարները»<sup>1</sup>:

Տեսնենք, թե ովքեր են այդ, «մի քանի խիզախ երիտասարդները», նրանց մեջ ինչն է զրավել Անանյանին և այն որ «մանրունքներով» է հեղինակը արտացոլել սրանց հոգու տիպական զծերը:

Ահա երկու կապավոր: Դրանցից մեկը նոր է մարտական մկրտություն ստանում, մյուսը վագուց է մկրտվել: Այն, որ մարտերում արդեն եղել է «վեր քաշեց ընկերոջը և իր շինելը փոեց նրա տակ: Գրեթե կոպտաբար, առանց ցերեմոնիայի:

Սա երեխայի նման հնազանդվեց:

— Բա դո՞ւ, — բովոքելու թույլ փորձ արավ:

— Ես պինդ եմ, — խստությամբ ընդհատեց ընկերը»:

Իջարկե, մարտական ընկերության մասին կարելի է ավելի երկար զրել, կարելի է ավելի զե-

1 Վ. Անանյան, «Մարտի դաշտերում», 1946, երկան, էջ 4:

ղեցիկ գրել, բայց տվյալ դեպքում Հեղինակին նպատակն ու հնարավորություններն ուրիշ են:

Ահա մի խոհարար, որ ահռելի մարտի մեջ չի կորցրել «ուրախ տղայի» իր բնավորությունը և նույնիսկ խփված ժամանակ կատակը ունէ: Ահա մի անփորձ զինվոր, որ առաջին անգամ վիրավորվել է, և հրամանատարի հորդորանքով «սիրտը հովացնում է» Հիովերին հայհոյելով: Ահա մի մարտիկ, որ ոտքի վերքն է փաթաթում, բայց հրամանատարի կարգադրությունն ստանալով, զցում է փաթաթանները և կազալով շտապում հրամանը կատարելու: Ահա մի նիհարիկ սանիտար, որին, հակառակի նման, բախտ է վիճակվում առաջավոր զծից դուրս բերելու ամենահաղթանգամ վիրավորներին:

Մրանք՝ մարտական առօրյայի «մանրունքներ են», սրանցով հեղինակն, իհարկե, չի ամբողջացնում, չի կերպավորում ակնարկի պերսոնաժներին, բայց սրանցում արտացոլվում են նրանց հոգեկան աշխարհի ամենացայտուն զծերը, և այս բոլորի հանրագումարը, ի վերջո, խսկապիս տալիս է Սովորական բանակի մարտիկի հավաքական կերպարը:

Այսպիս է յուրաքանչյուր տկնարկ: Մեկի մեջ Անանյանը նկարագրում է այն խիզախին, որ կարողանում է իր սրտի մեջ խեղդել ինքնապաշտպանության բնական սարսուը և հակատանկային հրացանից առաջինը հաջող կրակելով թշնամու

տանկի վրա, ինքնավստահություն ներշնչել ընկերներին։ Մեկ ուրիշ ակնարկում պատմում է Հոյժ ժողովրդի անձնուրաց զավակ Հունան Ավետիսյանի սխրագործությունը՝ անպաճուցք տողերով։ Հերոսի կնոջը հասցեազրած մտերմիկ նամակի մեջ։

Պատմվածքների ու ակնարկների այս շարքի մեջ մի քանիսն առանձնանում էն իրենց մշակվածությամբ ու գեղարվեստական առանձնահատկություններով։ Այդպիսիները հեղինակը վերահրատարակել է նաև հետագայում, որսորդական պատմվածքների ժողովածուների մեջ։ Այդպիսիներից են «Հայրենի թուփը», «Անձնուրաց սեր», «Գնդացրին ջուր հասցրեք» և այլն։

Սիմվոլիկ է «Հայրենի թուփը» փոքրիկ պատմքվածքը։ Այն արտացոլում է Հայրենասիրության վեհ զգացումը, որ ոգեշնչում է Սովետական բանակի մարտիկներին, տանում դեպի անձնազոհություն ու սխրագործություն։ Անանյանն այստեղ ևս օգտագործում է իր որսորդական պատմվածքներում այնքան հաճախ հանդիպող գեղարվեստական սիմվոլիկայի հնարանքը։

Նկարագույնը մի փոքրիկ թոշնակ է, որ կավի թոհուրուծի մեջ, արկերի ու զնդակների տարափի տակ անսասան մնում է իր «վաթանում», իր հայրենի թփի վրա։ Ահոելին ու անսովորը շեն՝ կարողանում ընկճել նրան, նա շի նահանջում իր թփից, որովհետև դա իր հայրենիքն է։

«Ես նորից թիվի առկ մտավ,—ասում է կոմիսարն իր մարտիկներին, բայց հավատացնում եմ ձեզ, ոչ մի ուժ նրան չի հանի այնտեղից։ Կառնաշող այդ թուփը նրա հայրենի տունն է։ Մեր առաջ ձգվող այս սքանչելի հովիտը, իր թփուտներով, իր արծաթափայլ զիտակով, իր ծաղկավետ մարդագետիններով նրա հայրենիքը։ Այստեղ է ծնվել նա, այստեղ է կորցրել իր տմունուն, իր սիրասուն ձագերին։ Այստեղ հախրել է նա ջինչ օղում, ճովողել ու խնդացել իր սիրուն, սիրուն ձագերի հետ։ Նրանք չկան, այս հովիտը նրանց պերեզմանն է... Թող պայթեն արկերը, թող երկնից ուումք ու հուր թափի թշնամին, նա չի թողնի իր՝ հարազատների զերեզմանը, նա չի հեռանա իր քաղցր վաթանից, իր հողից, իր ջրից, զանդուրայդ թփից, որի սազարթների մեջ ծնվել ու մեծացել է ինքը...»<sup>1</sup>։

Դժվար չէ զլխի ընկնել, որ այստեղ նպատակն ամենեին էլ փոքրիկ թաշնակի բարքի նկարագրությունը չէ և ոչ էլ նրա բնասիրության դովաբանությունը։ Թոշնակը սիմվոլ է միայն, որով հեղինակը բացահայտում է սովետական մարդկանց անձնազոհ հայրենասիրությունը, որը բնազդական չէ, այլ միանգամայն դիտակցական բարձր մի զգացում։ Ամբողջ պատմվածքը գրված է հետեւյալ ընդհանրացնող տողերի համար։

1 Վ. Անանյան, «Մարտի դաշտերում», 1946, երեսն, էջ 16։

«Իսկ մենք, որ թաղեցինք մեր ընկերներին  
այս հոգում, մենք, որ դարնան առաջին ծիլերը  
ներկեցինք մեր արյունով, մենք, որ ծնունդն ենք  
այս հողի, այս ջրի և մեր հոգու բոլոր թելերով  
կտպված ենք մեր վաթանին—շունե՞նք արդյոք  
ավելի մեծ սիրա, քան այս փոքրիկ էակը...»<sup>1</sup>:

Առաջին հայացրից այս պատմվածքում կտ-  
րող է նեղ թվալ հեղինակի հասկացողությունը  
«Հայրենիք» դաղափարի մասին—սեփական հար-  
կը, վաթանը, հայրենի հողը, ահա թե ինչն է շեշտ-  
վում այստեղ:

Բայց այդպիս է, եթե այս փոքրիկ պատմր-  
վածքը կտրելու լինենք Անանյանի երկերի ընդհա-  
նուր շղթացից և զիաենք առանձին: Մինչդեռ այն  
բոլորովին այլ հնչեղություն է ստանում ընդհա-  
նուր շղթացի մեջ: Բանն այն է, որ մի քանի էջա-  
նոց այս երկում Անանյանը նպատակ շի ունեցել  
բազմակողմանիունն վերարտադրել սովետական  
մարդու հայրենասիրության մասին իր ունեցած  
դաղափարը:

Անանյանը լավ է հասկանում, որ մեր մարդ-  
կանց հայրենասիրությունը շատ ավելի լայն ու  
խորն է, որ այն շի կապվում սոսկ հայրենի տան,  
սեփական վաթանի պաշտպանության հետ, այդ  
պեպում անհասկանալի կմնացին Հունան Ավե-

1 Վ. Ահանյան, «Մարտի դաշտերում», 1946, Երևան,  
էջ 16—17:

ախայանի նման Հերոսների սխրագործությունները  
հայրենի հողից հաղարավոր կիլոմետրեր հեռու,  
ուղմաճակատի տարբեր հատվածներում։ Անան-  
յանի մարտական ակնարկների ու պատմվածքնե-  
րի ընդհանուր շղթայի մեջ պիտի որոնել նրա  
ընդհանրական հասկացողությունը հայրենասիրու-  
թյան ու գրա արտահայտման տարբեր երանգների  
մասին, իսկ այս փոքրիկ երկում զժված է մեծ դա-  
դափոքրի մէկ երանողը ևիտյն։

Այդ նույն զագափարի արտահայտման մեկ  
այլ երանգն է զժված «Անձնուրաց սեր» պատմը-  
վածքում, որի վերամշակված տարբերակը կար-  
դում ենք որսորդական պատմվածքների հինգե-  
րորդ գրքում։ Այստեղ էլ նկարագրվածը միայն մի  
դիպաված է, երկու մտերիմ մարդկանց ընկերասի-  
րության փորձությունը մարտական բարդ իրա-  
դրության մեջ։ Դրանցից մեկը թշնամու կրակային  
կետերը ոշնչացնելու նպատակով, անձնազոհաբար  
իր վրա է հրավիրում սեփական հրետանու կրակը։  
Սա սովորական մարդու հայրենասիրության դր-  
սեորման ձևերից մեկն է։ Բայց պակաս հայրենա-  
սեր չէ երկրորդ ընկերը, որը սրտի կսկիծով կա-  
տարում է ընկերոջ պահանջը, կրակն ուղղում է  
նրա վրա։ Հեղինակն այդպես էլ ասում է հերո-  
ոին։

«Բայց դուք ավելի անձնուրաց եք, մայոր, չկա-

ավելի մեծ հերոսություն, քան հանուն հայրենիքի սրտակից ընկերոջ վրա կրակելը»<sup>1</sup>:

Ե՛վ կյանքը, և՛ ընկերասիրությունը, և՛ իր ու սեփական ընտանիքի բարօրությունը, ամեն ինչ հայրենիքի համար, քանի որ հայրենիքի աղատությունն ու երջանկությունն է պայմանավորում մարդու համար ամենաթանկն ու նվիրականը: Սու է հիմնական եղբակացությունը, որ հանգում է Անանյանի հապճեպ, բայց սրտի արյունով գրած երկերի այս շարքից: Այս էլ հենց այդ երկերի ուժն է, սրանով էլ հենց զրանք կատարել են իրենց մարտական օպերատիվ դերը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ:

\* \* \*

Հայրենական Մեծ պատերազմից հետո Անանյանը ձեռնարկում է ակնարկների ու պատմվածքների մի շարք, որոնցում փորձում է արտացոլել հետպատերազմյան սովետահայ գյուղը՝ իր առօրյա հոգսերով, իր մարդկանց անձնազո՞հ ու ստեղծարար աշխատանքով: Չի կարելի ասել, թե ակնարկների ու պատմվածքների այս շարքն իր որոշակի դերը չի կատարել հետպատերազմյան գյուղի կյանքն արտացոլելով: 1947 թվականին Հրատարակված «Պատերազմից հետո» ժողովածուի

1 Վ. Անանյան, «Որսորդական պատմվածքներ», պրակե., Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 258:

ակնարկները, որոնց մեծամասնությունը նախօրոք տպագրվել է սեսպուրլիկայի պարբերական մամուլում, իրենց ընդհանրության մեջ պատկերում են ժամանակակից լեռնային զյուղի առօրյան։ Ընթերցողը տեսնում է սոցիալիստական կյանքի առաջավորներին, հաղորդակից է լինում նրանց պայքարին՝ հանուն զյուղատնտեսության շեշտակի վերելքի, տեսնում է դյուղում ծավալված շինարարության, վերափոխման, վերակառուցման աշխատանքների պատկերը։

Սակայն այս բոլորով հանդերձ, այդ երկերը մեծ մասամբ գեղարվեստական արժեք չեն ներկայացնում, զրանք ժամանակին իրենց դերը կատարելով, փաստորեն մոռացվել են և, իհարկե, չեն կարող մտնել Անանյանի ստեղծագործության լավագույն նմուշների շարքը։

Հիշյալ ակնարկները ժամանակին եւ շատ ավելի պրոպագանդիստական նպատակներ են հետապնդել, քան գեղարվեստական։ Նույնը չի կարելի ասել «Հարց զինվոր որդուն», «Սրջաձորից եկած մարդը» և «Ֆերմայի մարդիկ» (1951 թ.) վիպակների մասին, որոնք նույնպես չեն դասվում Անանյանի լավագույն երկերի շարքը։ Սրանցում կան առանձին գեղեցիկ կտորներ, բնության զրավիչ նկարագրություններ, Անանյանին հատուկ հումորի և համով պատմելու հնարանքների նմուշներ, բայց իրենց ամրողության մեջ այս երկերը գեղարվեստական մեծ արժեքներ չեն։ Ի՞նչն է

որանց անհաջողության պատճառը։ Առաջին Հերթին կեզծ իրադրությունները և զրանցում գործող պերսոնաժները, որոնք շատ հաճախ չեն խոսում սեփական ձայնով, փաստորեն չեն ապրում, չեն կենդանանում, ինչպես կենդանանում են Անանյանի լավագույն երկերի հերոսները։ Սրանցիդ ամենահետաքրքիրը թերեւ «Արջաձորից եկած մարդը» վիպակն է, որտեղ հեղինակը փորձում է զեղարվեստորեն կերպավորել մեր ժամանակի հովվին։ Բայց այդ վիպակի հերոսը՝ Ասլանը, որ բնածին երաժիշտ է, վերջին հաշվով ընթերցողին մի կարողանում համոզել, թե ինքը քսաներորդ դարի մարդ է։ Նրա խոռհերը, ապրումները, աշխարհաճանաշողությունը փոխ են առնված նախառնությունն, և այն էլ ծերացած լեռնականից, իսկ նրա քաղաքային արկածները հիշեցնում են Ստ. Զորյանի պարնիզեղի Պողոսի արկածները։ Այսինքն, Անանյանն այստեղ փաստորեն կտրվել է հողից, իրականությունից, մինչդեռ հողի, իրականության հետ ունեցած կապի մեջ է դիխավորապես նրա լավագույն երկերի հմայքը։

«Հարց զինվոր որդուն» և «Ֆերմայի մարդիկ» վիպակներում Անանյանին չի կարելի կը տամբել նկարագրվող նյութի թերագիտության մեջ։ Սակայն այստեղ էլ տարբելով գիտատեխնիկական մանրամասներով, դժբախտաբար, Անանյանը չի կարողացել խորանալ հերոսների փոխհարաբերությունների մեջ, ոճել նրանց կենդանի

կերպարները, ինչպես ասում են՝ բռնել կենսական երակը։ Կեղծ են այս երկերի կոնֆլիկտները, պերսոնաժները խոսափողեր են, որոնք ապրելու ու ապրեցնելու փոխարեն բարձրածայն մտորում են այս կամ այն հարցի մասին, գմտվում ինչ-որ թյուրիմացությունների համար, թյուրիմացություններ, որոնց մանր առօրյական շարժառիթները հնարավորություն չեն տալիս հեղինակին ընթերցողին հրապուրելու հերոսների կյանքով։

Ժամանակին սովետահայ դրաբննադատությունն անդրադարձել է Անանյանի այս տիպի սայթաքումներին։ Բարեբախտաբար դրանք որակ չեն կազմում տաղանդավոր գրողի ստեղծագործության մեջ և հարկ չկա առանձին պրադատումներ կատարելու սրանց թերությունները մեկ առ մեկ ցուց տալու համար։ Պիտի ավելացնել միայն, որ այս երկերում Անանյանը հեռանում է նաև իր լավագույն երկերի ոճական առանձնահատկություններից, մի բան, որ պակաս չի խանդարում նրան կյանքը յուրովի և գեղարվեստական խորությամբ արտացոլելու։ Այն ոռմանտիկ արկածայնությունը, ընությունը շնչավորելու այն հրաշալի ձիրքը, արտակարգ պայմաններում հերոսի հոգեկան կարողությունը փորձարկելու, նրա ներքին աշխարհը բացելու այն ունակությունը, որ Անանյանը հանդես է բերում իր լավագույն երկերում, սրանցում խամրում, մղվում են երկրորդ պլան։ Մինչդեռ այդ բոլորը բազմափեղկ բյուրեղի նման կրկին առ-

կայծում, շողշողում է նրա երկու ուրիշ ծավալուն  
զործերում՝ «Սևանի ափին» և «Հովազաձորի գե-  
րիները» վիպակներում:

## V

«Սևանի ափին» (1951 թ.) վիպակը սովետա-  
հայ առաջին հաջող ծավալուն արկածային երկն  
է: Այս առումով, կարելի է ասել, Անանյանը  
սկզբնավորող է սովետահայ գրականության մեջ:

Որսորդական արկածային պատմվածքները  
հող են նախապատրաստել ծավալուն երկի համար,  
թե՛ «Սևանի ափին», թե՛ «Հովազաձորի գերիները»  
վիպակների հերոսները որսորդական պատմվածք-  
ներից արդեն ծանոթ նույն դեմքերն են, բնախուզգ-  
ները, հովիվները, որսորդները:

«Սևանի ափին» վիպակը կազմված է երկու  
մասից, որոնք հեղինակն անվանում է գրքեր:  
Առաջին գիրքը վերանդրված է «Լեռնային լճի  
գաղտնիքը», երկրորդը՝ «Գիշ սարի գաղտնիքը»:  
Սրանք էլ իրենց հերթին բաժանվում են մասերի  
կամ գլուխների ու հնիթագլուխների, որոնք արկա-  
ծային վեպերին հատուկ խոսառմնալից ու երեմն-  
խորհրդավոր խորագրեր ունեն:

Լեռնային լճի՝ Սևանի ափին փոված է լճա-  
վան գյուղը: Այստեղ են ապրում վիպակի հե-  
րոսները՝ ծեր որսորդ Ասատուրը, պատանի բնա-  
խուզգներ Հասմիկը, Կամոն, Արմենը, Գրիգորը,

Աեթը, Արտուշը, կոլտնտեսության նախագահ  
Բագրատը, ուսուցիչ Արամը, որը միաժամանակ  
պարտիական կազմակերպության քարտուղարն է,  
և մյուսները:

Գյուղը տարիներ ու դարեր ապրել է լճի ա-  
փին, սակայն առանց ջրի՝ արտերն ու բանջարա-  
նոցները թողած պատահական անձրևների հույ-  
սին: Գյուղում տարածված է մի ժողովրդական լե-  
զենդ, թե տարիներ առաջ սարից առատ ջուր է հո-  
սել ու ոռոգել շրջակայքը, սակայն Գիծ սարի ըն-  
դերքում բնակվող վիշապներն ու դեերը կտրել են  
ջուրը, երբեմնի ծաղկած անդաստանը թողնելով  
պապակ: Գիծ սարի ընդերքում հաստատված դեե-  
րի ու վիշապների գոյության ապացուցն է հա-  
մարվել նաև այն տարօրինակ գոռոցը, որ ստեղ-  
ստեալ լսվում է սարի ստորոտում, մեծ լճի հարեա-  
նությամբ տեղավորված ճահճոտ Գիլլի լճից:

Բայց լեզենդը ճշմարտություն կարող է թվալ  
միայն գյուղի ամենահին մարդկանց, որոնց գի-  
տակցական կյանքի խոշոր մասը անցել է մինչև  
հեղափոխությունը՝ չարքաշ աշխատանքի, խավարի  
ու տգիտության մեջ: Բոլորովին այլ կերպ են մտա-  
ծում նոր սերունդի մարդիկ՝ Բագրատը, Արամը և  
հատկապես պատանի բնասերները, որոնք նպա-  
տակ են դնում բացել Գիլլի լճի գաղտնիքը:

Այստեղից էլ սկսվում է վիպակի արկածային  
սյուժեն: Պատանի բնասերները քայլ առ քայլ  
ուսումնասիրում են շրջապատը, բազմաթիվ բնա-

զիտական օգտակար դործեր են կատարում և, իհարկի, գտնում են նաև ջուրը, որ լեռան կատարի լճակից երկրի բնդերքով հոսում է ղեպի Գիլի լիճը: Նրանք փակում են սառերկրյա անցքը, ջուրը կրկին շուռ են տալիս ղեպի նախկին հունը և դարերով պապակված դաշտերն ու սարալանչերը ջրում:

Ահա այն ամենը, ինչ պատմվում է «Սևանի ափին» վիպակում:

Սակայն երկի հաջողության գաղտնիքը ոչ այնքան բովանդակության, որքան գեղարվեստական մատուցման եղանակի մեջ է: Կարևորն այս ղեպքում ոչ այնքան ինչն է, որքան ինչպես: Ինչպես է Անանյանը պատմում այս բոլորը, ինչպես է կարողանում հափշտակել ընթերցողին իրենց էության մեջ արտակարգ բան չունեցող: Հասարակ ղեպքերի նկարագրությամբ:

«Սևանի ափին» վիպակը կարդալիս ընթերցողի մեջ առաջացող առաջին զգացումը՝ պատկանանքն է հեղինակի իմացության նկատմամբ: Որսորդական պատմվածքներում բնության ու կյանքի այդ իմացությունը, թերեւ, այնպես շեշտված ձևով շի արտահայտվում, ինչպես այս վիպակում: Այնտեղ առանձին-առանձին դիպվածներ են, առանձին-առանձին դիտողություններ, խորհրդածություններ, նկատողություններ: Մինչդեռ այստեղ, ծավալուն երկում, հանդես է դալիս հեղինակի՝ բնության երեսը լինելությունը ու կյանքի խոր իմացությունը:

թյունը: Երևում է Անանյանի տքնաջան աշխատանքը նախքան ստեղծագործական բոնկումը: Ջգում ես, որ վիպակը գրելուց առաջ նա բազմաթիվ բնախուզական փորձեր է կատարել, ուսումնասիրել է իր հերոսների նախատիպերին, հոգեբանական այս կամ այն իրադրության մեջ հետեւ նրանց վարվելակերպին, խորամուխ եղել երկրի պատմության հարցերի մեջ, կազմել այն վայրերի քարտեզը, որտեղ գործելու են հերոսները, մանրամասն հետաքրքրութել հողի ընդերքի հանքատեսակների հատկություններով, նրանց ստացման ու մշակման եղանակներով և այլն: Այդ է պատճառը, որ «Սևանի ափին»-ը սոսկ արկածային վիպակ չէ. այլ միաժամանակ պոեմ բնության ու նրա հրաշալիքների մասին, ոգեշունչ խոսք մարդու ամենակարողության, մարդու հաղթանակի մասին՝ բնության դեմ նրա մղած պայքարում:

Բայց զաւնանք վիպակի գեղարվեստական առանձնահատկություններին: Կախ քննենք, թե կերպավորման որպիսի արվեստով է աշխատել հեղինակն իր հերոսներին բնութագրելիս:

Պատանի բնասերների խմբի ամենաակտիվ անդամներից մեկը... ծերունի Ասատուրն է: Ո՞վ է այս մարդը, ինչո՞ւ է Անանյանին հարկավոր եկել այսպիսի մեկը:

Մորուք Ասատուրը մեզ ծանոթ է դեռևս Անանյանի որսորդական պատմվածքներից. ընթերցողը նրա նման մարդկանց հանդիպել է «Մեր գյուղի

Հին մարդիկ» պատմվածքաշարքում։ Ասատուրին հատուկ է հենց նույն կենսափիլիսոփայությունը, որ տեսանք հիշյալ շարքի պատմվածքների հերոսների մեջ։ Ասատուրը հին աշխարհի վերջին ներկայացուցիչն է՝ իր անցած կյանքի նման բարդու հակասական։ Նրա մեջ Անանյանը խտացրել է մի շարք հետաքրքրական, երբեմն իրարամերձ հատկություններ։ Հնում հեղափոխությունից առաջ Ասատուրը զուրկ է եղել սեփական հողակտորից. վլումը պահել է որսորդությամբ։ Նրա ծրագրերն ու կյանքը երբեք չեն համաձայնել միմյանց հետ. անզուսպ երազող լինելով, Ասատուրը երեակայական, օդեղեն ամրոցներ է կառուցել իր համար, մինչդեռ կյանքում զրկված է եղել կուշտ ապրելու հնարավորությունից։ «Հեյ գիտի, քյասիթի ասոված, մի պուլիկ ոսկի գտնեի, էս աշխարհքի վրա մենք էլ կյանք տեսնեինք», — երազել է նա։ Բայց մարդավարի ապրելու այս անհույս երազանքը, համենայն դեպս, չի խաթարել որսկանին, իր կիսաքաղց կյանքում նա միշտ խորշել է «հարամ» զործից, չի կորցրել մարդկացին արժանապատվությունը և միամտաբար աշխատել է հարստանալ որսորդությամբ։

«Ամեն աշնան, հենց առաջին ձյունը գալիս էր թե չէ, որսկան Ասատուրն ուրախ ասում էր կնոջը։

«Կնիկ ջան, հիմի որ ապրեցինք»։

«Ինչո՞վ, ա՞յ լոպազ որսկան, որսով ո՞վ է

մարդ դառել, որ դու դառնաս...», պատասխանում էր կնիկը:

Ասատուրը տաքանում էր:

«Ախպեր, հաշվով չի՞՝ — զոսում էր նա, — դալի մորթին երեք մանեթ արժի՞՝ թի՞ չե՞... Որ ինչքան մեռած լինեմ, հո՞ շաբաթը երկու դալա կրոնեմ: Երեք ամիս, ամիսը չորս շաբաթ էղ քեզ կանի՛ տեսներկու շաբաթ: Ամեն շաբաթ երկու դալա, էղ քեզ արա՞վ օխտանասուներկու մանեթ: Էլ ինչ ես ուզում, համ կով առ, համ հաց առ, համ շոր առ ու քեֆ արա...»:

Կինը շանչ էր անում ամուսնու վրա ու ծիծառում:

Ամբողջ ձմեռը որսկան Ասատուրը շրջում էր լեռներում, ձեռ ու ոտ ցրախն տալիս ու միշտ էլ նրա հաշիվները սխալ էին դուրս դալիս. ամեն ձմեռ չորս-հինգ կղաքիսից ավելի չէր կարողանում բռնել, իսկ աղվեսի ու գայլի մորթիների համար գրոշներ էին տալիս: Սպանված այծյամների միսն էլ, ինչպես կարգն է, ծրի բաժանում էր հարևաններին:

Այսպես էլ ողջ կյանքում աղքատ մնաց որսկան Ասատուրը, մինչև կոլխոզ կազմակերպվելը»<sup>1</sup>:

Եվ ահա հեղինակը փորձության է ենթարկում ողջ կյանքում հարստություն ու մարդավարի ապրուստ երազած այս մարդուն: Ինչպիսի՛ բեր-

1 Վ. Անանյան, «Սևանի ափին», Երևան, 1953, էջ 221:

կրանքով, ակնածությամբ ու միաժամանակ երկյուղով է մոտենում ծեր որսկանը պատահաբար դտնված գանձին, ինչպիսի աճոելի տառապանց է կրում նա սիրտը քրքրող երկակի զգացումներից: Մի կողմից անձկալի երազի իրականացումը. նա աշխարհի ամենահարուսա մարդկանցից մեկն է, որ կարող է թուան բուժման համար միլիոններ առաջարկել. մյուս կողմից նա ինքն իրեն գող է զգում, մարդ, որը հափշտակել է հանրային սեփականությունը:

Հարստությունը խաթարում է ազնիվ որսկանի հոգին, նրա երբեմնի զվարթությունը խամրում է, սոսկալի տվայտանքների մեջ նա. կորցնում է հանգիստն ու քունը: Սա ոչ այլ ինչ է, քան եթե հնի ու նորի հակամարտությունը մեկ անհատի մեջ: Այս հակամարտության մեջ պիտի բացվեր և այսուղ է բացվում ծերունի որսկանի հոգին: Որքան էլ իր կյանքի խոշոր մասը Ասատուրն անց է կացրել սեփականատիրական հասարակության մեջ, այնուամենայնիվ, դանձը վերջնականապես չի շլացնում նրան, նա կարողանում է հրաժարվել դրանից: Գեղարվեստորեն խորապես պատճառաբանված այս քայլը ոչ միայն բնութագրում է հերոսին, այլև ստանում է խոշոր ընդհանրացման արժեք, հաստատում է հասարակական նոր մորալի հաղթանակը:

Սակայն Ասատուրի հոգին շատ ավելի լայն ու խորն է, նրա կյանքի միակ զգացումը, միակ

տենչը «մի պոլիկ» ոսկի գտնելու տենչը չի եղել։  
Նրան, ինչպես Անանյանի որսորդական պատմը-  
վածքների հերոսներին, միշտ ձգել, հափշտակել  
է անկաշկանդ, աղատ բնությունն՝ իր հարաշալիք-  
ներով, իր հարափոփոխ կյանքի գաղտնիքներով,  
բացատրելի ու անբացատրելի դիպվածներով։  
Հնում նա բնության մեջ որոնել է աշխարհի ան-  
արդարությունը գեթ մի պահ մոռանալու հնարա-  
վորությունը, բնությունը նրա համար փաստորեն  
եղել է աղատ, անկապանք կյանքի խորհրդանիշը։  
Յեկ հնարավոր է, որ նա չի էլ կարողացել խորու-  
թյամբ ըմբռնել այդ։ Բնությունը նրան գրավել է  
մերթ միամիտ, մերթ դաժան իր ճշմարտությամբ,  
իր անկրկնելի շռայլ գեղեցկությամբ, իր անբա-  
ցատրելի պատճառականությամբ, իր ներդաշնա-  
կությամբ, որի կախարդական ուժը անթիվ ծա-  
խորդությունների մեջ սփոփել ու անկոտրում է  
պահել նրա լեռնական հոգին։ Ասատուրն այդ  
բնության մի բեկորն է, ոացիոնալ հատվածը, որը  
սակայն, չի հասել ողջը լիովին հասկանալու կա-  
րողությանը։ Ճիշտ է, տարիների փորձը Ասատու-  
րին ինքնուս բնախուզը է դարձել, այն աստի-  
ճան, որ նա նույնիսկ զավեշտական վեճի մեջ է  
մտնում Դարվինի հետ, բայց միաժամանակ նա  
խորապես զգում է իր գիտելիքների անկատարու-  
թյունը և ակնածանքով խոստովանում։

«Հիսունութ տարի է կարդում ևմ բնության

զիրքը։ Կարդում եմ, կարդում, ոչ սկիզբ ունի, ոչ  
վերջ...»։

Այսպես ուրեմն, բնության մեջ ամեն ինչ չէ.  
որ կարողացել է կարդալ, հասկանալ անգրագետ  
որսկանը։ Նա բոլորի հետ միասին գերբնական  
ուժ է վերագրել շբացատրված երեսութներին,  
հրաշք է տեսել այնտեղ, որտեղ գիտելիքներն ու  
փորձը նրան հնարավորություն չեն տվել երեսութ-  
ների էությունը քննելու։ Բայց իմանալու ծարավը  
երբեք չի մարել նրա հոգում։ Ահա թե ինչն է կա-  
պում նրան՝ պատանի բնասերների՝ «գիտնական  
բալերի» հետ։ Այսպես է սկսում Ասատուրը։ Մյուս  
կողմից թեև անցել է հին ժամանակը, թեև նոր  
օրերում, նոր ժամանակներում նրա աշքերի առաջ  
շատ բան է փոխվել, շատ բան է բացատրվել, բայց  
ծերունի որսկանի սրտում, հարստանալու երբեմնի  
տենչի հետ միասին մնացել են նաև սնահավա-  
տության բեկորներ։ Նա վախճառելով է մոտենում  
իր պապերի, իր մի ժամանակվա հեղինակություն-  
ների զրած սահմանին։ Նա դեռ հավատում է լի-  
դինդին ու սարսում Գիլիի խորհրդավոր գոռոց-  
ներից։ Որպես իսկական զյուղացի, նա գերի է  
փաստերի արամաբանությանը, նա կարող է հա-  
վատալ միայն ուհալ, շոշափելի փաստին, այս  
առումով նրա աշխարհայացքի մեջ տեղի ունե-  
ցող հեղարեկման համար անփխարինելի բարե-  
նպաստ միջավայր է պատանի բնախույզների  
կուեկտիվը։ Եվ երբ զրբի վերջում կոտրվում է

նախկին Հեղինակությունների նկատմամբ ունեցած նրա հավատը, երբ ծերունի որսորդը հաղթահարում է իր վախը բնության «Հրաշքների» նկատմամբ, բնթերցողը հասկանում է, որ դա նոր մորալի մի նոր հաղթանակն է, զյուղի լուսավորության հաղթանակը:

Ասատուրի բնախուզական փորձը Անանյանն օգտագործում է ուսուցողական նկատառումներով։ Ծեր որսորդը պատահի բնասերների, ինչպես նաև վիպակի ընթերցողների համար ուղղակի կենդանի հանրագիտարան է, մի հանրագիտարան, սակայն, որ շի տալիս լոկ չոր ու ցամաք տեղեկություններ, այլ իր բնագիտական գիտելիքները երիտասարդ բնասերներին ու ընթերցողներին է հաղորդում հյութեղ, զրավիշ լեզվով, աշքերը կկոցած, ժամանով, բարությամբ ու օգտակար լինելու գեղեցիկ զգացումով, այդ է պատճառը, որ ընթերցողը հուզմունքով է կարդում այն էջերը, որոնցում նկարագրվում է, թե ինչպես մարդիկ իրավացիորեն մեղադրում են Ասատուրին հանրային սեփականությունը յուրացնելու ցանկության համար, փաստորեն ընկերական դատարանի առաջ են կանգնեցնում։ Ու թեթևացած շունչ է առնում, երբ ծերունին ազատվում է պատժից, երբ շրջապատողները հասկանում են, նրա հոգու տվայտանքն ու ներում նրան։

Օրսորդ Ասատուրի կերպարը լրիվ ու ամբողջական չէր լինի, եթի Հեղինակը նրան չկհնդա-

նացներ նաև նրա նահապետական էությունը բացահայտող մանրիկ զծերով ու արտաքինի թեթե-երդիմական նկարագրությամբ։ Ասատուրը աշխատավորական բարոյականության մարտնչող պաշտպանն է, այդ բարոյականության սոսկ մի արտահայտությունն է նրա որսորդական մեծահոգությունը. երբ նա խփած որսը բաժանում է հարեւաններին, դրա արտահայտությունն է նրա սերը անցած-գնացած ընկերների, բազ որսկանների նկատմամբ, նրա սերը պատանի բնասերների հանդեպ, որոնցից յուրաքանչյուրի համար նա միշտ պահած ունի որևէ բարի խոսք, որևէ նվեր։ Եվ վերջապես դրա հետ է կապվում նրա անմեղ պարձենելությունը. իր երբեմնի որսորդական սխրագործությունների համար, նրա լեռնականի պատվասիրությունը, որ նրան մերթ ընդ մերթ մզում է արդեն զուտ թատերական մաներա դարձած զործովության՝ ձեռքը դաշույնին տանելուն։ Այս ու նման մանրամասների հանրագումարը Ասատուրին դարձնում է բնթերցողի սրտին մոտ, հարազատ անձնավորություն։ Այսինքն՝ հեղինակը կարողանում է հերոսի բախտով շահագրգռել ընթերցողին, մի բան, որ գեղարվեստական երկի հաջողության շափանիշներից մեկն է։

Ասատուրի կերպարը չէ միայն, որ զծված է կենդանի ու վառ գույներով։ Երկի տարեց հերոսները շահաշված, թերես, Արամ Հակոբյանին, կինդանի կերպարներ են։ Մի երկու ստվերագծով

Անանյանը կարողանում է շնչավորել նույնիսկ մի այնպիսի էպիզոդիկ կերպար, որպիսին կոլտնտեսության նախագահ Բագրատն է։ Նրա սիրտը ավելի քիչ չի թրթում ջրի համար, բայց նա զգում է իր պատասխանատվությունը գյուղի հասարակության առջե, բանակից նա իր հետ քերել է կարգապահության զգացումը, որով կարողանում է զսպել սեփական ողենորությունը։ Նա պատանի բնասերներին հեռվից անհյուրընկալ, խիստ մարդ է երեսում, մինչդեռ դիտե ժպտալ, դիտե խորհուրդ տալ հրամանի ձեռվ ու բավարարել նրանց պահանջները, երբ համոզվում է, որ կոլտնտեսությանը ձեռնատու են նրանց ձեռնարկումները։

Կենդանի կերպարներ են նաև Սեթոյի մայր Սոնան և Մեսրոպը, որը նախկինում տիրացու է եղել։

Հանձին Սոնայի Անանյանը նպատակ է ունեցել ներկայացնել այնպիսի մարդկանց, որոնց մասին ընդունված է ասել, թե ախողան շունենալու դեսպոտ պատրաստ են վիճել սեփական զբլխարկի հետ։ Սոնայի կերպարը երգիծական ուժ է ստանում հատկապես «Շնչավոր և անշունչ թրիսեր» զլիսում, երբ նա, հակառակվելու իր համար էլ անբացատրելի ցանկությամբ, ինչպես ասում են ովիններով է դիմավորում թխսկան հավեր որոնող պատանիներին։

Այլ է Մեսրոպը։ Սա հնից եկած մարդն է, չին հանկացողությունների, չին հասարակական կար-

զի թարուն պաշտպանը: Սա է, որ չնայած իր վախ-  
կոտությանը և զգուշավորությանը, աշխատում է  
զյուղացիների սրտերում վառ պահել սնահա-  
վատքը:

Սակայն ամենաճետաքրքիրն, իջարկե, իրենք  
պատանիներն են՝ Կամոն, Հասմիկը, Գրիգորը,  
Արմենը, Սեբոն և Արտուշը:

Նույնն է նրանց նպատակը, նույնն է նաև այն  
միջավայրը, որում ճասակ են առնում նրանք:  
Բայց Անանյանը կարողանում է անճատականաց-  
նել նրանցից յուրաքանչյուրին, ամեն մեկի մեջ  
շեշտելով բնավորության ինքնատիպ դժեր:

Կամոն խմբի մեջ ամենախելացին չէ, այս  
տեսակետից շատ բանով նրան գերազանցում է  
նուրը, խոհական, ճողով բանաստեղծ և, խսկա-  
պիս ասած, ժամանակից մի փոքր վաղ ճասունա-  
ցած Արմենը: Բայց Կամոն խիզախ է, նախաձեռ-  
նող, չնայած փոքր-ինչ տաքարյունությանը, ան-  
սահմանորեն նվիրված ընդհանուրին ու զործին:  
Նրա այս ճատկություններն են, որ նրան դարձ-  
նում են խմբի զեկավար:

Սրամտության իր պաշտրի խոշոր մասը  
Անանյանը դրել է Գրիգորի արարքների ու խոսքի  
մեջ: Ինչպիս որսորդական պատմվածքներում ճե-  
ղինակը սովորություն ուներ ձեռք առնելու իր այս  
կամ այն հերոսին, իսկ երբեմն նաև ինքն իրեն,  
այնպիս էլ այստեղ Գրիգորն է ձեռք առնում ըն-  
կերներին և նույնիսկ ինքն իրեն, եթե զգում էր, որ

այդ կարող է զվարթացնել մարդկանց ու օգնել քնող-  
հանուր զործին: Իր պատմվածքներից Անանյանը  
Գրիգորի համար վիպակ է բերել նաև մի ուրիշ  
հատկություն՝ շատակերությունը, որ պատանին  
պարզամտորեն դիտում է իրքի տղամարդկացին  
առաքինությունը: Այս երկու դիմք միախառնված  
չերմ սիրո ու նվիրվածության հետ, որով Գրիգորը  
կապված է բնկերներին, այն հնարամտությունը,  
որ նա հանդես է բերում պատանի բնասերների  
արշավների ժամանակ, Գրիգորին դարձնում են  
թեև մի քիչ ծիծաղաշարժ, սակայն սիրելի կեր-  
պար:

Կամոյից, Արմենից, Գրիգորից բավականա-  
շափ տարբերվում են Սեթոն ու Արտուշը: Սրանք  
երկուսն էլ բնասերների խմբակի մեջ են մտնում  
«բարիկադի մյուս կողմից»: Երկուսին էլ սկզբում  
վիրավորում են բնասերների հաջողությունները,  
փառքը: Արտուշը պարզապես նախանձում է, իսկ  
պատանի բնասերները չեն կարողանում ճանա-  
պարհ գտնել դեպի նրա սիրտը: Ճիշտ այդպես  
նրանք միջոց չեն գտնում. նաև Սեթոյի հետ մտեր-  
մանալու, մինչդեռ վերջինս սոսկ նախանձից չէ,  
որ անբարյացակամ է նայում բնասերներին: Սեթոն  
սենուն նպատակ ունի, նա հանքաբան է, բնդ ո-  
րում այդ բնագավառում շատ ավելի գիտակ, քան  
կամոն ու նրա բնկերները, որոնք իրենք էլ գլխի  
շընկնելով, վիրավորում են ինքնասեր տղային:

Հետաքրքիր է, թե ինչպիսի ճանապարհ են

անցնում Սեթոն ու Արտուշը, մինչև բնասերների կոլեկտիվի մեջ ներդրավվելը։ Հոգեբանական ինչ նրբերանգներով է պայմանավորում հեղինակը սրանց վերադաստիարակության հարցը։

Շրջապատի մարդիկ սկզբում Սեթոյին շահագրգոռում են լնդհանուր աշխատանքով, բնասերները ցույց են տալիս, թե կա այնպիսի բնագավառ, որտեղ Սեթոն իրենց համար անփոխարինելի է։ Դա շոյում է պատանու ինքնասիրությունը, նրա սիրտը լցնում է հպարտությամբ, միաժամանակ ապագա ընկերների նկատմամբ խանդաղատանքի առաջին, գեռես թույլ, նոտաներով։ Սակայն Սեթոյի վերափոխության հիմնական գործոնը Մակարենկոյի այնքան սիրած դիմացնին վստահելու մանկավարժական պրիոմն է։ Ինչպես «Մանկավարժական պոեմ»-ում գաղութի պետը նախկին հանցագործին վստահում է խոշոր գումար և հենց այդ վստահությամբ նրան անգարծ կտրում հանցագործ կյանքը շարունակելու հեռանկարից, այնպես էլ «Սևանի ափին» վիպակում կոլտնտեսության նախագահ Բագրատն ու պարտքարտուղար Արամն են որոշում խոշոր գումար վստահել Սեթոյին։ Արդյունքը նույնն է։ Ուրիշ բան է, թե արկածային վիպակում հեղինակն այդ մոմենտն օգտագործում է մի քանի հետաքրքիր արկածներ և նկարագրելու համար։

Այլ է Արտուշը։ Առերևույթ մտերմանալով բնասերների հետ, նա աշխատանքի մեջ մոռանում

է երբեմնի վիրավորանքը, լցվում է մի բանով  
հայտնի լինելու, մի բանով Կամոյին ու մյուսներին  
զերավանցելու մարմաջով, և նրա այս թեթև  
փառասիրությունը նրան օգնում է հասարակացնո-  
րեն պիտանի գործեր կատարելու: Սակայն, թվում  
է, հենց այս փառասիրությունն էլ վերջին հաշվով  
պայմանավորելու է Արտուշի հետագա ճակատա-  
գիրը: Գուցե Անանյանն այդ շի էլ ցանկացել, բայց  
չնայած ձեականորեն խմբի հետ միանալուն, Ար-  
տուշը մինչև վերջ էլ մնում է միայնակ իր սեեռուն  
նպատակի հետ, իսկ ընթերցողի մեջ առաջանում  
է զառնահամ մի զգացում. ինչպիսի՞ն կլինի Ար-  
տուշը հետագայում: Հավատում ես, որ նա կդառ-  
նա լավ ու պիտանի մասնագետ, բայց հազիվ թե  
դառնա լավ ընկեր, լավ քաղաքացի:

Ինչ վերաբերում է Հասմիկին, ապա սա ժո-  
ղովրդական հերիաթների յոթ հսկաների քրոջ վի-  
ճակի մեջ է, հուզական, ուղղակի լիրիկական է  
այն սերն ու հոգատարությունը, որով բնասեր  
պատանիները շրջապատում են այս փխրուն ու  
հմայիլ էակին: Բայց Հասմիկին ինքն էլ ո՛չ նախա-  
ձեռնության կարողությամբ, ո՛չ խելքով, ո՛չ, մաս-  
նավորապես, իր նվիրվածությամբ գործին ու ըն-  
կերներին, մյուսներին շի զիջում: Սա զվարթ ու  
միաժամանակ քնքուշ, խելոք ու միաժամանակ  
միամիտ մի աղջիկ է:

Ահա թե ինչպիսին են վիպակի հերոսները:  
Ազնիվ ու օրինակելի պատանիների այս կոլեկ-

տիվը իր խիզախությամբ, հոգու սոմանտիկ թռիչքը ներով չեր կարող զրավիշ ու դաստիարակող չկենել: Օրինակելի են սրանք իրենց անձնական հատկություններով, առաջին հերթին իրենց մեծ հայրենասիրությամբ, ամեն ինչ հայրենիքին նվիրելու իրենց անշահախնդիր մղումով, մի զգացում, որով պայմանավորվում են նրանց բոլոր քայլերը: Ի՞նչն է մղում տալիս, զեկավարում Կամոյին, Հասմիկին և մյուսներին իրենց գործողություններում: Հասարակությանը օգտակար լինելու գաղափարը: Սա է «Սևանի ափին» վիպակի մանկավարժական ելակետը, միաժամանակ հիմնական պատճառներից մեկն այն բանի, որ բազմալեզու ու տարածասակ ընթերցողները այդքան ջերմությամբ ընդունեցին երկը, չնկատելու տալով նրա թերությունները:

Ասացինք, որ «Սևանի ափին» վիպակը զըրված է արկածացին վեպի հնարանքներով: Սա գրական այն տեսակն է, որտեղ հեղինակն ստիպում է ընթերցողին սրտատրով հետեւելու երկի գործողության զարգացման ընթացքին: Գրեթե միշտ արկածացին երկերի դրական հերոսների կյանքը բարեհաջող է ընթանում, ավելի ճիշտ, մաքառելով բազմաթիվ ու բազմապիսի խոշոնքուների դեմ, երկի վերջում նրանք հասնում են իրենց սեեռուն նպատակին, բայց դրա հետ մեկտեղ ընթերցողի սրտում միշտ առկա է լինում մի ներքին անհանգստություն, թեթևակի մի վախ հերոսների ճա-

կատագրի համար։ Անանյանի «Սևանի ափին» վկապակը ևս ունի այդ առանձնահատկությունը։ Ընթերցողը, ի՞նչարեկե, գիտե, որ հերոսները բոլորն էլ կենդանի պիտի մնան, համենայն դիպս նա այդ իսկույն կարող է ստուգել, բացելով զրքի վերջին էջերը։ Սակայն երբ Արտուշն ու Սեթոն ստորերկրոյա անցքերով լեռան խորքն են մտնում, երբ ամեն վայրկյան նրանց կյանքը ենթարկվում է վտանգի, ընթերցողը դառնում է անհամբեր, լրցվում է անհանգստությամբ երկու խիզախ պատանիների կյանքի համար։ Ընթերցողի այս անհանգստությունը պայմանավորվում է արկածային դրություն ստեղծելու հեղինակի վարպետությամբ։ Իսկ նման դեպքերում ամենից դժվարը շափի զգացման պահպանումն է։ Արկածային իրադրության մեջ շպետք է լինի ոչ մի կեղծ հնչյուն, վտանգը ոչ այնքան անդիմադրելի պիտի լինի, որ հերոսների հաղթանակը հրաշք թվա, և ոչ այնքան շինծու, որ առաջին հայացքից փլչի ստվարաթղթետնակի նման։ Երբ արկածային դրվագները էջում մի քանի գերբնական «հերոսություններ» է անում, երբ նա սրբնթաց արագությամբ է հաղթահարում իր դեմ ելած բոլոր արգելքներն ու խոշվնդոտները, ընթերցողն այդպիսի արգելքների մեջ իսկույն նկատում է շինծությունը։ Բայց երբ խորհրդավոր անմարդաբնակ կղզին ընկած մի խումբ քաջ, ազնիվ ու միմյանց նվիրված մարդիկ, խելոք ու

հավասարակշռված ինժեներ Սայրուս Սմիտի ղեկավարությամբ, իսկապես տառապագին ու հերոսական պայքար են մղում բնության դեմ ու քայլ առ քայլ հաղթանակում են, ընթերցողը հավատում է այդ հաղթանակին, սրտատրովի հետևում սիրելի դարձած հերոսների յուրաքանչյուր համարձակ քայլին; Նրանց հետ մասնակցում յուրաքանչյուր ձեռնարկությանը և մտովի կովում նրանց թշնամիների դեմ: Այս դեպքում ընթերցողը չի էլ նկատում մի շարք ֆանտաստիկ պայմանականությունները, որ հեղինակին հարկավոր են եղել զիրքն ստեղծելիս: Ընթերցողը նման քաների հետ զործ չունի, կամ ավելի ճիշտ, հավատում է դրանց, քանի որ նույնիսկ դրանք դուրս չեն դալիս հնարավորի, հավանականի սահմաններից: Այս դեպքում արկածային զիրքը դառնում է հիմն՝ մարդկային բարձր հատկությունների, ընկերասիրության, անձնվիրության և առաջին հերթին աշխատասիրության մասին:

Զափի այսպիսի նուրբ զգացումով է գրված «Սեանի ափին» վիպակը: Մեր հիշատակած հատվածում, օրինակ, Անանյանը մեծ վարպետությամբ է կարողանում պահել իրականի պատրանքը: Դրա համար նա ըստ երեսութին երկար է մտորել, միանգամայն պարզ պատկերացրել է ստորերկրյա անցքերի դասավորությունը, դրանց կառուցվածքը, շափերը, և զիտավորյալ կերպով այդ բոլորը նկարագրում է ամենայն մանրամասնությամբ: Մյուս

կողմից երկու պատանիների շարժումը ստորերկը բայց անցքերով նա ներկայացնում է ոչ արտասովոր կերպով հեշտ և ոչ էլ աճութիորեն դժվար:

Արկածային երկերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանցում առատ են անակնկալ դիպվածները: Այս տեսակետից ևս «Սևանի ափին» վիպակը բացառություն չէ: Անակնկալ են այսուղ և՛ հնագիտական կարեռություն ունեցող միջնադարյան իրերի հայտնագործումը, և՛ այն բարայրը, որ փրկության ճանապարհ է դառնում Սեթոյի ու Արտուշի համար, և՛ Սեթոյին կողոպտած ավագակի մահը և այլն: Սակայն լավն այն է, որ այս անակնկալները ի վերջո չեն պայմանավորում երկի սյուժեն ու գաղափարը: Եթե Սեթոն ու Արտուշը բարանձավը չգտնեին, միևնույնին է, մարդիկ արդեն ձեռնարկել էին նրանց փրկելու գործը, եթե Սեթոյին կողոպտած ավագակը չմեռներ ու նրա մահով շապացուցվեր Սեթոյի անմեղությունը, մեկ է, մարդիկ չէին հավատա, թե Սեթոն այնքան ընկած է, որ կարող է ընկերներին պատկանող գումարը յուրացնել: Պատահականություններն այս դեպքում սոսկ արկածային հնարներ են, որոնք միաժամանակ խորանում, պատճառաբանում են իրերի կապակցությունը:

Անանյանը խուսափում է արկածային վեպերում հաճախ հանդիպող մեկ այլ հնարանքից, նա դրեթե երրեք, կամ համենայն դեպս շատ սակավ

ղեպքերում է պատմությունը կտրում ամենահետաքրքիր, ամենակրիտիկական տեղում և անցնում սյուժետային մի այլ գծի: Ընդհակառակը, սովորաբար նա սյուժետային զիծը հասցնում է իր ավարտին և դրանից հետո միայն անցնում մեկ այլ գծի: Այսպես, պատանի բնասերները չըի որոնման աշխատանքները ձեռնարկում են միայն ժամանակ, երբ ավարտվում է թոշնաբուծական ֆերմայի ստեղծումը, զուրը զանելուց հետո է միայն, որ նրանք սկսում են Գիծ սարի ընդերքի ուսումնասիրությունը և այլն: Թվում է, թե սա կարող է խաթարել վիպակի ամբողջականությունը և, հիրավի, վիպակի երկրորդ զիրքը՝ «Գիծ սարի գաղտնիք» այս իմաստով փոքր-ինչ կտրված է առաջնից, մի բան, որ վիպակի կոմպոզիցիոն թերությունն է: Սակայն այդպիսի կտրվածություն այլ մասերում չի նկատվում, որովհետև հետաքրքրություն առաջացնելու հիշյալ հնարանքից հրաժարվելով, Անանյանը վարպետորեն օգտագործում է մեկ այլ հնարանք: Նա վիպակի առաջին մասում հող է նախապատրաստում, ակնարկում է այն, ինչ լինելու է հետագայում: Երբ պատանի բնասերները գնում են Գիլլի լճից վայրի թռչունների ձվեր հավաքելու, հենց այդ ժամանակ էլ ընթերցողն իրազեկ է դառնում նրանց հետագա պլաններին՝ կապված Գիլլի լճի տարօրինակ գոռոցների ու չըի որոնման հետ: Մյուս կողմից կապն ստեղծվում է նաև ուղղակի սյուժետային լարով: Զուրն անհրա-

ժեշտ է պյուղի համար, բայց այդ չուրն անհրաժեշտ է նաև իրենց՝ պատանի թհասերներին, առանց ջրի արժեքից կզրկվի նրանց առաջին դորձը՝ ֆերմայի ստեղծումը, և վերջնիս ստեղծումից հետո տրամաբանական է նրանց անցումը ջրի սրուման աշխատանքներին:

«Սեանի ափին» վիպակը կառուցվածքային թերություններ ունի (գրանցից մեկն արդեն նշեցինք), ստկայն այդ թերությունները չեն բխում արկածային վեպերի համար կանոնիկ դարձած վերահիշյալ հնարանքի բացառումից. գրանց պատճառն ուրիշ է. Անանյանը երբեմն շատ է տարվում սովորեցնելու ցանկությամբ, երբեմն մոռանում է, որ ինքն այլևս ոչ թե որսորդական-բնագիտական զրույց է զրում, այլ վիպակ, ծավալուն երկ, որտեղ պարտադիր է սյուժեի կուռ ամբողջականությունը: Նա ստեպ-ստեպ վիպակի մեջ զետեղում է առանձին որսորդական-բնագիտական զրույցներ, որոնք ինքնին հետաքրքիր լինելով, համենայն դեպս, զուրս են մնում զործողությունների ընդհանուր շղթայից և որոշ շափով թուլացնում են վիպակի մասերն իրար միացնող օղակները: Այդպիսիք են, օրինակ, «Մեղրի սիրահար մի գաղանիկի մասին», «Յոթ եղբոր արյունը» և մի քանի այլ զլուխներ, ինչպես նաև առանձին հատվածներ ուրիշ զլուխներում:

Այս թերությունն, ինչպես նշել ենք, իրեն մասամբ զգացնել է տալիս նաև «Կրակե օղակի մեջ»

վեպում, սրա հետքերը նկատվում են «Հովազաձորի գերիները» վիպակում ևս: Կոմպոզիցիայի հարցերը Անանյանի թույլ օղակներն են: Թերես այդ է պատճառը, որ ոմանք գրողի ուժը տեսնում են միայն փոքր կտավի երկերում: «Անանյանի ուժը,—կարդում ենք «Լեռնային կածաններով» գրքին կցված և. Հախվերդյանի առաջաբանում,—փոքր ձեմ մեջ է և ոչ թե հաստափոր գրքերի, վեպերի ու վիպակների, որոնք կամ քիչ բան են ավելացրել նրա վաստակին կամ ոշինչ»<sup>1</sup>:

Դժվար է հավատալ, թե առաջաբանի հեղինակն իսկապես այն կարծիքին է, որ «Սևանի ափին» և «Հովազաձորի գերիները» վիպակները Անանյանի վաստակին «քիչ բան են ավելացրել կամ ոշինչ»: Նույն առաջաբանի մեջ քննադատը ոգեսրությամբ է խոսում այն մասին, որ Անանյանի ստեղծագործությունը լայն ճանաչում է գտել ինչպես մեղանում, այնպես նաև մեր երկրից դուրս՝ բազմաթիվ երկրներում: Բայց չէ՝ որ այդ իրոք աննախընթաց հոշակի համար Անանյանը ոչ միայն փոքրածավալ երկերին, այլև «Սևանի ափին» և «Հովազաձորի գերիները» «հաստափոր» վիպակներին է պարտական, վիպակներ, որոնք, իմիջիւցոց, երկուսն էլ արժանացել են համամիութենական մրցանակի:

1 Վ. Անանյան, Լեռնային կածաններով, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 6, լ. Հախվերդյանի գրած առաջաբանը:

Եվ առհասարակ առաջաբանում է. Հախվերդյանն այնքան շոյող բաներ է, ասում Անանյանի հասցեին, որ հիշյալ ընդհանրացումը խորթ է մրսում նրա գրածի ամբողջ ոպուն: Մենք հակված ենք մտածելու, որ այդ սխալ գնահատականի համար, թերես, առիթ են ծառայել կոմպոզիցիոն այն վրիպումները, որոնց մասին խոսեցինք:

Չի կարելի համաձայնի նաև քննադատի հարեւանցի ասած մի մտքի հետ, որը, բարեբախտաբար, ճիշտ չէ, չնայած ասված է բավականաշափ կատեգորիկ ձևով.

«Ինչպես ամեն մի գրող, Անանյանն էլ իր թուլություններն ունի, որոնք ամենից ավելի արտահայտվում են մարդկային բնավորությունների ստեղծման ու շափի զգացումը կորցնելու մեջ»<sup>1</sup>:

Այս կարծիքը ծնվել է քննադատի միակողմանի մոտեցումից, որն արտահայտվել է նույնիսկ առաջաբանի վերնագրում («Հայրենի բնաշխարհի երգիշը»): Ոչ ոք, իհարկե, չի կարող ժխտել, որ Անանյանը նաև հայրենի բնաշխարհի երգիշն է, ինչպես ոչ ոք չի փորձում ժխտել նրա ստեղծագործության հանաշողական արժեքը, որ այնքան սիրում են շեշտել նրա երկերի գրախոսները, այդ թվում և և. Հախվերդյանը: Բայց, ինչպես արդեն փորձել ենք ցույց տալ, Անանյանի ուժը զլխավո-

1 Վ. Անանյան, Լեռնային կածաններով, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 6, լ. Հախվերդյանի գրած առաջաբանը:

բապես նրա ստեղծած մարդկային բնավորությունների մեջ է ու առաջին ներքին ներժին, եթե կարելի է ասել լիրիկական ներոսի, որը ընթեցողին ուղեկցում է պատմվածքից պատմվածք և վիպակից վիպակ: Դրախոսն այս դեպքում զլիսի չի ընկնում, որ նույնիսկ իր ազնիվ ոգևորության համար, որ հանդես է բերում Անանյանի ստեղծագործությունը գնահատելիս, ամենից առաջ պարտական է «մարդկային բնավորությունների ստեղծման» նրա կարողությանը:

Բայց դառնանք հայրենի բնաշխարհին: Ինչպես արդեն մի անգամ ասել ենք, բնության նկարագրությունները Անանյանի ստեղծագործության արտաքին ձևավորման հիմնական հատկանիշներ չեն: Դրանք սերտորեն առնչվում են ։ Հեղինակի կենսափիլիսոփիայության հետ, դառնում բարձր, հումանիստական գաղափարները զեղարվեստորեն արտացոլելու միջոց: Հենց այդ պատճառով էլ ինչպես պատմվածքներում, այնպես նաև ծավալուն երկերում Անանյանը հանդես է բերում հայրենի բնությունը երգելու զարմանալի կարողություն: «Սկանի ափին» վիպակն, օրինակ, արկածային ուրիշ երկերից տարբերվում է նաև այս տեսակետից: Սակայ են արկածային երկերը, որոնցում այնքան շնչավորվի բնությունը, այնքան նկարեն շքեղություն ունենա, որքան Անանյանի վիպակում: Հայ գրականության մեջ, համենայն դեպս, ուրիշ այդպիսի երկ չկտ: Համաշխարհային դրա-

կանության մեջ այս առումով անմրցելի է Ժյուլ  
Վեննը, Հատկապես «Նավապետ Գրանտի որդի-  
ները» վեպում, որտեղ շտեսնված վառ գույներով  
է նկարագրում ծովը, Պատագոնիայի տափաստան-  
ները, նոր Զելանդիայի և Ավստրալիայի անտառ-  
ներն ու մարգագետինները: Թող Համարձակ շթվա,  
Եթե ասենք, որ «Սևանի ափին» վիպակում նույն  
շրեղությամբ է նկարագրված Փոքր Կովկասյան  
չեռնաշխարհի բնությունը: Ահա մի օրինակ.

«Նրանց առաջ փուլած էր անտառներով պա-  
տած բարձր լեռների ու անդնդախոր ձորերի աշ-  
խարհ՝ ամբողջովին կորած փարթամ կանաչի  
մեջ: Փոքր կովկասյան լեռնաշղթայի բազմաթիվ  
ճյուղերը իրար զուգահեռ ձգվում էին գեղի Քուռ  
դետի Հովհիտը և այնտեղ բնդհատվում էին, կու-  
տակվում իրար վրա և բարդ-բարդվում մինչև ամ-  
պերը:

Այդ լեռների լանջերը պատած էին թավ, սա-  
զարթախիտ անտառներով, իսկ դադարիները մերկ  
էին ու պատած մարգագետիններով: Մոտիկ ան-  
տառում վեր ելնող Հատ ու կենտ ժայռերն անզամ  
կանաչ էին, նրանց ճեղքերից աճել էին ծառեր ու  
թփուտներ ու ծածկել ապառաժի մերկությունը:  
Այստեղից լեռնային նոսր, պարզ օդի միջով երե-  
վում էր գրեթե ամբողջ Անդրկովկասը, փարթամ  
մի լեռնաշխարհ իր խորխորատներով, ձորերում  
սահանքներ ու ջրվեժներ կազմող իր փրփրաբաշ  
գետերով, մրդերով Հարուստ Հովհիտներով, լեռնե-

րի զրկում ծխացող բազմաթիվ ավաններով ու քառարիներով:

Հեռո՞ւ անտառներում ծխի մի երկար ժապավեն էր երեսում, գնացք էր սլանում կոռու ձորերով, և տղաները գիտեին. որ Հայկական լեռնաստանը բարձրանալու համար նա պետք է անցնի լեռնամատերի ու ժայռերի մեջ փորած բազմաթիվ թունելներով:

Նրանից դենք, ամպի ճերմակ շալմաները զլխներին փաթաթած սարեր են. Լեռնազագաթների շարքերը ձգվում են ողջ Հորիզոնով մեկ՝ արեվելքում, արևմուտքում, Հյուսիսում, Հարավում: Բոլոր այդ զագաթները մերթ ձյունապատ էին, մերթ թավիշ կանաչով ծածկված ու մերթ էլ կորչում էին խիստ անտառների մեջ: Ամեն տեղ լեռներ, լեռնաշղթաներ, իրար զուգահեռ ձգվող ձորեր ու կիրճեր:

Ներքեռում, անտառապատ ձորերում ճերմակ բուլաներ երեացին, մեծացան, ուղտերի ծուռ ու մուռ կերպարանք առան և Հենց ուղտերի նման էլ ծանր ու դանդաղ դեպի վեր բարձրացան: Բարձրացան, աճեցին, լցրին ձորը կաթնագույն մշուշով և պատանիները մնացին կանգնած այդ ճերմակ մշուշից վերև:

Նրանք խոսք շէին դանում իրենց բերկրանքն իրար հաղորդելու: Եվ ինչ խոսքով նկարագրես Կովկասի շքնաղ լեռնաշխարհը, այն կախարդական

երկիրը, որ անսովոր ուժով դեպի իրեն էր քաշում  
Պուշկինին, Լեռմոնտովին, Գորկուն...

Կատարներից քամի վշեց դեպի ցած ու հալեց  
թանձր մշուշը: Իրար հետեւց ազատվեցին, դուրս  
Եկան նրա մեջ կորած լեռնալանջերը, կանաչ բըլ-  
րակները: Մշուշը ծվեն-ծվեն եղավ, քշվեց դեպի  
Քուռ գետի հովիտը և բացվեց փարթամ կանաչի  
մեջ թաղված Ղաղախի ձորը՝ իր փրփրերախ Աղբա-  
տեֆ գետով:

Բոլորն էլ լուս ու գմայլված դիտում էին:  
Նրանց հայացքները շրջում էին Հորիզոնից հո-  
րիզոն:

Ահա հարավում Կարագաղի լեռներն են շարք  
կապել, հարավ-արևմուտքում՝ Տաճկաստանի  
մուայլ լեռնաշարքերը, իսկ արևմուտքում, զլուխ-  
ները երկնի մովի մեջ կանգնած են վրացական  
վեհ հսկաները՝ միշտ կանաչ, միշտ ջահել, միշտ  
ովարի՝ իրենց ստորոտների բնակիչների պես:  
Դիմացը՝ կոռու լեռներն են ծխում՝ կոքը, կալվարը,  
կեցանը, Փամբակի լեռնաբազուկն իր Արջանոց  
դագաթով: Սևանը շրջապատող լեռները կարծես  
ցածրացել էին այդ բարձր կատարից. ահա նրանց  
առաջ լիճը շրջապատում են՝ Հյուսիս-արևելյան  
կողմից Արեգունու լեռնաշղթան, դիմացում Գեղա-  
մա լեռներն էին իրենց Աժդահակ գագաթով,  
նրանց դիմաց ձգվում էր զմբուխտի նման կանաչ  
Վարդենիսի լեռնաշղթան, իսկ Հյուսիսում պատա-  
նիների տեսողության հորիզոնը միակել էր Մեծ

Կովկասյան լեռնաշղթան, ամպերի մեջ կորած իր կատարներով»<sup>1</sup>:

Որքա՞ն բանաստեղծություն կա այս պարզ ու անպաճույն նկարագրության մեջ, որքա՞ն հույզ ու տրամադրություն: Այսպիսի նկարագրությունները, որոնք բավականաշափ շատ են «Սևանի ափին» վիպակում, ներդաշնակում են երկի ընդհանուր գաղափարին, մարդու ամենակարողության հաստատման գաղափարին և միաժամանակ բնդղծում են վիպակի ընդհանուր լավատեսականիրիկական տոնը:

\* \* \*

«Սևանի ափին» վիպակից հետո, 1956 թվականին, Սևանյանը ընթերցողների աշազրտթյանը ներկայացրեց «Հովազաձորի զերիները», որը նախորդ վիպակի նման արժանացավ միութենական մրցանակի և լայն տարածում գտավ մեզանում ու մեր երկրի սահմաններից դուրս: Հայ գրականության այս առաջին սորինսկոնադը ճեղինակի մի նոր առաջընթաց քայլն էր և պատահների համար գրված լավագույն երկերից մեկը:

Դանիկը Դեֆոյի հոչակավոր վեպից սկսած բոլոր սորինսկոնադները մի ընդհանրություն ունեն, մի հիմնական մոտիվ. դրանք փաստորեն մարդ-

1 Վ., Սևանյան, Սևանի ափին, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 308—309:

կամասության, հաստատակամության, աշխատասիրության, հնարամտության, մարդու անսպառ կարողությունների գեղարվեստական արտացոլումներն են, բնության դեմ մարդու մղած պայքարի արտացոլումները:

Դեփոյի վեպը միաժամանակ բուրժուական քաղաքակրթության մի յուրօրինակ փորձարկումն է և այդ քաղաքակրթության ներկայացուցիչներից մեկի հոգեբանության խորն ու բազմակողմանի արտացոլումը։ Յանկացել է այդ թե ոչ, բայց Դեփոն փաստորեն արտացոլել է մարդկային կոլեկտիվի և ոչ մեկ անհատի՝ Ռոբինզոնի, հաղթանակը կյանքի ձախորդությունների դեմ մղած պայքարում։ Եթե մի կողմ թողնենք նույնիսկ այն հսկայական կենսափորձը և կովտուրայի այն բազաժը, որ Ռոբինզոնն իր հետ անմարդաբնակ կղզի է տանում, ապա, համենայն դեպս, դեռևս շատ բան է մնում, որ հերոսն առել է մարդկային կոլեկտիվից, մնում է այն առատ պաշարն ու բազմազան գործիքների հսկայական քանակը, որ Ռոբինզոնը կղզի է տեղափոխում խորտակվող նավից։ Իր երկարամյա կղզիաբնակության ընթացքում նա շրջապատված է մարդկային աշխատանքի հարյուրավոր պտուղներով, սկսած ասեղից՝ մինչև գրքերը։ Անմարդաբնակ կղզում Ռոբինզոնին փաստորեն բարեկան նա իր գոյությունը։

Նույն պրոբլեմներն են դրված Ժյուլ Վեռնի

երկրի, մասնավորապես «Խորհրդավոր կղզին» վեպի հիմքում։ Այս դեպքում մարդկային կոլեկտիվի ամենակարող լինելու գաղափարը ավելի է ընդունվում։ Սայրուս Սմիտի համերաշխ կոլեկտիվը մայր երկրից ավելի քիչ նյութական ժառանգություն է ստանում, բայց դրա փոխարեն այդ խմբում պատահականորեն համադրվել են այնպիսի փորձառու մարդիկ, ինչպիսին ինքը՝ խոշոր զիտնական ու կազմակերպիչ Սմիտը, կուլտուրական ու հասարակական կյանքին քաջատեղյակ Գեղեցն Սպիլետը, նավաստի Պենկրոֆը, որ օժտված է մեծ կենսափորձով, որի ձեռքից ամեն ինչ գալիս է, անխոնջ ու նվիրված նարը, ուշիմ, հրաշք երեխա, ապագայի բնախույզ Ռոբերտը և վերջապես նրանց խորհրդավոր պաշտպանը, կալիտան Նեմոն, որն ստորջրյա մի ամբողջ աշխարհ ունի՝ ի մարդկային աշխատանքի ամենաբազմազան պտուղներով։ Մինչդեռ Այրոտոնը կործանվում, վայրենանում է հարեւան կղզում, չնայած նրա մոտ մարդու գոյության համար պիտանի առաջին անհրաժեշտության առարկաները կային։ Միայն կուեկտիվում, աղնիվ մարդկանց համակեցության մեջ կարող է փրկվել մարդը, այն էլ ողջ կոլեկտիվի տառապալից ու տքնածան աշխատանքի պայմաններում։ Սա է բոլոր ոռրինզոնադներից հանվող կենսափիլիսոփայությունը ու սրա մեջ է դրանց բոլորի գաղափարական արժեքը։

Ուրիշ բան չէ այս տեսակետից նաև Անան-

յանի «Հովազաձորի գերիները» վիպակի հիմնական գաղափարը, որը գեղարվեստորեն բացահայտվում է ոչ միայն վիպակի ընդհանուր կոնցեպցիայի մեջ, այլև կոնկրետ ձևով, հերոսներից մեկի մտայնության հակագրությամբ մյուս հերոսների դեռևս պարզունակ (այդ կապված է նրանց տարիքի հետ), սակայն այլևս հաստատուն դարձած աշխարհայեցողությանը:

«Թող ամեն մարդ իր գլխի ճարր տեսնի» հայտարարում է վիպակի հերոսներից մեկը՝ Սարգիսը այն ժամանակ, երբ պատանիների խումբը ուշ աշնանը փակվում է Հովազաձորում և պարզվում է, որ նրանց ակամա ինքնաբանտարկումը կարող է երկարել մինչև զարուն: Պատահական հաջողությունը մի պահ թե է տալիս Սարգսին, սատարում նրա զայլային փիլիսոփայությանը, նա արդեն զրեթե տոնում է իր հաղթանակը միանգամայն ուրիշ մորալով դաստիարակված իր ընկերների հանգեց: Սակայն իրերի ընթացքը շուտով նրան կանգնեցնում է մի անլուծելի խնդրի առաջ, նա զգում է, որ ինքը միայնակ կորչելու է, և միայն իր հետ միասին Հովազաձորում փակված պատանիների ընկերությունը կարող է հանել իրեն անելանելի վիճակից: Այս վայրկյանից սկսվում է նրա գանդաղ ու տանջալից վերափոխությունը, որին ընթերցողը հետևում է մեծ հետաքրքրությամբ: Սարգսի վերափոխության պատմությունը տողամեջ ասված այն կենսափիլիսոփայությունն է, որ

մի առանձին երանգ է տալիս առաջին հայացքից  
սուկ բնախուզական-արկածային երկ թվացող վի-  
պակին:

Բայց դասնանը վիպակի հիմնական կոնցեպ-  
ցիային: Դրա համար հարկավոր է դարձյալ ան-  
դրադառնալ հերոսներին: Իսկապես, ի՞նչ մարդ-  
կացին կոլեկտիվ է դա, կուլտուրական, գիտական,  
հասարակական, աշխարհայացքային ինչպիսի՝  
բազաժով է ընկել Հովազածոր: Արդյոք մարդկանց  
պատահական խումբ է, ինչպես թվում է վիպա-  
կի էքսպոզիցիայում: Իհարկե ո՛չ: Աշոտը, Հասոն,  
Գագիկը, Շուշիկը վերջին հաշվով կենդանի մարդ-  
կանց սոսկ լուսանկարչական պատճեններ չեն,  
այլ հատուկ զիտավորությամբ ընտրված հավա-  
րական տիպեր: Աշոտը սրսորդի տղա է ու բնու-  
թյան մասին շատ ավելին զիտե, բան իր տարիքի  
որևէ պատանի կարող է իմանալ, Գագիկը իր մեջ  
տմբարել է Անանյանի հասակավոր հերոսների  
հնարամտությունն ու սրամտությունը. Հասոն  
բուրդ հովիվների փորձի հանրագիտարան է, այս-  
պես նաև մյուսները, նույնիսկ Սարդիսը շատ բան  
գիտե ու շատ բանի է ընդունակ: Ահա այսպիսի  
անհատներից կազմված կոլեկտիվ է ներկայաց-  
նում Անանյանը «Հովազածորի գերիները» վիպա-  
կում: Այդ կոլեկտիվն իր հետ Հովազածոր չի տա-  
նում ոչ մի զենք, եթե չհաշենք Հասոյի դանակը,  
առօրյա կյանքին անհրաժեշտ ոչ մի իր, դասագրր-  
բերից ու տետրակներից բացի: Բայց դրա փոխա-

րեն նա տանում է սերունդների փորձի քաջ խմացությունը։ Այդ խմացությունը պատանիներին կրակ է տալիս, քարե դարի գործիքներ ու զենքեր, ցրտից պաշտպանվելու հնարներ և, որ ամենից կարեռն է, պայքարի ու աշխատանքի հուանդ, վաղվա օրվան հավատով նայելու կարողություն, մի բան, որ նրանց փրկության հիմնական գործոններից մեկն է։ Բացի դրանից այդ խմբակն իր հետ Հովազաձոր է տանում սոցիալիստական հասարակության բարոյական նորմերը, բարձր զգացումներ, ինչպես նաև այն գիտակցությունը, որ ամբողջ երկիրը տագնապահար որոնելու է կորած պատանիներին։ Ահա թե ինչպիսի հսկայական պաշտպանվ են Հովազաձորում փակվում Անանյանի հերոսները։

Կոլեկտիվիստական գաղափարն ու մարդկացին բարձր հատկությունները «Հովազաձորի գերիները» վիպակի շարժիչ ուժերն են, հերոսների բոլոր գործողությունները պայմանավորող հանգամանքները։

Ակնհայտ է տարբերությունը Դեֆոյի հերոսի և Հովազաձորում փակված պատանիների հոգերանությունների միջև։ Վերջին հաշվով Ռոբինզոնը նոր բարձրացող բուրժուական հասարակության եսակենարոն աշխարհայացքի ներկայացուցիչն է։ Իհարկե, որպես ժամանակի ամենաբարձր քաղաքակրթության կրող նա խորշում է աստծուն ահաճ արարքներից, անմիջականորեն արտահայ-

տում իր հակակրանքը վայրենիների մարդակերության, ծովահենների զաղբելի արարքների դեմ, բայց նույն Ռորինդոնը իր փրկած վայրենու մեջ իրեն հավասար մարդ չի տեսնում, ճորտագրում է նրան, ծառայեցնում։ Ուրբաթի մահը զրքի երկրորդ մասում մեծ տառապանք չի պատճառում նրան, շնայած այդ մահը մի բարձր անձնազոհություն է հենց իրեն՝ տիրոջ կյանքը փրկելու համար։

Անանյանի հերոսները նոր հասարակության, նոր բաղաքակրթության, նոր մորալի ներկայացուցիչներն են։ Որպես այդպիսիք, նրանք օժտված են բոլորովին այլ հատկություններով, որոնց մեջ կարեոր տեղ է զրավում՝ պատասխանատվության զգացումը ոչ միայն սեփական, այլև շրջապատի մարդկանց բարոյական վարքագիր համար։ Դրժվարին կացության մեջ բնկած, մահվան դուռը հասած այդ պատանիներին, համենայն դեպս լուրջ կերպով մտահոգում է Սարգսի վերապատիարակության հարցը, մտահոգում է Աշոտի մեծամտությունն ու փառասիրությունը կոտրելու հարցը, մտահոգում է հասարակությանը, բնդհանուր մեծ կոլեկտիվին օգտակար լինելու հարցը և այլն։

Հովազաձորից նրանք գուրս են գալիս հարբատացած ոչ միայն զիտելիքներով, այլև հոգեկան դանձերով, հասարակությունը խղճի մտոք ծառայելու հաստատակամությամբ։ Հովազաձորում

Հղկվում, մաքրվում են նրանց բնավորությունները, նրանք հասունանում, դառնում են իսկական սովորական քաղաքացիներ: Սրա մեջ է տուգելապես «Հովազաձորի զերիները» վիպակի դաստիարակչական ու գեղագիտական արժեքը:

Բայց ինչպես Անանյանի բոլոր լավագույն երկերում, այս գեղքում ես բարձր զաղափարը շիշեփորվում մերկապարանոց հայտարարություններով; այլ անց է կացվում պատանիների կյանքի մանրամասների հուզիչ ու նկարեն արտացոլումների մեջ: Ընթերցողը հուզմունքով է հետևում այդ մի խումբ խիզախների համարձակ պայքարին, մանրիկ հաղթանակներին ու պարտություններին, կլանում նրանց արտասովոր արկածների նկարագրությունները, բայց դրանց մեջ միաժամանակ ընկալում է նաև բարձր հումանիստական զաղափարը:

Անանյանի տաղանդը մի անգամ ես փայլատակում է «Հովազաձորի զերիները» վիպակի մեջ, փայլատակում է պատմելու նրա զարմանալի կարողությունը, ընթերցողին բնության զաղանիքներին ու հրաշալիքներին ծանոթացնելու ունակությունը: Այս ըստ էության զվարիթ, սրբախ զբրում շկան նաև այն կառուցվածքացին թիրությունները, որ նկատեցինք «Սևանի ափին» վիպակում: «Հովազաձորի զերիները» շատ ավելի կառուցիկ երկ է: Այսուհեղ զործողությունների ընթացքը զարդանում է երկու պլանով: Դրանցից առաջինը և

Հիմնականը անելանելի վիճակի մեջ ընկած պատահների կյանքի ու մարտասմների պատմությունն է, երկրորդը՝ ժամանակակից գյուղի մարդկանց փոխարարերությունների նկարագրությունը, որ հարակցվում է առաջնին ու լրացնում նրան: Երկրորդ զիծը ավելի բիշ է զբաղեցրել հեղինակին, ուակայն մի քանի ստվերագծերով նա կարողացել է սեալիստորեն արտացոլել գյուղի առօրյան, նրա ազնիվ ու էնտուզիատ աշխատողներին, ինչպես նաև առանձին մարդկանց անբարոյական վարքագիծը: Այս տեսակետից հետաքրքրական են այն էջերը, որոնցում նկարագրվում են կոլտնտեսության նախագահի ու պահեստապետ Պարուցրի (Սարգսի Հոր) շահատակությունները: Որքան սիրով ու խանդաղատանքով է համակվում ընթերցողը խիզախ պատանիների, որսորդ Արամի, փոստատար Մուրագի, քուրդ Հովհանների նկատմամբ, այնքան խոր տաելությամբ ու արհամարհանքով է լցվում կյանքի տականքների՝ Պարուցրի ու մյուսների հանգեստ: Ու թեև զրբում երկրորդ պլանը շի հասնում իր տրամաբանական վախճանին, թեև զրքի վերջում դեռևս շեն պատժվում ազնիվ մարդկանց աշխատանքի պտուղները վայելով այդ անարժան մարդիկ, բայց ընթերցողի համար պարզ է դառնում, որ դրանց օրերը հաշված են:

Ավելորդ է մանրամասն կանգ առնել «Հովազաձորի զերիները» վիպակի մտնելավարժական,

բնախուզական և ուրիշ կողմերի վրա: Այս տեսակետից նա չի տարբերվում ոչ իր նախորդից, ոչ Անանյանի լավագույն պատմվածքներից: Այստեղ ես Անանյանն իր տարերքի մեջ է, բնության տիրոջ ու այդ բնությանը սիրահարված գեղարվեստագետի տարերքի մեջ:

\* \* \*

1961 թվականին Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ Վ. Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» աշխատության առաջին հատորը:

Դժվար է ասել, թե այս գրքում որն է ավելի դերակշռում, բնության գեղեցկություններով հիացած գրողը, անխոնչ բնախույզը, թե բնագետ պատմաբանը: Անանյանն այստեղ նկարագրում է Սովետական Հայաստանի կենդանական աշխարհը, բայց այս ոչ միայն փորձասու որսորդի և բնախույզ գրողի հայեցակետից, այլև զիտնական-կենդանաբանի: Նա լայնորեն օգտագործում է միջնադարյան ձեռագրերի տվյալ տեղեկությունները, դրանց լուսանցքներում նկարված կենդանագրերն ու մանրանկարները, աշխարհագրական, բնադիտական դրույցները, Հայաստանի կենդանական աշխարհի մասին օտար թե հայ հեղինակների բոլոր ուսումնասիրությունները, այն ամենն ինչ հնարավոր է դտնել հետաքրքրող հարցի մա-

սին: Բոլոր այս նյութերը համագրելով տարիների իր փորձին, նա հասնում է գիտական հետաքրքիր էզրահանգումների, որոնց մեջ ամենահետաքրքրը բրականը, թերևս, աշխարհագրական-կլիմայական պայմանների փոփոխությունների հետևանքով կենդանական աշխարհում կատարվող ֆիզիկական փոփոխությունների դարվինյան-մատերիալիստական ուսմունքի հաստատումն է Հայաստանում ապրած և ապրող կենդանիների պատմության տասնյակ օրինակներով:

Բայց «Հայաստանի կենդանական աշխարհը» ուշագրավ է նաև իր գրական արժանիքներով: Մոլիտական գրականության մեջ, մասնավորապես վերջին տարիներս, լայն տարածում են ստացել դիտական հետաքրքրաշարժ գրքերը («Հետաքրքրաշարժ ֆիզիկա», «Հետաքրքրաշարժ քիմիա»; «Հետաքրքրաշարժ հանքարանություն» և այլն): Մեր պատանեկությունն այսպիսի գրքերը կարդում է մեծ համբաւակությամբ, քանի որ դրանցում դիտական հարցերը քննարկվում են հրապուրիչ ու մատչելի զրոյցներում, կիսագեղարվեստական ակնարկներում ու պատմվածքներում: «Հայաստանի կենդանական աշխարհը» ժանրային առումով մոտենում է հիշյալ աշխատություններին, թեև ունի նաև իր առանձնահատկությունները: Նշված աշխատությունների հեղինակներն, օրինակ, սակավ զեպքերում են դիմում իրենց սեփական փորձին, նրանք շարադրում են առարկան ու

նրա պատմությունը՝ օգտվելով բացառապես զիտ-  
նականների կատարած փորձերից։ Անանյանը չի  
բավարարվում դրանով, օգտագործում է նաև իր  
սեփական փորձն ու զրողի՝ կյանքից ստացած  
տպավորությունը։ Այդ պատճառով նրա զիտական  
դատողությունները հաճախ են ընդմիջվում ուղղա-  
կի զեղարվեստական պատմվածքներով, ակնարկ-  
ներով, զրուցյներով, որսորդական զեպքերի ու  
բնության նկարագրություններով։ Այդպիսի էջերը  
կարդացվում են մեծ բավականությամբ և զրբին  
յուրօրինակ զեղարվեստական երանդ են տալիս։

\* \* \*

Այս համառոտ ակնարկը լրիվ չի բնութագրում  
Անանյանին ոչ միայն այն պատճառով, որ փոք-  
րածավալ մենագրության մեջ դժվար է զծել նրա  
նման բեղմնավոր ու ինքնատիպ զրողի ստեղծա-  
դործության ամբողջական պատկերը, այլև այն  
պատճառով, որ հեղինակը շարունակում է իր զրա-  
կան կենսագրությունը։

## ԹԻԹԼԻՌԳՐԱՅԵՒՄ\*

Վ. ԱՆԱՅԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աչ մի զայլ մեր հանդերում. Պետհրատ, Երևան, 1930, 24 էջ, տպաքանակ 2000:
2. Կրակի օղակի մեջ. Վեպ Հայաստանի բազարացիական կոխներից, Պետհրատ, Երևան, 1930, 280 էջ, տպաքանակ 3000:
3. Զարաշարժ. Տարավորություններ Հ. Հ. ղիվիդիայի 1928

---

\* Բիրլիոգրաֆիայում հիշատակվում են միայն Վախիթանդ Անանյանի երկերի հրատարակությունները առանձին զրքերով: Չեն հիշատակվում նրա վիպակների, պատմվածքների, ակնարկների ու զրայցների հրատարակությունները զանազան ալմանախներում, ժողովածուներում, անթոլոգիաներում և պարբերական մամուլում: Բիրլիոգրաֆիան կազմելիս ձեռքի տակ ունեցել ենք օտար լեզուներով հրատարակված այն բոլոր զրքերը, որոնք պահպանվ են հեղինակի մոտ: Արտասահմանյան հրատարակություններից մի քանիսը բիրլիոգրաֆիացից դուրս են մնացել, դրանց հրատարակությունների մասին ստույգ տեղեկություններ ունենք, բայց դրանք չեն ուղարկվել հեղինակին, իսկ այլ ճանապարհներով դանել հնարավոր չեղավ:

թվի գորաշարժերից, Պէտհրատ, Երևան, 1931, 44 էջ, տպարանակ 4000:

4. Պատկերներ կոլլուգային դաշտերից. ճամփորդական սովեր, Պէտհրատ, Երևան, 1931, 112 էջ, տպարանակ 3000:

5. Թամբակի ֆրուտը պայմանի ֆրոնտ. Պէտհրատ, Երևան, 1931, 40 էջ, տպարանակ 6500:

6. Թէ ինչպիս առողջանում է մանր երկրագործի հոգերանուրյունը. Գյուղհրատ, Երևան, 1933, 32 էջ, տպարանակ 2000:

7. Գալի-քափա. ճամփորդական տպավորություններ, Գյուղհրատ, Երևան, 1934, 83 էջ, տպարանակ 2000:

8. Արս. Պէտհրատ, Երևան, 1934, 243 էջ, տպարանակ 5000:

9. Մանիշակագույն բարձունքներում. Գյուղհրատ, Երևան, 1935, 82 էջ, տպարանակ 3000:

10. Երկրի վերածնունդը. Խորհրդային Հայաստանը 15 տարում, Պէտհրատ, Երևան, 1935, 232 էջ, տպարանակ 5000:

11. Քարանձավի բնակիչները. Պէտհրատ, Երևան, 1936, 376 էջ, տպարանակ 4000:

12. Գմողի դռան զաղտնինը. Արկածային վիպակ, Հայպետհրատ, Երևան, 1945, 162 էջ, տպարանակ 3000:

13. Մարտի դաշտերում. Հայպետհրատ, Երևան, 1946, 180 էջ, տպարանակ 3000:

14. Պատերազմից հետո. Սովհտական դրող, Երևան, 1947, 212 էջ, տպարանակ 4000:

15. Ռւսորդական պատմվածքներ. Պրակ Ա, Հայպետհրատ, Երևան, 1947, 328 էջ, տպարանակ 5000:

16. Ռւսորդական պատմվածքներ. Պրակ Բ, Հայպետհրատ, Երևան, 1949, 477 էջ, տպարանակ 3000:

17. Սևանի ափին. Արկածային վիպակ պատանի բնակերների կյանքից, Հայպետհրատ, Երևան, 1951, 538 էջ, տպարանակ 5000:

18. Յեւմայի մարդիկ. Հայողետհրատ, Երևան, 1951,  
317 էջ, տպաքանակ 6000:
19. Սեանի ափին. Արկածային վիպակ պատանի բնա-  
սերների կյանքից, երկրորդ հրատարակություն, Հայպետ-  
հրատ, Երևան, 1953, 536 էջ, տպաքանակ 10000:
20. Ուսուղական պատմվածիներ. Պրակ Գ, Հայպետ-  
հրատ, Երևան, 1953, 274 էջ, տպաքանակ 7000:
21. Մանկուրյունը լեռներում. Հայպետհրատ, Երևան,  
1954, 278 էջ, տպաքանակ 8000:
22. Պատմվածիներ ուսուղական կյանքի. Հրատարակու-  
թյուն «Արամազդ», Բեյրութ, 1955, 155 էջ, տպաքանակ....
23. Լեռնային կածաններով. Հայպետհրատ, Երևան, 1956,  
519 էջ, տպաքանակ 8000:
24. Հովազաձորի գերիները. Արկածային վիպակ, Հայ-  
պետհրատ, Երևան, 1956, 531 էջ, տպաքանակ 10000:
25. Ուսուղական պատմվածիներ. Պրակ Գ, Հայպետ-  
հրատ, Երևան, 1958, 366 էջ, տպաքանակ 10000:
26. Փայրիկ մայրեր. Հայպետհրատ, Երևան, 1958, 14 էջ,  
տպաքանակ 30000:
27. Հովազաձորի գերիները. Արկածային վիպակ, Կաջիրե,  
1959, 568 էջ, տպաքանակ....
28. Ուսուղական պատմվածիներ. Պրակ Ե, Հայպետ-  
հրատ, Երևան, 1959, 405 էջ, տպաքանակ 10000:
29. Կարմրախայտ. Հայպետհրատ, Երևան, 1960, 15 էջ,  
տպաքանակ 20000:
30. Հայաստանի կենդանական աշխարհն. Հատոր առա-  
ջին, Հայպետհրատ, Երևան, 1961, 433 էջ, տպաքանակ  
10000:
31. Հայաստանի կենդանական աշխարհն. Հատոր երկ-  
րորդ, Հայպետհրատ, Երևան, 1962, 415 էջ, տպաքանակ 5.000:

Ա. ԽԵՂԱՅՈՒՄ ԳՐԻՎՐԱՆԴԻ ՀՐԱՄԱՆԻ ՎՐԱՅԱՅՐ

1. *На берегу Севана*. Приключенческая повесть из жизни юных натуралистов, Детгиз, Москва—Ленинград, 1950, 255 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.
2. *На берегу Севана*. Детгиз, Москва—Ленинград, 1951, 408 стр., тираж 75.000, перев. А. Гюль-Назарянц.
3. *На берегу Севана*. Айпетрат, Ереван, 1952, 420 стр., тираж 7.000, перев. А. Гюль-Назарянц.
4. *На берегу Севана*. Детгиз, Москва—Ленинград, 1953, 335 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.
5. *На берегу Севана*. Новосибирское Книжное Издательство, 1953, 408 стр., тираж 15.000, перев. А. Гюль-Назарянц.
6. *На берегу Севана*. Ленинградское Газетно-журнальное издательство, 1953, 327 стр., тираж 100.000, перев. А. Гюль-Назарянц.
7. *На берегу Севана*. Детгиз, Москва—Ленинград, 1959, 343 стр., тираж 100.000, перев. А. Гюль-Назарянц.
8. *Пленники Барсова ущелья*. Детгиз, Москва, 1956, 486 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.
9. *Пленники Барсова ущелья*. Детгиз, Москва, 1962, 463 стр., тираж 100.000, перев. А. Гюль-Назарянц.
10. *Пленники Барсова ущелья*. Новосибирск, 1963, тираж 100.000, перев. А. Гюль-Назарянц.
11. *Рассказы Охотника*. Изд. „Советский писатель“, Москва, 1947, 284 стр., тираж 15.000, перев. А. Гюль-Назарянц.
12. *Рассказы Охотника*. Изд. „Правда“ (Библиотека „Огонёк“), Москва, 1951, 40 стр., тираж 150.000, перев. А. Гюль-Назарянц.
13. *Детство в горах*. Детгиз, Москва—Ленинград, 1952, 151 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.

14. *Рассказы*. Изд. „Советский писатель“, Москва, 1952, 276 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.
15. *Охотничьи рассказы*. Военное Издательство Военного Министерства Союза ССР (Библиотека журнала „Советский воин“), Москва, 1953, 48 стр., тираж ?, перев. А. Гюль-Назарянц.
16. *Рассказы*. Детгиз, Москва—Ленинград, 1953, 32 стр., тираж 300.000, перев. А. Гюль-Назарянц.
17. *По горным тропам* (Рассказы), Изд. „Советский писатель“, Москва, 1956, 378 стр., тираж 30.000, перев. А. Гюль-Назарянц.
18. *Небылицы и были Армянских гор*. Изд. „Правда“ (Библиотека „Огонёк“), Москва, 1957, 48 стр., тираж 150.000, перев. А. Гюль-Назарянц.
19. У „Волчьих ворот“. (Рассказы охотника), Изд. Главного Политического Управления Министерства Обороны СССР (Библиотека журнала „Советский воин“), Москва, 1957, 48 стр., тираж ?, перев. А. Гюль-Назарянц.

Վ. ԱՆԱՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՍՊՎԵՏՄԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ

#### Ակրախիներեն

1. Անանի ափին. Հրատ. «Մոլոց», Կիև, 1952, 303 էջ, տպաքանակ 30000, հայերենից թրգմ. Ս. Կալուստյան:
2. Անանի ափին. Հրատ. «Մոլոց», Կիև, 1955, 378 էջ, տպաքանակ 15000, հայերենից թրգմ. Ս. Կալուստյան:
3. Լեռնային լճի գաղտնիքը (Սևանի ափին), Կիև, 1962, 520 էջ, տպաքանակ 50.000, հայերենից թրգմ. Ս. Կալուստյան:

#### Ղազախերեն

4. Մանկուրյունը լեռներում. Հրատ. Ղազախստանի Պետ.

Հրատի, Ալմա-Աթա, 1956, 144 էջ, տպաքանակ 10000, ոռուսերենից թրգմ. Մալիք Նյուրֆուժաև:

### ԲԵԼՈՐՈՒՍԻԵՐԵՆ

5. Սևանի ափին. Մինսկ, 1953, 355 էջ, տպաքանակ 10.000, ոռուսերենից թրգմ. Ա. Միխալչով:

### ՌԱՋԲԵԼԵՐԵՆ

6. Սևանի ափին. Հրատ. Ռուբեկստանի Պետհրատի, Տաշքենդ, 1956, 360 էջ, տպաքանակ 30.000, ոռուսերենից թրգմ. Բասով Ռահմանով:

### ՎԵՐԱԳԵՐԵՆ

7. Սևանի ափին. Մանկագատանեկան գրականության Հրատարակչություն, Թրիլիախ, 1957, 355 էջ, տպաքանակ 5000, հայերենից թրգմ. Ա. Դավթյան:

### ԱՂՐԵՀԱՆԵՐԵՆ

8. Սևանի ափին. Հրատ. Աղրեհանի Մանկհրատի, Բաքու, 1951, 455 էջ, տպաքանակ 10.000, թրգմ. Յուսիֆ Մամմազով:

9. Հովհաննեսի զերիները. Հրատ. Աղրեհանի Մանկհրատի, Բաքու, 1959, 525 էջ, տպաքանակ 15.000, թրգմ. Յուսիֆ Մամմազով:

### ԿԻՍՈՎԵՐԵՆ

10. Սևանի ափին. Կառնաս, 1952, 335 էջ, տպաքանակ 8000, ոռուսերենից թրգմ. Օ. Դարրիլայտի:

### ՄՈՂԱՎԵՐԵՆ

11. Սևանի ափին. Հրատ. «Շկոլա սովետիկե», Քիշինյավ, 1954, 390 էջ, տպաքանակ 10000, ոռուսերենից թրգմ. Հ. Միխալյան:

kunngörbō

12. Սեանի ափին. *Տալին*, 1953, 363 էջ, տպաքանակ  
10.000, սուսերենից թրգմ. Վ. Գրյունբերգ:

13. Հովազանցի գերիները. Տալիս, 1957, 495 էջ, տպաքանակ 30.000, ուստի թիվն այլ թրգմ. Ա. Գրոս և Հ. Դրեյփեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

14. Սեանի ավին. Արդա, 1962, 340 էջ, տպաքանակ  
30.000, ոռուսերինից թրգմ. Վ. Բուտանի:

Գ. ԱՆԱՀԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ

Qhuruq

1. Մանկուրյանը լինենեռում. Հրատ. «Շանոյա էրտուն», Շանհայ, 1955, 129 էջ, տպաքանակ 15.000, ոստիքբնից թրգմ. Յան Չժի-շաո:

2. Մանկուրյանը լինենեռում. Հրատ. «Շանոյա էրտուն», Շանոյա, 1958, 129 էջ, տպաքանակ 95.000, սուսերինից թրզմ. Ֆան Զգիր-Հան:

37. Մանկուրյանը լեռներում. Հրատ. «Շանոյա էրտուն», Եանհայ, 1959, 129 էջ, տպաքանակ ? , ոստիսերենից թրգմ. Յան Զեմիչան:

4. Սեանի ափին. Գեղարվեստական նոր գրականության հրատարակչություն, Եանհայ, 1957, 406 էջ, տպաքանակ՝ 304.000, ուստերենից թրզմ. Ֆան Զժիշչակ:

5. Սևանի ափին. Գեղարվեստական նոր գրականության հրատարակչություն, Շանհայ, 1958, 406 էջ, տպաքանակ ?,  
ուստեղից թրդմ. Յան Չժի-շաո:

6. Սևանի ափին. Գեղարվեստական նոր գրականության հրատարակություն, Եանհայ, 1959, 406 էջ, տպաքանակ ?,  
ուստի թիվից թրգմ. Ֆան Զժի-շաո:

## Գերմաներեն

7. Աևանի ափին. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռլին, 1956,  
430 էջ, տպաքանակ 10.000, սուսերենից թրդմ. Հերման  
Ասհմիս:

8. Աևանի ափին. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռլին, 1951,  
430 էջ, տպաքանակ 15.000, սուսերենից թրդմ. Հերման  
Ասհմիս:

9. Աևանի ափին. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռլին, 1951,  
430 էջ, տպաքանակ 15.000, սուսերենից թրդմ. Հերման  
Ասհմիս:

10. Աևանի ափին. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռլին, 1952,  
430 էջ, տպաքանակ 30.000, սուսերենից թրդմ. Հերման  
Ասհմիս:

11. Աևանի ափին. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռլին, 1959,  
415 էջ, տպաքանակ 10.000, սուսերենից թրդմ. Հերման  
Ասհմիս:

12. Հովազաձորի գերիները. Հրատ. «Նոյես լեբեն», Բեռ-  
լին, 1960, 559 էջ, սուսերենից թրդմ. Կատյա Բուլին:

## Անգլերեն

13. Աևանի ափին. Վարշավա, 1951, 363 էջ, տպաքանակ  
15.000, սուսերենից թրդմ. Էլիանորա Մենդելսոն:

14. Աևանի ափին. Վարշավա, 1953, 364 էջ տպաքանակ  
10.000, սուսերենից թրդմ. Էլիանորա Մենդելսոն:

15. Պատմվածքներ. Վարշավա, 1954, 183 էջ, տպաքա-  
նակ 15.000, սուսերենից թրդմ. Յողեֆ Բրունկի:

## Չեխերեն

16. Աևանի ափին. Հրատ. «Մլադա ֆրոնտա», Պրագա,  
1952, 274 էջ, տպաքանակ 10.000, սուսերենից թրդմ. Վերա  
Տատովովա:

17. Հովազաձորի գերիները. Հրատ. Չեխոսլովակիայի

Մանկաբարեհի, Պրադա, 1959, 602 էջ, տպաքանակ 31.000, Հայ-  
ցերենից թրգմ. դ-ր. Յարումիլը Եղիշեկա:

#### Բաւմիներեն

18. Հայաստանի լեռներում. Պատմվածքներ, Հրատ.  
«Կարտա ուսա», Բուխարեստ, 1954, 200 էջ, տպաքանակ  
10.000, ուստեղենից թրգմ. Լուչիան Բրունու և Շտեֆան Պավ-  
լով:

19. Աևանի ավին. Հրատ. «Եղիսուրա տիներետուլով»,  
Բուխարեստ, 1955, 347 էջ, տպաքանակ 16.000, ուստեղենից  
թրգմ. Իրինա Անդրեևկու և Գիմիտրի Մանու:

#### Բուլղարերեն

20. Աևանի ավին. Հրատ. «Նարոդա կուլտուրա», Սոֆիա,  
1951, 300 էջ, տպաքանակ 4000, ուստեղենից թրգմ. Նիկոլա  
Տուշին:

#### Անգլերեն

21. Լեռնային կածաններով. Ինոհզդատ, Մոսկվա, 1956,  
166 էջ, տպաքանակ 16.000, ուստեղենից թրգմ. Ռախա  
Բորբովա:

#### Հնդկերեն

22. Լեռնային կածաններով. Ինոհզդատ, Մոսկվա, 1960,  
209 էջ, տպաքանակ 2500, թրգմ. Նարայան Քհաննա:

#### Ճապոներեն

23. Լեռնային կածաններով. Հրատ. «Կողան-Սիա», Տո-  
կիո, 1957, 240 էջ, տպաքանակ 14.000, ուստեղենից թրգմ.  
և առաջարանը գրեց Մաղամի Իսոհտարո:

#### Թենգալերեն

24. Լեռնային կածաններով. Ինոհզդատ, Մոսկվա, 1960,  
192 էջ, տպաքանակ 4000, թրգմ. Շուպրիա Գհոշ:

Աւարեւեն

25. Ճերմակ առաջնորդը. (որսորդական պատմվածքների  
ժողովածու), թեյրութ, ֆրանսերենից և հայերենից թրգմ.  
Նիբոլա Թավիլ:




ԵԱԺԱԿ ՄԵՍՐՈՓԻ ԳՅՈՒՆԱԶՈՐՅԱՆ  
ԽԱԺԱԿ ՄԵԾՐՈՊՈՎԻՉ ՇՈԼՅԱԶԱՐՅԱՆ

ՎԱԼԵԹԱՆԴ ԱՆԱՆՅԱՆ

Գատ. խմբագիր՝ Ա. Ա. Մանուկյան  
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հովհաննես  
Նկարչական ձեռավորությը՝ Կ. Բ. Տիրատոռության  
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորսյան  
Սրբազրիչ՝ Լ. Ա. Մարտիրոսյան

ՎՃ 07109, Հրատ. № 2272, ԽՀԿ № 830, պատվեր 175, տիրաժ 1000  
Հանձնված է արտադրության 12/V 1963 թ., ստորագրված է տպադրության 31/V 1963 թ., Տպագրական 8.5 մամուլ+1 ներդիր, Հրատ.  
3.86 մամուլ, բուղթ 70×92<sup>1/2</sup>, Գինը 17 կ.



ԱՅՍ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՎԵՐՁԻՆ  
ՏԱՐԻՆԵՐԻՆ ԼՈՒՅՄ ԵՆ ՏԵՍԵԼ

- Ա. Մանուկյան, Վահան Թոմավենց:  
Ա. Շահիկյան, Զեսնդ Ալիշանի Հայ-  
րենական պոեզիան:  
Ա. Մանուկյան, Ամբար Շահա-  
զիդ:  
Հ. Պաղարյան, Աղատ Վշտունի:  
Ա. Աղաբարյան, Գուրգեն Մահմա-  
րի:  
Մ. Ֆետիխով, Ասվետական բազմ-  
ազգ գրականության ստեղծա-  
գործական կապերի ուսում-  
նասիրման պրոբլեմները:  
Կ. Գրիգորյան, Առաջիկով-Շշեղ-  
րին:  
Ա. Բեմանի աԱՀՀ Հիմնարար Գիտ. Գրադ.

Առաջիկով-Շշեղրին:



FL0040769

A

4970